



# Զիաց Մեր Հանապազորդ

ՅՈՒՆՈՒԱՐ | ՓԵՏՐՈՒԱՐ | ՄԱՐՏ 2024

(January | February | March 2024)

ԼԵ. ՏԱՐԻ  
Ա. ԵՌԱՄՍԵԱՅ

Անձնական եւ Ընտանեկան  
Ամենօրեայ Աստուածաշունչի Ընթերցումներ  
եւ Հոգեւոր Խորհրդածութիւններ

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք  
*Our Daily Bread* Ընկերակցութեան որուն  
թոյլատուութեամբ *Our Daily Bread* գրքոյկէն  
թարգմանուած են յաջորդ Էջերու  
խորհրդածութիւնները

---

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն  
Armenian Missionary Association of America  
31 West Century Road  
Paramus, New Jersey 07652  
U.S.A.



Տեսէ՛ք թէ Զայրը ինչպիսի՛ սէր շնորհեց մեզի: [Ա. Յովհ. 3. 1]

## ՆՈՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍՈՎ

«**Ես այն չեմ, ի՛նչ որ էի նախապէս. ես նո՛ր մարդ եմ**»: Որդիիս ա՛յդ պարզ խօսքերը, որոնք ըսուեցան աշակերտներուն՝ դպրոցական համաժողովի ընթացքին, կը նկարագրեն Աստուծոյ կատարած փոփոխութիւնը իր կեանքին մէջ: Ժամանակին թմրամոլ՝ ձէֆֆրին անցեալին ինքզինք տեսաւ իր մեղքերուն եւ սխալներուն մէջ: Բայց հիմա ան ինքզինք կը տեսնէ՝ որպէ՛ս Աստուծոյ զաւակ:

Աստուածաշունչը կը քաջալերէ մեզ հետեւեալ խոստումով. «Ուրեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է, ան նոր արարած մըն է. նախկին բաները անցան, եւ ահա՛ ամէն բան նոր եղաւ» (Բ. Կորնթ. 5. 17): Անկախ անկէ՛ թէ ո՞վ եղած ենք մենք կամ ինչ ըրած ենք անցեալին, երբ կը վստահինք Յիսուսի մեր փրկութեան համար եւ ներում կը ստանանք Իր խաչին միջոցով, կը դառնանք նո՛ր մարդ: Եղէ՛մի պարտէզէն ի վեր՝ մեր մեղքերուն յանցանքը՝ բաժնած է մեզ Աստուծմէ, բայց Ան այժմ «հաշտեցուց մեզ իրեն հետ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով ու տուաւ մեզի հաշտութեան սպասարկութիւնը (հմ. 18-19): Մենք Անոր սիրելի զաւակներն ենք (Ա. Յովհ. 3. 1-2), մաքրուած եւ նորոգուած Իր Որդիին նմանութեամբ:

Յիսուս կ'ազատէ մեզ մեր մեղքերէն եւ անոր գերիշխող զօրութենէն եւ կը վերականգնէ Աստուծոյ հետ նո՛ր յարաբերութիւնով, ուր մենք ազատ ենք ապրելու ո՛չ թէ մենք մեզի համար, այլ «Իրեն, որ մեռաւ մեզի համար եւ յարութիւն առաւ» (Բ. Կորնթ. 5. 15): Այս Նոր Տարուան Օրուան մէջ, եկէ՛ք յիշենք, որ Անոր փոխակերպող սէրը կը ստիպէ մեզ ապրելու նոր ինքնութիւնով եւ նպատակներով: Կ'օգնէ մեզի՝ ցոյց տալու Փրկիչը ուրիշներու, Ա՛ն որ կարող է զանոնք ալ նոյնպէս նոր մարդեր դարձնելու:

**Աղօթք** - Աբբա Զայ՛ր, շնորհակալ եմ Որդիդ ղրկելու՝ զիս փրկելու համար: Կը խնդրեմ, ղրկէ ինձի մէկը՝ որ նոյնպէս Զու կարիքդ ունի: Ամէն:

**Հնարաւոր է Աստուծոյ հետ նո՛ր սկիզբ մը ունենալ: Ուստի՛ կրնանք ապրիլ որպէս Անոր «ստեղծագործութիւնը»:**



Նաեւ արեւը կը ծագի, արեւը մայր կը մտնէ: [Ժող. 1. 5]

## ՈՐԴԻՆ ԱԼ ՆՈՅՆՊԵՆ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

Ըրնէսթ Հէմինկուէյի (Ernest Hemingway) առաջին ամբողջական վէպը կը ներկայացնէ՝ իր շատ խմող ընկերները, որոնք տեսած էին Առաջին Համաշխարհային պատերազմը: Անոնք կը կրէին պատերազմի սպիւնները, բառացի եւ փոխաբերական իմաստով, ու կը փորձէին յաղթահարել անոնց խնձոյքներով, մեծ արկածախնդրութիւններով եւ ուրիշ տեղեր քնանալով: Միշտ ալ ալքոհոլը կայ՝ ցաւը ամոքելու համար: Ո՛չ մէկը ուրախ էր:

Հէմինկուէյի գիրքին «Արեւը Նոյնպէս Կը Ծագի» խորագիրը՝ կու գայ Ժողովողի գիրքէն (1. 5) ուր Սողոմոն Թագաւոր ինքզինք կ'անուանէ «Ուսուցիչ» (Հմ. 1): Ան ամէն բան «ունայնութիւն» (Հմ. 2) կը կոչէ եւ կը հարցնէ. «Ի՞նչ օգուտ կ'ունենայ մարդ՝ Արեւին տակ կրած ամբողջ տաժանքէն» (Հմ. 3): Սողոմոն տեսաւ, թէ ինչպէ՛ս արեւը կը ծագի եւ մայր կը մտնէ, հովը կը փչէ, վտակները անվերջ կը հոսին դէպի երբէք չբաւարարուող ծովը (Հմ. 5-7): Ի վերջոյ, ամէն ինչ՝ մոռցուած է (Հմ. 11):

Թէ Հէմինկուէյ եւ թէ ալ Ժողովողը՝ մեր առջեւ կը պարզեն՝ միայն այս կեանքին համար ապրելու՝ խիստ անիմաստութիւնը: Սողոմոն սակայն, կը հիւսէ աստուածային յստակ ակնարկներ իր գիրքին մէջ: Կայ մշտականութիւնը եւ իրական յոյսը: Ժողովողը ցոյց կու տայ մեզի այնպիսին, ինչպէ՛ս մենք իրականութեան մէջ ենք, բայց նաեւ ցոյց կու տայ Աստուած՝ այնպէ՛ս ինչպէ՛ս որ է: «Ամէն ինչ որ Աստուած կ'ընէ, յաւիտեան պիտի գոյատեւէ (3. 14), եւ անոր մէջ մեր ունեցած մեծ յոյսը: Որովհետեւ Աստուած տուած է մեզի Իր Որդիին՝ Յիսուսի պարգեւը:

Աստուծոյ գաւառ, մենք անվերջանալի՝ երբէք չբաւարարուած ծովու մէջ ենք: Անոր յարութիւն առած Որդիին՝ Յիսուսի միջոցով, մենք հաշտուած ենք Անոր հետ եւ կը բացայայտենք մեր իմաստը, արժէքը եւ նպատակը:

**Աղօթք** - Յայր, օգնէ ինձի գտնելու իմ կատարումս՝ Ըու մէջը: Ամէն:  
**Ի՞նչ բան կը զբաղցնէ մեր ժամանակը եւ ի՞նչ նշանակութիւն ունի այդ բանը մեզի համար: Ինչպէ՞ս կարելի է փոխել մեր առաջնահերթութիւնները՝ Յիսուսի հետեւելու համար:**



Ո՛վ Տեր, քու կարեկցութիւնդ մեր վրայ ըլլայ,  
ինչպէս մենք քեզի կը յուսանք: [Սաղմ. 33. 22]

## ՅՈՅՍԻ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

**Ո**վկիանոսագէտ՝ Սիլվիա Էրրլ (Sylvia Earle) անմիջականօրէն տեսնելով բուսական ժայռագօտիին վատթարացումը, հիմնած է «Կապոյտ Առաքելութիւն» (Mission Blue) կազմակերպութիւնը՝ որ նուիրուած է համաշխարհային «յոյսի կէտեր»ու զարգացումին: Այս առանձնայատուկ վայրերը ամբողջ աշխարհի մէջ «ճգնաժամային նշանակութիւն ունին ովկիանոսի առողջութեան համար», որ կ'ազդէ՝ երկրի վրայ մեր կեանքին: Այս տարածքներուն կանխամտածուած խնամքի միջոցով, գիտնականներ տեսած են՝ ստորջրեայ էակներու հաւաքականութիւններու պահպանումի եւ անհետացող տեսակներու կեանքի յարաբերութիւնը:

Սաղմոս 33-ին մէջ՝ Սաղմոսերգուն կ'ընդունի, Աստուծոյ ըսածը գոյութեան համար եւ երաշխաւորած է, որ այն ամէնը ինչ որ ինք ստեղծեց, հաստատուն մնայ (Հմ. 6-9): Երբ Աստուած կը թագաւորէ սերունդներուն եւ ազգերուն վրայ (Հմ. 11-19). Ան միայնակ կը վերականգնէ յարաբերութիւնները, կը փրկէ կեանքեր եւ վերակենդանացնէ յոյսը: Սակայն, Ան կը հրաւիրէ մեզ որ միանանք Իրեն՝ հոգալու աշխարհին եւ Իր ստեղծած մարդոց:

Ամէն անգամ, երբ մենք կը փառաբանենք Աստուած՝ ամպամած, մոխրագոյն երկիրքի ձօղուած ծիածանի շշուկի կամ ժայռոտ ափին զարնուող ովկիանոսի ալիքներուն համար, մենք կրնանք հռչակել Անոր «անվրէպ սէրը» եւ ներկայութիւնը, երբ «մեր յոյսը կը դնենք» Անոր վրայ (Հմ. 22):

Երբ կը փորձուինք յուսալքութիւնով կամ վախով, երբ կը դիտարկենք աշխարհի ներկայ իրավիճակը, մենք կրնանք սկսիլ հաւատալ, որ չենք կրնար որեւէ փոփոխութիւն մտցնել: Սակայն՝ երբ կը կատարենք մեր մասը, կրնանք պատուել զԻնք որպէս Արարիչ եւ օգնել ուրիշներուն որ գտնեն յոյս:

**Աղօթք** - Սիրող Արարարիչ եւ Պահպանող, օգնէ՛ ինծի ըլլալ յոյս յայտնաբերող՝ որպէս Զու խնամքի խումբիդ մէջ ծառայող մը: Ամէն:

**Աստուած կ'օգտագործէ բնութիւնը՝ հաստատելու համար մեր յոյսը Իր վրայ: Հետեւաբար կարելի է որ մենք ծառայենք որպէս Իր խնամքի խումբին մէկ անդամը:**



Պատիւ համարեք հանդարտ կենալ, ձեր գործերով  
գրադիլ եւ ձեր ձեռքերով աշխատիլ: [Ա. Թես. 4. 11]

## ԼՈՒՌ ՀԱՒԱՏԱՐԱՄՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՆԴԵՊ

**Զ**ինք չնկատեցի սկիզբը: Վար իջած էի նախաճաշելու՝ իմ  
կեցած պանդոկս: Ճաշասրահին մէջ ամէն ինչ մաքուր էր:  
Սեղանը լեցուն էր ուտելիքներով: Սառնարանը՝ նոյնպէս: Դժալ  
պատարաքաղի ամանը՝ լեք լեցուն էր: Ամէն ինչ կատարեալ էր:

Յետոյ տեսայ զինք: Մարդ մը լեցուց այս, սրբեց այն: Ան  
ուշադրութիւն չգրաւեց իր վրայ: Սակայն որքա՛ն աւելի նստայ,  
այնքան աւելի զարմացայ: Մարդը շատ արագ կ'աշխատէր,  
ամէն բան նկատելով եւ ամէն ինչ լեցնելով, առաջ որ մէկը բանի  
մը պէտք ունենայ: Որպէս կերակուրի ծառայութեան վեթերան՝  
նկատեցի անոր դարցուցած մշտական ուշադրութիւնը՝  
մանրութներու նկատմամբ: Ամէն ինչ կատարեալ էր, քանի որ  
այս մարդը հաւատարմօրէն կ'աշխատէր, նոյնիսկ եթէ քիչեր  
զինք նկատէին:

Մանրակրկիտ դիտելով այս մարդուն աշխատանքը՝ ես  
յիշեցի Թեսաղոնիկեցիներուն ուղղուած Պօղոսի խօսքերը.  
«Պատիւ համարէք հանդարտ կենալ, ձեր գործերով զբաղիլ  
եւ ձեր ձեռքերով աշխատիլ ... որպէսզի դուրսիններուն հետ  
վարուիք վայելչութեամբ (Ա. Թես. 4. 11-12): Պօղոս հասկցաւ,  
թէ ինչպէս կրնայ հաւատարիմ աշխատողը՝ շահիլ ուրիշներու  
յարգանքը՝ առաջարկելով հանդարտ վկայութիւն այն մասին,  
թէ ինչպէս աւետարանը կրնայ արժանապատուութեամբ եւ  
նպատակասլաց ներարկել ուրիշներու ծառայութեան նոյնիսկ  
թուացեալ փոքր գործերը:

Ես չեմ գիտեր, թէ արդեօ՞ք այն մարդը, որու ես տեսայ  
այդ օր, կը հաւատա՛ր Յիսուսի: Բայց երախտապարտ եմ, որ  
անոր հանդարտ Զանասիրութիւնը՝ յիշեցուց ինծի ապաւինիլ  
Աստուծոյ, ապրելու հանգիստ հաւատարմութեամբ կեանք մը,  
որը կ'արտացոլացնէ Անոր հաւատարիմ ուղիները:

**Աղօթք** - Հայր, օգնէ ինծի յիշելու, որ Զու թագաւորութեանդ մէջ  
չկա՛ն փոքր գործեր եւ ամէն օր հաւատարմօրէն կը ծառայեմ  
Եզգի՝ Զու մօտիկ ըլլալուդ գագցումով: Ամէն:

**Մեր հաւատքը՝ պէտք է ազդէ մեր տարած աշխատանքին վրայ:**  
**Հաւատարիմ աշխատող ըլլալը՝ հօգոյ վկայութիւն մըն է:**



Կայնեցէ՛ք ճամբաներուն վրայ ու նայեցէ՛ք,  
...հարցուցէ՛ք՝ թէ ո՛րն է բարօրութեան ճամբան, եւ  
քալեցէ՛ք անոր մէջ: [Երեմ. 6. 16]

## ԱՍՏՈՒԱԾ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՆ

Հիւանդութեան օրերէ եւ բարձր ջերմութենէ ետք՝ պարզ էր, որ  
ամուսինս շտապ օգնութեան կարիքը ունէր: Հիւանդանոցը  
անմիջապէս ընդունեց զինք: Մէկ օրը անցաւ միւսին ու անոր  
վիճակը բարելաւուեցաւ, սակայն ո՛չ այնքան, որ ան կարենայ  
տուն վերադառնալ: Ես կանգնեցայ դժուար ընտրութեան մը  
առջեւ. մնա՞լ ամուսինիս մօտ՝ թէ՛ կատարել կարեւոր գործի  
ուղեւորութիւն, ուր պիտի ըլլային բազմաթիւ մարդիկ եւ  
կարեւոր ծրագիրներ: Ամուսինս ինծի վստահեցուց, որ ամէն ինչ  
լաւ կ'ըլլայ: Բայց սիրտս բաժնուած էր՝ իր եւ աշխատանքիս միջեւ:

Աստուծոյ ժողովուրդը՝ Իր օգնութեան կարիքը ունէր՝  
կեցած կեանքի որոշումներու խաչմերուկին: Շատ յաճախ անոնք  
հաւատարիմ չէին ըլլար Անոր բացայայտած ցուցմունքներուն:  
Ուստի՝ Մովսէս աղբրսեց ժողովուրդին «ընտրել կեանքը»՝  
հետեւելով Աստուծոյ տուած պատուիրաններուն (Բ. Օր. 30.  
19): Աւելի ուշ՝ Երեմիա մարգարէն առաջնորդութեան խօսքեր  
ուղղեց Աստուծոյ կամակոր ժողովուրդին՝ ցանկանալով  
որ անոնք հետեւին Աստուծոյ ճամբաներուն. «Կայնեցէ՛ք  
ճամբաներուն վրայ ու նայեցէ՛ք, ... հարցուցէ՛ք՝ թէ՛ որն է  
բարօրութեան ճամբան, եւ քալեցէ՛ք անոր մէջ» (Եր. 6. 16):  
Սուրբ Գիրքին հնագոյն ուղիները եւ Աստուծոյ անցեալի  
տրամադրուածութիւնը կրնան ուղղել մեզ:

Ես ինքզինքս պատկերացուցի ֆիզիքական խաչմերուկին  
կեցած եւ կիրառեցի Երեմիայի իմաստութեան կաղապարը:  
Ամուսինս պէտք ունէր ինծի. ինչպէս նաեւ գործը: Ճիշդ այդ  
պահուն վերակացուս զանգեց եւ խրախուսեց զիս մնալ տուն:  
Շունչ մը քաշեցի եւ շնորհակալութիւն յայտնեցի Աստուծոյ  
խաչմերուկին՝ Իր տուած նախատեսութեան համար: Աստուծոյ  
ուղղութիւնը միշտ ալ այդքան յստակ չի գար. սակայն՝ կու գայ:  
Երբ կենանք խաչմերուկին, եկէ՛ք անպայման փնտռենք զինք:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, երբ անորոշութեան մէջ եմ, օգնե՛ ինծի  
կենալ խաչմերուկին եւ փնտռե՛լ Զու նախատեսութիւնդ: Ամէն:

**Ո՛ր պէտք ունիս ուղղութիւն ստանալու:** Վստա՛հ եղի՛ր որ  
Աստուած Իր կամքը պիտի բացայայտէ քեզի:



Բանալով իրենց գանձերը՝ մատուցանեցին անոր  
ընծաներ.- ոսկի, կնդրուկ եւ զմուռս: [Մատթ. 2. 11]

## ԶՄՈՒՄԻՆ ԻՄԱՍՏԸ

**Ա**յսօր Հայկական Ծնունդն է ինչպէս նաեւ Աստուածա-  
յայտնութիւն (Epiphany): Այս օրը կը յատկանշուի այն  
իրադարձութիւնով՝ որ նկարագրուած է «Մենք Արեւելքի Երեք  
Արքաներ» երգով, երբ Հեթանոս իմաստունները այցելեցին  
մանուկ Յիսուսին: Սակայն՝ անոնք արքաներ չէին ոչ ալ  
Հեռաւոր Արեւելքէն (Far East) [ինչպէս անցեալին նկատի  
կ'առնուէր Արեւելքը] եւ դժուար էր որ անոնք երեք ըլլային:

Կային, սակայն, երեք նուէրներ եւ երգը կը նշէ  
իւրաքանչիւրը: Երբ մոգերը հասան Բեթլեհէմ, «բանալով իրենց  
գանձերը՝ մատուցանեցին անոր ընծաներ.- ոսկի, կնդրուկ եւ  
զմուռս» (Մատթ. 2. 11): Նուէրները կը խորհրդանշեն՝ Յիսուսի  
առաքելութիւնը: Ոսկին կը ներկայացնէ Անոր դերը՝ որպէս  
Թագաւոր: Կնդրուկը, խառնուած սրբավայրին մէջ այրուած  
խունկին հետ, կը խօսի Անոր Աստուածութեան մասին: Զմուռսը  
(միւռօնը), որ կ'օգտագործուէր դիակներ զմռսելու համար,  
մեզի դադար կու տայ:

Երգին չորրորդ համարը կ'ըսէ. «Զմուռսը իմս է, անոր  
դառն օծանելիքը, կը շնչէ մռայլութիւն հաւաքող կեանք մը,  
կը տխրի, կը հառաչէ, արիւն կը հոսեցնէ ու կը մեռնի, կնքուած  
քառէ պաղ գերեզմանին մէջ»: Մենք նման տեսարան չենք  
գրեւր պատմութեան մէջ, բայց Աստուած գրեց: Յիսուսի մահը  
կեդրոնական է՝ մեր փրկութեան համար: Հերովդէս նոյնիսկ  
փորձեց սպաննել Յիսուսի, երբ Ան տակաւին մանուկ էր (Հմ. 13):

Երգին վերջին հատուածը կը միացնէ երեք նիւթերը  
իրարու. «Հիմա փառաւոր ահա ան կը բարձրանայ, Թագաւոր  
եւ Աստուած եւ մատաղ: Այս կ'ամբողջացնէ Սուրբ Ծննդեան  
պատմութիւնը՝ ոգեշնչելով մեր պատասխանը. «Ալելուիա,  
Ալելուիա, երկինքն ու երկիրը կը պատասխանէ»:

**Աղօթք** - Յայր, թող Յոգիդ օգնէ ինծի ապրելու կեանքս երախտագի-  
տութեամբ Բու Որդիիդ համար, որ Իր կեանքը տուաւ ինծի համար: Ամէն:

**Ի՛նչ կը զգաս՝ երբ կը խորհիս այն ճշմարտութեան մասին, որ  
Յիսուս ծնաւ՝ քեզի համար մեռնելու: Ինչպէ՞ս Անոր յարութիւնը  
կը ոգեշնչէ քեզ:**

Ո՛վ զօրքերու Աստուած, վերադարձո՛ւր մեզ.

... ու պիտի փրկուինք: [Սաղմ. 80. 7]

## ՊԱՏՐԱՍ ԱՍՏՈՒԾՈՅ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՀԱՄԱՐ

**Ը**նկերոջ մը բջիջային հեռախօսի կարճ պատգամի հոսանքով եկած նկարները ապշեցուցիչ էին: Իր կնոջ համար անակնկալ նուէրի պատկերները բացայայտեցին 1965 թուականի՝ վերականգնուած Փօրտ Մասթանկ (Ford Mustang) մը. փայլուն, մուժ կապոյտ արտաքին գոյնը, շողշողացող քրոմ եզրերը, վերազարդուած սեւ ներքինը եւ շարժակը՝ միւս արդիականացումներուն համապատասխանելու համար: Կային նաեւ «նախկին» նկարները՝ աղօտ, մաշուած եւ ո՛չ տպաւորիչ դեղին գոյնով տարբերակին: Թէեւ դժուար է պատկերացնել, բայց հաւանական է, որ երբ ինքնաշարժը դուրս եկաւ կազմութեան գիծէն, այն ատեն ալ եղած է գրաւիչ: Սակայն ժամանակը, մաշուածութիւնը եւ այլ գործօններ զանիկա հասցուցած են վերականգնումի համար:

Հասուն է կամ պատրաստ է վերականգնման համար: Այսպէս էր Աստուծոյ ժողովուրդին վիճակը՝ 80-րդ Սաղմոսին մէջ եւ հետեւաբար՝ կրկնուած աղօթքին մէջ. «Ո՛վ զօրքերու Աստուած, վերադարձո՛ւր մեզ. պայծառացուր քու երեսդ ու պիտի փրկուինք (Հմ. 3, տեւ 7, 19): Թէեւ անոնց պատմութիւնը կը ներառէր փրկութիւն եգիպտոսէն եւ ցանուիլ առատութեան երկրի մը մէջ (Հմ. 8-11), լաւ ժամանակները եկած եւ անցած էին: Ապստամբութեան պատճառով՝ անոնք կը զգային Աստուծոյ դատաստանի ձեռքը (Հմ. 12-13): Այսպէս՝ անոնց խնդրանքը. «Ո՛վ զօրքերու Աստուած, կ'աղերսեմ, վերադարձի՛ր. նայէ՛ երկինքէն ու տե՛ս» (Հմ. 14):

Աստուած կը լսէ մեր աղօթքները՝ վերականգնումի համար (Հմ. 1): Ի՞նչ բան կը խանգարէ քեզ հարցնելու:

**Աղօթք** - Հայր, կը փափաքիմ Զու վերականգնեցմանդ: Օգնե՛ ինձի տեսնելու որ անոր կարիքը ունիմ եւ ստանամ զանիկա: Ամէն  
**Ե՛րբ գգացած ես Աստուծոյ վերականգնող, վերակենդանացող աշխատանքը: Զու կեանքիդ ո՛ր մասերուն մէջ այժմ վերականգնումի կարիքը կայ:**





Երբ տակաւին մեղաւոր էինք՝ Զրիստոս մեռաւ  
մեզի համար: [Հոռոմ. 5. 8]

## ԿԱՄԱՒՈՐ ՓՐԿԻՉ

**Ո**ւշ գիշեր ատեն ինքնաշարժ վարած ատեն՝ Նիքքըլըս (Nicholas) տեսաւ տուն մը կրակներու մէջ: Կանգնեցուց ինքնաշարժը կարողիին, վազեց դէպի վարող տունը եւ չորս երեխաներ դուրս հանեց՝ ապահով: Երբ դերահաս երեխաներու հոգատարը անդրադարձաւ, որ երեխաներէն մէկը տակաւին ներսն է, իմացուց Նիքքըլըսին: Առանց վարանելու՝ ան դարձեալ մտաւ ներս: Վեց տարեկան աղջկան հետ երկրորդ յարկը փակուած ըլլալով, Նիքքըլըս կոտրեց պատուհանը: Յատկեց ապահով տեղ մը երեխան իր գիրկը, ճիշդ այն պահուն, երբ պատահած դէպքին վայրը հասան շտապ օգնութեան խումբեր: Ընտրելով ուրիշներու հանդէպ մտահոգուիլը՝ ան փրկեց բոլոր երեխաները:

Նիքքըլըս հերոսութիւն դրսեւորեց՝ յանուն ուրիշներու իր ապահովութիւնը զոհաբերելու պատրաստակամութեամբ: Սիրոյ այս հզօր արարքին արտացոլումն է՝ այն զոհաբերական սէրը, որը կը դրսեւորուի մէկ այլ պատարաստակամ փրկիչէ՝ Յիսուսի կողմէ, Ան որ տուած է իր կեանքը՝ մեզ մեղքերէն ու մահէն ազատելու համար: Արդարեւ մինչ մենք տակաւին տկար էինք, յարմար ժամանակին՝ Քրիստոս մեռաւ ամբարիշտներուն համար» (Հռովմ. 5. 6): Պօղոս առաքեալ ընդգծեց, Յիսուս՝ որ լիովին Աստուած էր՝ եւ մարմինով լիովին մարդ էր, ընտրեց իր կեանքը տալ եւ վճարել մեր մեղքերուն գինը, գին մը՝ որ մենք երբէք չենք կրնար ինքնուրոյն վճարել: «Աստուած մեզի հանդէպ ունեցած իր սէրը ապացուցանեց այն իրողութեամբ, որ երբ տակաւին մեղաւոր էինք՝ Քրիստոս մեռաւ մեզի համար» (Հմ. 8):

Երբ մենք շնորհակալութիւն կը յայտնենք եւ կը վստահինք Յիսուսի՝ մեր պատարաստակամ Փրկիչին, Ան կրնայ մեզ զօրացնել՝ սիրելու ուրիշները, զոհաբերութեամբ մեր խօսքերով եւ արարքներով:

**Աղօթք** - Սիրելի Յիսո՛ւս, օգնէ ինձի վստահելու Զու նախատեսու-  
թեան, երբ ես այսօր առաջին տեղը կը դնեմ ուրիշները: Ամէն:

**Ինչպէ՛ս կը գգաս՝ երբ հաշուի առնես այն գինը, որ Յիսուս  
պատարաստակամօրէն վճարեց, քանի որ Ա՛ն կը սիրէ քեզ:  
Ինչպէ՛ս կրնաս ուրիշներ քեզմէ առաջ դնել այս շաբաթ:**



Զեզ յաւիտենական սիրով սիրեցի: [Եր. 31. 3]

## ԱՆՍԱՐՄԱՆ ՍԷՐ

«Հնչալէ՞ս կը սիրեմ քեզ. թոյլ տուր որ թուեմ ձեւերը»: Այս բառերը էլիզապէթ Պարրէթ Պրաունինկի՝ (Elizabeth Barrett Browning) Փորթուկալական Հնչեակներ՝ Անգլերէն լեզուի լաւ ծանօթ բանաստեղծութիւններէն են: Ան գրեց Ռապրըթ Պրաունինկին (Robert Browning) նախ քան իրենց ամուսնութիւնը. Ռապրըթ այնքան յուզուեցաւ, որ քաջալերեց զինք հրատարակելու իր բանաստեղծութիւններուն ամբողջ ժողովածուն: Բայց քանի որ Հնչեակներուն լեզուն շատ քնքուշ էր, անձնական գաղտնիութեան ցանկութենէն դուրս ելլելով, Պարրէթ զանոնք հրատարակեց այնպէ՛ս, կածե՛ս թէ՛ անոնք Փորթուկալցի գրողի թարգմանութիւններն էին:

Երբեմն մենք կրնանք ապիկար զգալ, երբ բացայայտօրէն զգացական սէր արտայայտենք ուրիշներու: Սակայն Աստուածաշունչը ընդհակառակը, չի՛ զսպեր իր զգացումները Աստուծոյ հանդէպ՝ իր սէրը ցոյց տալու ատեն: Երեմիա պատմեց իր ժողովուրդին հանդէպ Աստուծոյ ունեցած սիրոյն մասին հետեւեալ քնքուշ խօսքերը արտասանելով. «Քեզ յաւիտենական սիրով սիրեցի. հետեւաբար քեզ կարեկցութեամբ ինծի քաշեցի» (Եր. 31. 3): Թէեւ իր ժողովուրդը՝ Իրմէ հեռացած էր, Աստուած խոստացաւ վերականգնել զանոնք եւ անձամբ զիրենք Իրեն մօտեցնել: Ան ըսաւ անոնց. «Կ'երթամ Իսրայէլը խաղաղեցնելու» (Հմ. 2):

Տէր Յիսուս Աստուծոյ վերականգնող սիրոյ վերջնական արտայայտութիւնն է, որ խաղաղութիւն եւ հանգստութիւն կը պարգեւէ իւրաքանչիւրին, որոնք կը դիմեն Իրեն: Մտուէն մինչեւ խաչ նաեւ մինչեւ պարապ գերեզմանը, Ան՝ Աստուծոյ ցանկութեան անձնաւորումն է՝ Իր մօտ կանչելու մոլորած աշխարհը: Կարգացէ՛ք Աստուածաշունչը ծայռէ ի ծայռ եւ դուք «պիտի հաշուէք» Աստուծոյ սիրոյն ձեւերը՝ կրկին ու կրկին. բայց որքա՛ն որ անոնք յաւիտենական են, դուք երբէ՛ք չէք հասնիր անոնց վախճանին:

**Աղօթք** - Շնորհակալ եմ Յիսուս, որ կը սիրես զիս՝ այնքա՛ն լիովին ու անձամբ: Օգնէ՛ ինծի որ սիրեմ Զեզ իմ ամբողջ կեանքովս: Ամեն: **Ի՞նչ են այն ձեւերը, որով Աստուած սիրած է քեզ: Ինչպէ՛ս կրնաս այսօր վերադարձնել Իր սէրը:**



Նստայ, լացի, ու քանի մը օր սգացի: Ապա ծով  
պահելով երկինքի Աստուծոյն աղօթեցի: [ՆԵՄ. 1. 4]

## ԱՂՕԹՔԻ ԿՈՉ ՄԸ

Աբրահամ Լինքըն (*Abraham Lincoln*) վստահեցուց ընկերոջ մը. «Ինծի շատ անգամ ծուռնկի բերած է՝ այն ճնշող համոզումը, որ ես այլ տեղ չունիմ երթալու»: Ամերիկայի Քաղաքացիական Պատերազմի սարսափելի տարիներուն՝ Նախագահ Լինքըն ո՛չ միայն ժամանակ անցուց ջերմեռանդ աղօթքի մէջ, այլ կոչ ըրաւ ժողովուրդին՝ միանալու իրեն: 1861 թուականին՝ յայտարարեց «Նուաստացման, աղօթքի եւ ծոմապահութեան օր»: Եւ 1863 թուականին՝ յայտարարեց. «Ազգերու, ինչպէս նաեւ մարդոց պարտականութիւնն է, ունենալ՝ Աստուծոյ գերիշխան զօրութենէն կախալ ըլլալու գիտակցութիւնը, խոստովանիլ իրենց մեղքերն ու օրինազանցութիւնները՝ խոնարհ վիշտով, սակայն երաշխաւորուած յոյսով, որ իսկական ապաշխարութիւնը կը հանգեցնէ ողորմութեան եւ ներումի»:

Երբ Իսրայէլացիները եօթնասուն տարի գերի էին Բաբելոնի մէջ, Կիւրոս թագաւորը հրաման արձակեց, որ ոեւէ Իսրայէլացի՝ եթէ կը ցանկայ՝ կրնայ վերադառնալ Նրոսաղէմ: Երբ Նէեմիա, Իսրայէլացին (Նէ. 1. 6) եւ Բաբելոնի թագաւորին մատուցակը (Հմ. 11), իմացաւ որ վերադարձած ժողովուրդը «մեծ ձախորդութեան եւ նախատինքի մէջ էին» (Հմ. 3), «նստեցաւ ու լացաւ» եւ օրեր անցուց սգալով, ծոմ պահելով եւ աղօթելով» (Հմ. 4): Ան աղօթեց իր ազգին համար (Հմ. 5-11): Եւ աւելի ուշ, ան նոյնպէս կոչ ըրաւ իր ժողովուրդին՝ ծոմ պահելու եւ աղօթելու (9. 1-37):

Դարեր ետք, Հռոմէական կայսրութեան օրերուն, Պօղոս առաքեալ՝ նոյնպէս յորդորեց իր ընթերցողներուն, որ աղօթեն իշխանութեան վրայ եղողներուն համար (Ա. Տիմ. 2. 1-2): Մեր Աստուածը տակաւին կը լսէ՝ մեր աղօթքները՝ այն հարցերուն մասին, որոնք կ'ազդեն ուրիշներու կեանքին վրայ:

**Աղօթք** - Սիրելի Զայ՛ր, մենք դժուարութեան մէջ ենք: Կը խնդրենք՝ օգնէ՛ եւ բուժէ՛ մեզ: Ամէն:

**Ինչո՞ւ Աստուած կը կանչէ Իր ժողովուրդին՝ աղօթելու բոլորին համար: Ձեր շրջապատէն դուրս՝ որո՞ւ համար կրնաք աղօթել:**



Եթե ես ուզեմ, որ ան մնայ՝ մինչեւ որ գամ, քու ի՞նչ հոգո՞ւ է. դուն հետեւե՛լ ինծի: [Յովհ. 21. 22]

## ՊԱՐԶ ԽՆԴՐԱՆՔ ՄԸ

«Կը խնդրեմ, մաքրե՛ առջեւի սենեակը՝ անկողին երթալէ առաջ», ըսի աղջիկներէս մէկուն: Անմիջապէս պատասխանը եկաւ. «Ինչո՞ւ համար ինք պէտք է ընէ»:

Նման մեղմ դիմադրութիւնները յաճախակի էին մեր տան մէջ, երբ մեր աղջիկները փոքր էին: Իմ պատասխանս ալ՝ մի՛շտ նոյնն էր. «Մի՛ անհանգստանար քրոջդ համար. ես քե՛զի հարցուցի»:

Յովհ. 21-ին մէջ կը տեսնենք այս մարդկային յակումը, ցոյց տրուած աշակերտներուն մէջ: Յիսուս տակաւին նոր վերականգնած էր Պետրոսին, երեք անգամներ զինք ուրանալէն ետք (տե՛ս Յովհ. 18. 15-18, 25-27): Յիսուս ըսաւ Պետրոսի. «Հետեւե՛ ինծի» (21. 19) - պարզ, բայց ցաւալի պատուիրանք մը: Յիսուս բացատրեց, որ Պետրոս կրնայ հետեւիլ Իրեն մինչեւ մահ (հմ. 18-19):

Պետրոս հազիւ կրցաւ հասկնալ Յիսուսի խօսքերը, առաջ որ հարցնէ իրենց ետեւ եղող աշակերտին մասին. «Հապա ասիկա ի՞նչ պիտի ընէ» (հմ. 21): Յիսուս պատասխանեց. «Եթէ ես ուզեմ, որ ան մնայ մինչեւ որ գամ, քու ի՞նչ հոգո՞ւ է»: Ապա ըսաւ. «Դուն հետեւե՛ ինծի» (հմ. 22):

Որքա՞ն յաճախ մենք կը նմանինք Պետրոսի: Կը զարմանանք ուրիշներու հաւատքի ճամբորդութիւններուն մասին եւ ո՛չ թէ Աստուած ինչ կ'ընէ մեզի հետ: Իր կեանքի վերջաւորութեան երբ Յովհաննու 21-ին մէջ կանխագուշակուած Յիսուսի մահը շատ աւելի մօտ էր, Պետրոս մանրամասնեց Քրիստոսի տուած պարզ պատուիրանը. «Հնազանդ զաւակներու պէս՝ մի՛ համակերպիք ձեր անդիտութեան ատենուան նախկին ցանկութիւններուն: Հապա, ինչպէս ձեզ կանչողը սուրբ է, դո՛ւք ալ սո՛ւրբ եղէք ձեր ամբողջ վարքին մէջ» (Ա. Պետ. 1. 14-15): Այդ բաւական է, որպէսզի մեզմէ իւրաքանչիւրը կեդրոնանայ Յիսուսի վրայ, եւ ո՛չ թէ մեր շրջապատին վրայ:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, կը խնդրեմ՝ շարունակե համաձեւել զիս՝ Ըո՛ւ Որդիիդ կերպարին: Ամէն:

**Կը փորձուինք համեմատել մեր հաւատքով քալելը՝ ուրիշներու քալուածքին հետ: Սակայն կեդրոնանալու ենք Տէր Յիսուսի վրայ:**



Տերը ասոր (Յովսէփին) հետ էր. ինչ որ ընէր՝

Տերը կը յաջողցնէր: [Ծն. 39. 23]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԱԻՈՐԸ

**Մ**երձաւոր Արեւելքի գաղթականայանի մը մէջ, երբ Ռէզա (Reza) ստացաւ Աստուածաշունչ մը, ծանօթացաւ եւ հաւատաց Յիսուսի: Անոր առաջին աղօթքը՝ Քրիստոսի անունով, այս էր. «Գործածէ զի՛ս որպէս Քու գործաւորը»: Աւելի ուշ, երբ ձգեց գաղթականայանը, Աստուած պատասխանեց այդ աղօթքին, երբ անսպասելիօրէն գործ մը ապահովեց՝ օգնութեան գործակալութեան մէջ, ապա վերադառնալով գաղթական ծառայեց այն մարդոց, որոնց կը ճանչնար եւ կը սիրէր: Ան ստեղծեց մարզական ակումբներ, լեզուի դասընթացքներ եւ իրաւաբանական խորհրդատուութիւն՝ ~ «որեւէ բան, որ կրնայ մարդոց յոյս տալ» անունով: Ան այս ծրագիրները կը տեսնէ՝ որպէս ուրիշներուն ծառայելու եւ Աստուծոյ իմաստութիւնն ու սէրը բաժնեկցելու միջոց:

Իր Աստուածաշունչը կարդալու ատեն, Ռէզա՝ անմիջապէս զգաց կապ մը, Ծննդոցի մէջ արձանագրուած Յովսէփի պատմութեան հետ: Ան նկատեց, թէ ինչպէ՛ս Աստուած գործածեց Յովսէփի՝ Իր աշխատանքը շարունակելու համար, երբ ան բանտն էր: Քանի որ Աստուած Յովսէփին հետ էր, բարութիւն դրսեւորեց եւ շնորհեց անոր: Բանտի հակիչը՝ Յովսէփին բանտին պատասխանատու նշանակեց՝ եւ ալ ստիպուած էր ուշադրութիւն դարձնելու այնտեղ եղած գործերուն, որովհետեւ Աստուած Յովսէփին հետ էր եւ «ինչ որ ընէր՝ Տէրը կը յաջողցնէր» (Ծն. 39. 23):

Աստուած կը խոստանայ նաեւ մեզի հետ ըլլալ: Անկախ անկէ, թէ մեզ բանտարկութիւն կը սպառնայ, բառացի թէ փոխաբերական իմաստով, դժուարութիւններ, տեղահանումներ, սրտի ցաւ կամ վիշտ, մենք կրնանք վստահ ըլլալ, որ Ան երբէ՛ք չի լքեր մեզ: Ինչպէս Ան հնարաւորութիւն տուաւ Ռէզայի՝ ծառայելու գաղթականայանը գտնուողներուն, իսկ Յովսէփին՝ ղեկավարելու բանտը, Ան միշտ մօտ կը մնայ մեզի հետ:

**Աղօթք** - Փրկող Աստուած, Դո՛ւն երբե՛ք չես ձգեր զիս, նոյնիսկ երբ ես կը դիմագրաւեմ ամենադժուար պարագաները: Կը խնդրե՛մ, տո՛ւր ինձի յոյս եւ աչքեր՝ տեսնելու Քու գործդ իմ կեանքիս մէջ: Ամէն:  
**Ե՛րբ զգացած ես Աստուծոյ քաւիչ գործողութիւնը: Թող Յովսէփի պատմութիւնը օգնէ մեզի՝ անելի շատ վստահելու Աստուծոյ:**



Մտածեցէ՛ք անոր մասին, որ տոկաց մեղաւորներուն  
իրեն դէմ ա՛յնպէս հակաճառելուն, որպէսզի ձեր անձերը  
չթուլնան ու չպարտասին: [Եբ. 12. 3]

## ՅԱՐԱՏԵՒԵԼ ՅԻՍՈՒՍՈՎ

**Ե**րբ տարիներ առաջ ես աստուածաբանական դպրոցի  
ուսանող էի, ունէինք շաբաթական պաշտամունքի պահ:  
Պաշտամունքներէն մէկուն, երբ կ'երգէինք «Մեծ է Մեր Տէրն»  
երգը, նկատեցի մեր շատ սիրելի դասախօսներէն երեքը,  
որոնք հաւատքով եւ եռանդով կ'երգէին: Տարիներ ետք, երբ  
իւրաքանչիւրը անցաւ մահացու հիւանդութեան ընդմէջէն, այդ  
հաւատքն էր, որ անոնց հնարաւորութիւնը տուաւ դիմանալու եւ  
քաջալերելու ուրիշներու: Այսօր անոնց յիշատակը՝ կը շարունակէ  
քաջալերել զիս, որ շարունակեմ տոկալ իմ փորձութիւններուն  
մէջ: Ինծի համար անոնք հաւատքով ապրած մարդոց բազմաթիւ  
ոգեշնչող պատմութիւններէն մի քանին են: Անոնք կը  
յիշեցնեն, թէ ինչպէ՛ս մենք կրնանք հետեւիլ Եբրայեցիս 12.  
2-3-ին մէջ արձանագրուած հեղինակին կոչին, մեր հայեացքը  
ուղղելու Յիսուսի, Ան որ «իրեն առաջարկուած ուրախութեան  
համար՝ ան տոկաց խաչին, արհամարհեց ամօթը» (Հմ. 2):

Երբ փորձութիւնները՝ հալածանքներու կամ կեանքի  
դժուարութիւններու պատճառով, կը դժուարացնեն շարունակելը,  
մենք ունինք անոնց օրինակը, որոնք ընդունեցին Աստուծոյ  
խօսքը եւ վստահեցան Անոր խոստումներուն: Մենք կրնանք  
«համբերութեամբ վազել մեզի առաջարկուած մրցարշաւը» (Հմ.  
1) յիշելով, որ Յիսուս եւ անոնք, որոնք մեզմէ առաջ դացած են,  
կարողացան դիմանալ: Հեղինակը կը հաղորդէ մեզի «մտածենք  
անոր մասին, որ տոկաց մեղաւորներուն իրեն դէմ ա՛յսպէս հակա-  
ճառելուն, որպէսզի մեր անձերը չթուլնան ու չպարտասին» (Հմ. 3):

Իմ ուսուցիչներս, որոնք այժմ երջանիկ են երկիրքը,  
հաւանաբար ըսեն. «Հաւատքի կեանքը կ'արժէ: Շարունակէ»:

**Աղօթք** - Սիրելի Յիսու՛ս, օգնէ ինծի որ շարունակեմ հայեացքս  
ուղղել Զեզի: Երբ ես յոգնած եմ եւ կը կորսնցնեմ սիրտս,  
շնորհակալութիւն կը յայտնեմ Զեզի՝ Զու օրինակիդ եւ անոնց,  
որոնք ինձմէ առաջ անցած են: Ամէն:

**Ո՛վ ոգեշնչած է քեզ շարունակելու քու հաւատքի ճանապարհդ:**  
**Ինչպէ՛ս անոնց օրինակը կը քաջալերէ քեզ՝ դիմանալ**  
**փորձութիւններու եւ դժուարութիւններու ժամանակ:**



Ի՛րապես անիկա մեր կսկիծները կրեց, եւ մեր  
կոտտանքները ստանձնեց: [Ես. 53. 4]

## ԿԼԱՆԵԼՈՎ ՉԱՐԻՔԸ

2011 թուականի՝ Ֆուկուշիմա Տէյյչիի (Fukushima Daiichi) միջուկային աղէտը, որ պատահեցաւ երկրաշարժի հետեւանքով, հսկայական քանակութեամբ թունաւոր նիւթեր արձակեց եւ ստիպեց աւելի քան 150,000 բնակիչներու տարահանումին: Տեղացիներէն մէկը ըսաւ. «Կարծես անտեսանելի ձիւն տեղաց Ֆուկուշիմայի վրայ եւ շարունակեց տեղալ՝ ծածկելով տարածաշրջանը»: Բարձր ճառագայթումը յայտնուեցաւ մշակուած բոյսերու, միսի եւ աղէտի վայրէն քիլոմետրներով հեռաւորութեան վրայ գտնուող վայրեր: Թոյներուն դէմ պայքարելու համար, տեղացիները սկսան տնկել արեւածաղիկ, բուսատեսակ մը՝ որ յայտնի է ճառագայթ կլանելով: Անոնք տնկեցին աւելի քան երկու հարիւր հազար սերմեր. այժմ միլիոնաւոր արեւածաղիկներ կը ծաղկին Ֆուկուշիմայի մէջ:

Արեւածաղիկը՝ որ կը գործէ Աստուծոյ նախագիծով, կերպով մը՝ որոշ փոքր չափով կը կատարէ Յիսուսի տիեզերական արարքը, որու նպատակն է բուժել բոլոր աշխարհը: Քրիստոս «մեր կսկիծները կրեց» իր մարմինին մէջ եւ «մեր կոտտանքները ստանձնեց» (Ես. 53. 4): Ան իր էութեան մէջ՝ ներծծեց մեր աշխարհի բոլոր չարութիւնը, բռնութիւնը եւ թունաւոր նիւթերը, բոլոր ուղիները, որոնց միջոցով մենք՝ մարդերս կը ոչնչացնենք մենք զմեզ: Ան կլանեց մեր բոլոր սխալները: Խաչին վրայ՝ Յիսուս «վիրաւորուեցաւ» ո՛չ թէ իր սխալ արարքին, այլ «մեր անօրէնութիւններուն» համար (Հմ. 5): Եւ քանի որ Ան մեռաւ մեր մեղքերուն համար, մենք կրնանք բուժուիլ եւ կեանք ունենալ: «Իր վէրքերով մենք բուժուեցանք» (Հմ. 5):

Քրիստոս մեզ միայն հեռուէն չի ներեր, Ան իր վրայ կը վերցնէ մեր բոլոր թունաւոր չարիքը: Յիսուս կը կլանէ այդ ամէնը: Եւ յետոյ Ան հոգեպէս կը բուժէ մեզ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, Դուն պաշտպանած ես զի՛ս եւ ինծի հետ եկած ես: Օգնէ՛ ինծի, որ ուրիշներուն համար գործեմ: Ամէն:  
**Յիսուս կը ներէ մեր բոլոր մեղքերը: Կը կլանէ չա՛րը ու կը փոխէ մեզ ամբողջութեամբ:**



Ձեզմէ ո՛վ որ ուզէ մեծ ըլլալ՝ անիկա ձեր սպասարկո՛ւն ըլլայ: [Մարկ. 10. 43]

## ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ԾԱՌԱՅԵԼ՝ ՅԻՍՈՒՄԻ ՀԱՄԱՐ

**Ռ**եքսանիկա Նիշլ Նիքըլզ (Nichelle Nichols) ամենէն աւելի կը յիշուի «Աստղային Ճանապարհ» (Star Trek) շարքին Հարիւրապետ՝ Ուհուրայի (Uhura) դերով: Այդ դերը ստանալը՝ Նիքըլզին համար անձնական յաղթանակ էր՝ դարձնելով զինք առաջին Ափրիկեցի-Ամերիկացի կիներէն մէկը՝ մեծ հեռուստացոյցային ծրագրի մը մէջ: Բայց անկէ աւելի մեծ յաղթանակ մը կը սպասէր զինք:

Նիքըլզ փաստօրէն հրաժարեցաւ «Աստղային Ճանապարհ»-ի առաջին ծրագրային շարքը աւարտելէ ետք՝ վերադառնալու իր թատերական աշխատանքին: Յետոյ՝ ան հանդիպեցաւ Մարթին Լութըր Գինկ Կրտսերին (Martin Luther King Jr.), որ յորդորեց՝ չհեռանալ: Առաջին անգամ ըլլալով, ան ըսաւ, Ափրիկեցի-Ամերիկացիներ կը տեսնուէին Հեռուստացոյցի վրայ, որպէս խելացի մարդիկ, որոնք կրնան ընել ամէն բան, նոյնիսկ տիեզերք երթալ: Հարիւրապետ Ուհուրայի դերը խաղալով՝ Նիքըլզ աւելի մեծ յաղթանակի կը հասնէր, ցոյց տալով սեւամորթ կիներուն եւ երեխաներուն, թէ անոնք ինչե՛ր կրնան դառնալ:

Յակոբոս ու Յովհաննէս խնդրեցին Յիսուսէն, իր թագաւորութեան երկու լաւագոյն պաշտօնները (Մարկ. 10. 37): Յիսուս՝ ո՛չ միայն բացատրեց անոնց խնդրանքին ցաւալի իրողութիւնները (Հմ. 38-40), այլ անոնց կ'ո՛չ ըրաւ որ դէպի աւելի բարձր նպատակներ հետապնդեն՝ ըսելով. «Ձեզմէ ո՛վ որ ուզէ մեծ ըլլալ՝ անիկա ձեր սպասարկո՛ւն ըլլայ» (Հմ. 43): Իր հետեւորդները պէտք է անձնական յաղթանակներ փնտռեն միայն, բայց իրեն նման, օգտագործեն իրենց գիրքերը ուրիշներուն ծառայելու համար (Հմ. 45):

Նիքըլզի նման երբէ՛ք չբաւարարուինք միայն անձնական յաղթանակով, այլ օգտագործենք այն պաշտօնը, որ ձեռք կը բերենք՝ ծառայելու ուրիշներուն իր անունով:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, ցոյց տուր ինծի, թէ ինչպէս օգտագործել դիրքս՝ Զու անունով ուրիշներուն ծառայելու համար: Ամէն:  
**Ունիւք մեր ներկայ անձնական եւ ասպարէզային նպատակները, սակայն կարելի է դռներ բանալ ուրիշներու համար:**





Այդ բոլոր բաները կը պատահեին անոնց՝ իբր տիպար, եւ գրուեցան խրատելու համար մեզ՝ որ հասած ենք դարերու վախճանին: [Ա. Կորնթ. 10. 11]

## ՍՈՐՎԻԼ ՍԽԱԼՆԵՐԷՆ

**Ա**պագայի նիւթաբարոյական սխալներէն խուսափելու համար, ինչպիսին են 1929-ին եւ 2008-ին, որոնք տապալեցին համաշխարհային տնտեսութիւնը, Սկոտլանդի էտինպրկ (Scotland, Edinburgh) քաղաքին մէջ հիմնուեցաւ «Սխալներու Գրադարանը»: Ան կը պարունակէ՝ աւելի քան երկու հազար գիրքերու հաւաքածոյ մը, որը կրնայ օգնել կրթելու տնտեսագէտներու յաջորդ սերունդը: Եւ այդ հիանալի օրինակ է այն բանին, թէ ինչպէ՛ս, ըստ գրադարանի համագործողներուն, «խելացի մարդիկ կը շարունակեն յիմարութիւններ ընել»: Համագործողները կը կարծեն, որ հզօր տնտեսութիւն կառուցելու միակ ճանապարհը նախկին սխալներէն դասեր քաղել է:

Պօղոս յիշեցուց Կորնթացիներուն, որ փորձութենէն փախուստ տալու եւ հաստատուն հոգեւոր կեանք ունենալու միջոցներէն մէկը, Աստուծոյ ժողովուրդին անցեալին սխալներէն սորվիլն է: Ուստի, որպէսզի համոզուինք, որ անոնք չափէն աւելի վստահ են ըլլար իրենց հոգեւոր առանձնաշնորհումի հարցին մէջ, ան օգտագործեց հին Իսրայէլի անյաջողութիւնները, որպէս օրինակ՝ իմաստութիւն ձեռք բերելու համար: Իսրայէլի ժողովուրդը դարձաւ կռապաշտութեան, ընտրեց «սեռային անբարոյութիւն» գործել, տրտնջեց Աստուծոյ ծրագիրներուն եւ նպատակներուն մասին եւ ապստամբեցաւ Անոր առաջնորդներուն դէմ: Իրենց մեղքին պատճառով անոնք փորձեցին Անոր խրատը (Ա. Կորնթ. 10. 7-10): Պօղոս ներկայացուց այս պատմական «օրինակները» Սուրբ Գիրքէն՝ օգնելու Յիսուսի հաւատացողներուն խուսափիլ Իսրայէլի սխալները կրկնելէ (հմ. 11):

Երբ Աստուած կ'օգնէ մեզի, եկէ՛ք դասեր քաղենք մեր եւ ուրիշներու գործած սխալներէն, որպէսզի կարենանք իրեն համար հնազանդութեան սիրտ ձեռք բերել:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ օգնէ ինծի՝ սորվելու անյաջողութիւններէն, որպէսզի ես աւելի հնազանդ ըլլամ Զեզի: Ամէն:

**Երբ կը փորձուինք մեղքեր գործելու՝ յիշենք նախազգուշացումները եւ սորվինք՝ մեր եւ ուրիշներու սխալներէն:**



Ձեզի ընտրեցէ՛ք այսօր թէ ո՛վ պիտի պաշտէք ... Բայց ես ու իմ տունս Եհովա՛ն պիտի պաշտենք: [Յես. 24. 15]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԴԵՏԵԻԵԼՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

**Բ**րիտանական Օրաթերթ մը (Daily Mirror) կը յայտարարէ. «Միջին մարդը՝ կեանքի ընթացքին 773,618 որոշումներ կը կայացնէ»: Թերթը կը շարունակէ պնդելով, որ մենք «կ'ափսոսանք անոնցմէ 143,262-ին համար»: Ես պատկերացում մը չունիմ, թէ ինչպէս թերթը՝ հասած է այս թիւերուն: Բայց պարզ է, որ կը դիմադրաւենք որոշումներ ընելու անթիւ պարագաներ՝ մեր կեանքի ընթացքին: Անոնց մեծ մասը՝ կրնան չգործադրուիլ, յատկապէս՝ երբ կը համարենք որ մեր բոլոր ընտրութիւնները ունին հետեւանքներ, որոնցմէ մաս մը շատ աւելի ծանրակշիռ են՝ քան միւսները:

Քառասուն տարիներ անապատին մէջ թափառելէ ետք, Իսրայէլացիները կանգնեցան իրենց նոր հայրենիքի շէմին: Աւելի ուշ, երկիր մտնելէն ետք, Յեսու՝ անոնց առաջնորդը, անոնց համար դժուար ընտրութեան կոչ մը ըրաւ. «Հանեցէ՛ք այն աստուածները, որ ձեր հայրերը պաշտեցին» (Յես. 24. 14): Յեսու ըսաւ անոնց. «Եթէ Տէրը պաշտելը ձեզի հաճելի չի թուիր, ձեզի ընտրեցէ՛ք այսօր թէ ո՛վ պիտի պաշտէք: ... Բայց ես ու իմ տունս Եհովա՛ն պիտի պաշտենք» (հմ. 15):

Երբ մենք կը սկսինք ամէն նոր օրը, հնարաւորութիւններ կը դրուին մեր առջեւ, որոնք կը մղեն մեզ բազմաթիւ որոշումներ առնելու: Ժամանակ յատկացնելը՝ խնդրելով որ Աստուած առաջնորդէ մեզ, կ'ազդէ մեր կատարած ընտրութիւններուն վրայ: Հոգիին զօրութիւնով՝ մենք կրնանք ընտրել ամէն օր՝ հետեւիլ իրեն:

**Աղօթք** - Հայր, երբեմն կեանքը կրնայ ճշող թուիլ, ինչպէ՛ս նաեւ եղած բազմաթիւ ընտրութիւնները: Կը խնդրեմ՝ առաջնորդէ քայլերս եւ որոշումներս, որպէսզի պատուեմ Զեզ՝ իմ ըրած ընտրութիւններովս: Ամէն:

**Վստահ որ ամփոսած ենք մեր ըրած կարգ մը ընտրութիւններուն համար: Ինչպէ՛ս կարելի է իմաստուն վարուիլ՝ նման իրավիճակներու մէջ:**



Որովհետեւ օրինակ մը տուի ձեզի, որպեսզի  
ինչպես ես ըրի ձեզի՝ դուք ալ ընէք: [Յովհ. 13. 15]

## ԼՈՒՄԼ ՈՏՔԵՐ ... ԵՒ ԱՄԱՆՆԵՐ

**Չ**արլի (Charley) եւ Ճէնի (Jan)՝ իրենց ամուսնութեան յիսուսն ամեակին առիթով՝ նախաճաշ ըրին իրենց որդիին՝ Ճօնին (Jon) հետ: Այդ օրը, ճաշարանի անձնակազմը՝ պակաս էր ու գործի վրայ էին միայն տնօրէնը, խոհարարը եւ դերահաս աղջիկ մը, որ թէ հիւրընկալ, թէ սպասարկող եւ թէ գանձիչ էր: Երբ անոնք վերջացուցին նախաճաշը, Չարլին դարձաւ դէպի իր կնոջ ու որդիին եւ ըսաւ. «Կարեւոր բան մը ունիք յաջորդքանի մը ժամերը»: Անոնք չունէին որեւէ բան:

Այսպիսով, տնօրէնին թոյլատուութիւնով՝ Չարլին եւ Ճէնը սկսան լուալ ամանները, մինչ Ճօն սկսաւ մաքրել սեղանները: Ըստ Ճօնին՝ այն ինչ որ տեղի ունեցաւ այդ օր, իսկապէս այնքան ալ արտասովոր չէր: Անոր ծնողները միշտ օրինակ տուած են Յիսուսը, որ «եկաւ ո՛չ թէ սպասարկութիւն ընդունելու, հապա՛ սպասարկելու» (Մարկ. 10. 45):

Յովհաննու 13-ին մէջ մենք կը կարդանք վերջին ընթրիքին մասին, որ Յիսուս ունեցաւ Իր աշակերտներուն հետ: Այդ գիշեր Ուսուցիչը՝ անոնց ուսուցանեց խոնարհ ծառայութեան սկզբունքը՝ լուալով անոնց աղտոտ ոտքերը (Հմ. 14-15): Եթէ Ան պատրաստ էր ընել տասնեակ տղամարդոց ոտքերը լուալու ստորին գործը, անոնք նոյնպէս պէտք է ուրախութեամբ ծառայեն ուրիշներուն:

Ծառայութեան իւրաքանչիւր արարք, որու կը հանդիպինք մենք, կրնայ տարբեր տեսք ունենալ, բայց մէկ բան նոյնն է՝ ծառայելը մեծ ուրախութիւն կը պատճառէ: Ծառայութիւններու գործողութիւններու ետեւ եղող նպատակը, ո՛չ թէ զանոնք կատարողները գովաբանելն է, այլ սիրով ծառայելը ուրիշներուն՝ միեւնոյն ժամանակ ամբողջ գովասանքը ուղղելով մեր խոնարհ եւ անձնագոհ Աստուծոյ:

**Աղօթք** - Սիրող Փրկիչ, շնորհակալ եմ, որ ցոյց տուիր՝ թէ ինչպէ՞ս ծառայ մը ըլլամ: Ամէն:

**Խոնարհութիւնը՝ ուրիշներու ծառայելու կարեւոր յատկանիշ է:** Դիանալի Է՝ երբ մէկը կ'առաջարկէ օգնել մեզի՝ մեր դժուար պարագաներուն մէջ:



Չգուշացէ՛ք սուտ մարգարէներէն, որոնք կու  
գան ձեզի ոչխարի հանդերձներով, բայց ներսէն՝  
յափշտակող գայլեր են»: [Մատթ. 7. 15]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՂ ՍԷՐԸ

**Ա**մառնային գիշեր մը, մեր տան մօտ գտնուող թռչունները  
յանկարծ ժայթքեցին քառասային կռնչիւնով: Ճռճռոցը  
ուժեղացաւ, երբ երգեցիկ թռչունները՝ ականջ ծակող կանչեր  
հանեցին ծառերէն: Վերջապէս հասկցանք, թէ ինչո՞ւ: Երբ  
արեւը մայր մտաւ, մեծ բազէ մը ցատկեց ծառին գագաթէն՝  
կատաղի ահագանգելով եւ ճռռալով ցրուեց թռչուններուն, երբ  
անոնք փախան ու հեռացան սպառնացող վտանգէն:

Մեր կեանքին մէջ՝ կարելի է լսել ամբողջ Աստուածաշունչին  
մէջ եղած հոգեւոր նախազգուշացումները. օրինակ՝ սուտ  
ուսուցմունքներու դէմ զգուշացումներ: Մենք կրնանք  
կասկածիլ, այդ այն է՝ ինչ որ մենք կը լսենք: Մեր հանգէպ  
իր ունեցած սիրոյ պատճառով՝ սակայն, մեր Երկնաւոր Հայրը  
կու տայ Աստուածաշունչին պարզութիւնը՝ մեզի համար պարզ  
դարձնելու նման հոգեւոր վտանգները:

Յիսուս ուսուցանեց. «Զգուշացէ՛ք սուտ մարգարէներէն, որոնք  
կու գան ձեզի ոչխարի հանդերձներով, բայց ներսէն՝ յափշտակող  
գայլեր են» (Մատթ. 7. 15): Ան շարունակեց. «Իրենց պտուղէն  
պիտի ճանչնանք զանոնք: ... Ամէն բարի ծառ լաւ պտուղ կը  
բերէ, եւ վատ ծառ՝ չար պտուղ կը բերէ»: Ապա զգուշացուց մեզի.  
«Ուրեմն իրենց պտուղէն պիտի ճանչնանք զանոնք» (Հմ. 16-17, 20):

Առակաց 22. 3-ը կը յիշեցնէ մեզի. «Խորագէտը չարիքը  
կը տեսնէ եւ կը զգուշանայ, բայց միամիտները կ'անտեսեն ու  
կը պատժուին»: Նման նախազգուշացումներու մէջ ներառուած  
է Աստուծոյ պաշտպանող սէրը, որ բացայայտուած է մեզի  
ուղղուած իր խօսքերուն մէջ:

Ինչպէս թռչունները կը նախազգուշացնէին զիրար, թող որ  
մենք ականջ դնենք Աստուածաշունչի նախազգուշացումներուն,  
թռչելով՝ հոգեւոր վտանգէն՝ դէպի Աստուծոյ ապաստանի գիրկը:

**Աղօթք** - Յայր, Աստուածաշունչը սիրով կը զգուշացնէ եւ մենք  
շնորհակալութիւն կը յայտնենք Զեզի: Թող որ այսօր՝ ականջալուր  
ըլլանք Զու խօսքերուդ: Ամէն:

**Յոգեւոր նախազգուշացումներ յաճախ կ'ըլլան մեր սիրտերուն  
եւ Աստուածաշունչը կը հաստատէ զանոնք:**



Ինձի՝ դարձիր ու ողորմե՛ ինձի, քանի որ  
միևսկ եւ դժբախտ եմ: [Սաղմ. 25. 16]

## ԿԱՆՉԵԼՈՎ ԱՍՏՈՒԾՈՅ

«Որդեգրուած Կեանքի Համար» (*Adopted for Life*) խորագիրով  
իր գիրքին մէջ, Դոկտ. Ռասսելլ Մուր (Dr. Russell Moore),  
կը նկարագրէ իր ընտանիքին ուղղեւորութիւնը դէպի  
մանկատուն՝ երեխայ որդեգրելու նպատակով: Երբ անոնք  
մտան մանկատուն, լուսթիւնը ապշեցուցիչ էր: Օրօրոցներուն  
մէջ գտնուող մանուկները երբէ՛ք չէին լար, եւ այդ ո՛չ թէ այն  
պատճառով էր, որ անոնք որեւէ բանի կարիքը չունէին, այլ  
որովհետեւ անոնք իմացած էին, որ ո՛չ մէկը պատրաստ էր  
պատասխանելու:

Սիրտս ցաւեցաւ, երբ կարդացի այդ խօսքերը: Ես կը յիշեմ  
անթիւ գիշերներ, երբ մեր երեխաները փոքր էին: Կինս եւ ես՝  
խոր քունի մէջ կ'ըլլայինք, սակայն կ'արթնայինք անոնց  
աղաղակներէն. «Հայրիկ, հիւանդ եմ»: Կամ «Մայրիկ, կը  
վախնամ»: Մեզմէ մէկը կը սկսէր գործի անցնիլ ու երթալ իրենց  
ննջասենեակը, որպէսզի ամէն ինչ ընենք զիրենք հանգստացնելու՝  
եւ հոգ տանելու համար: Մեր երեխաներուն հանդէպ սէրը  
հիմք տուաւ մեզի կանչելու Աստուծոյ՝ օգնութեան համար:

Սաղմոսներու ճնշող մասը՝ աղաղակներ կամ ողբեր են առ  
Աստուած: Իսրայէլ ալ իր ողբը բերաւ Աստուծոյ՝ իրենց հետ  
Անոր ունեցած անձնական յարաբերութեան հիման վրայ: Անոնք  
մարդիկ էին, որ Աստուած անուանած է զիրենք իր «անդրանիկը»  
(Ել. 4. 22) եւ անոնք կը խնդրէին իրենց Հօրմէն համապատասխան  
վարուելու: Նման ազնիւ վստահութիւն մը կ'երեւի Սաղմոս 25-  
ին մէջ. «Ինձի՝ դարձիր ու ողորմե՛ ինձի, ... Դուրս հանէ զիս  
տուայտանքներէս» (Հմ. 16-17): Մանուկներ, որոնք վստահ են  
խնամողին սէրէն՝ կու լան: Որպէս Յիսուսի հաւատացողներ՝  
Աստուծոյ զաւակներ, մեզի պատճառ տրուած է կանչելու  
զինք: Ան կը լսէ՝ եւ հոգ կը տանի՝ մեզ սիրելուն պատճառով:

**Աղօթք** - Երկնաւոր Զայր, շատ շնորհակալ եմ քու հաւատարմու-  
թանդ համար՝ լսելու աղաղակս եւ պատասխանելու: Ամէն:

**Որքանո՞վ պատարստ ես աղաղակներդ բարձրացնելու եւ  
տանելու Աստուծոյ: Ինչպէ՞ս կարելի է այսօր մեր ողբը տանիլ  
Աստուծոյ:**



Մենք կը սիրենք զայն, որովհետեւ նախ ան  
սիրեց մեզ: [Ա. Յովհ. 4. 19]

## ԿԱԹԻԼ ԱՌ ԿԱԹԻԼ

**Տ**ասնվեցերորդ դարու հաւատացեալ հեղինակ՝ Թէրէզա Աւիլա (Teresa Avila) կը գրէ. «Ամէն բանի մէջ՝ մենք կը փնտռենք հաճելի ուղիներ Աստուծոյ ծառայելու համար»: Ան կսկիծով կը նշէ այն բազմաթիւ միջոցներուն մասին, որոնց կը ձգտինք վերահսկելու մեր կեանքին աւելի «հաճելի» ուղիներով, փոխանակ վստահելու Աստուծոյ: Մենք միտումը ունինք՝ դանդաղ, կանխամտածուած եւ նոյնիսկ դժկամութիւնով աճիլ Աստուծոյ վստահելու ամբողջ էութեամբ: Այսպէս՝ կը խոստովանի Թէրէզան, «նոյնիսկ երբ կը չափենք մեր կեանքը քեզի, քիչ-քիչ, մենք պէտք է գոհ ըլլանք ստանալով քու տուած պարգեւներդ կաթիլ առ կաթիլ, մինչեւ որ ամբողջութեամբ յանձնենք մեր կեանքերը քեզի»:

Որպէս մարդ արարածներ, վստահութիւնը բնական կերպով չգար մեզմէ շատերուն: Ուստի, եթէ Աստուծոյ շնորհքն ու սէրը զգալն ու ստանալը կախուած ըլլար մեր կարողութեան վստահելէն, մենք դժուարութեան մէջ կը յայտնուէինք:

Սակայն՝ ինչպէս կը կարգանք Ա. Յովհաննու 4-ին մէջ, Աստուծոյ սէրը մեզի հանդէպ առաջ կուգայ (Հմ. 19): Ան սիրեց մեզ շատ աւելի առաջ. առաջ որ մենք գինք սիրենք, այնքան շատ, որ Ան պատարաստ էր գոհել Իր Որդին մեզի համար: Յովհաննէս կը գրէ զարմանքով եւ երախտագիտութիւնով. «Սէրը ասո՛ր մէջ է» (Հմ. 10):

Աստիճանաբար, մեղմօրէն, կամաց-կամաց Աստուած կը բուժէ մեր սիրտերը, որպէսզի ստանանք Իր սէրը՝ կաթիլ առ կաթիլ. Անոր շնորհքը կ'օգնէ մեզի՝ յանձնելու մեր վախերը (Հմ. 18): Կաթիլ առ կաթիլ Անոր շնորհքը կը հասնի մեր սրտերուն, մինչեւ որ յայտնուինք Իր առատ զեղեցկութեան եւ սիրոյ հեղեղումին մէջ:

**Աղօթք** - Հաւատարիմ Աստուա՛ծ, շնորհակալ եմ՝ որ սիրեցիր զիս, նոյնիսկ այն ատեն՝ երբ Զեզի չէի վստահեր: Երախտապարտ եմ՝ որ զանազան ձեւերով Դուն կը հասնիս ինձի, ուր որ ալ ըլլամ: Ամեն:

**Աստուծոյ սէրը կ'օգնէ մեզի որ յոյսով եւ վստահութիւնով յաղթենք մեր վախերուն եւ զգանք Աստուծոյ շնորհքը՝ մեր կեանքին մէջ «կաթիլ առ կաթիլ»:**



Ուրախացէ՛ք՝ որ ձեր անունները գրուած են  
երկինքը: [Ղուկ. 10. 20]

## ԵԻՇԴ ԿԵԴՐՈՆԱՑՈՒՄԸ

**Մ**ենք Խային (*Kha*) կը ճանչնայինք՝ աւելի քան մէկ տարի: Ան մաս կը կազմէր եկեղեցիի մեր փոքր խումբին, որ ամէն շաբաթ կը հաւաքուէր քննարկելու այն, ինչ որ մենք կը սորվէինք Աստուծոյ մասին: Երեկոյ մը՝ մեր հերգական հանգիպումի ժամանակ, ան անդրադարձաւ Ողոմպիական խաղերուն իր մասնակցութեան մասին: Յիշատակումը այնքան պատահական էր, որ գրեթէ վրիպեցաւ մեր ուշադրութենէն: Գրեթէ: Ո՛հ, ահաւասիկ. ես իմացայ՝ թէ կը ճանչնայի Ողոմպիական մը, որ մասնակցած է խաղերուն եւ շահած պղնձեայ մետալ մը: Ձէի կրնար հասկնալ, որ ան նախապէս չէր յիշած այդ մասին, բայց Խայի համար, թէեւ մարզական նուաճումները իր պատմութեան յատուկ մէկ մասն էին, աւելի կարեւոր բաներ կեդրոնական էին՝ իր ինքնութեան համար. ինչպէ՛ս իր ընտանիքը, իր համայնքը եւ իր հաւատքը:

Ղուկաս 10. 1-23-ի պատմութիւնը կը նկարագրէ այն, ինչ որ պէտք է կեդրոնական ըլլայ մեր ինքնութեան համար: Երբ Յիսուսի ղրկած եօթանասուներկու մարդերը՝ Աստուծոյ թագաւորութեան մասին ուրիշներու պատմելու իրենց ճամբորդութենէն վերադարձան, գեկուցեցին, որ «Իր անունով՝ դեւերն ալ կը հպատակէին իրենց» (Հմ. 17): Թէեւ Յիսուս հաստատեց թէ զանոնք զինած էր մեծ զօրութիւնով եւ պաշտպանութիւնով, ըսաւ թէ անոնք կեդրոնացած էին սխալ բաներու վրայ: Ան պնդեց, որ անոնց ուրախութեան պատճառը պէտք է ըլլայ անոր համար, որ իրենց «անունները գրուած են երկինքը» (Հմ. 20):

Ի՛նչ ձեռքբերումներ կամ կարողութիւններ ալ որ Աստուած շնորհած է մեզի, մեր ուրախութեան ամենամեծ պատճառը այն է, որ եթէ մե՛նք վստահած ենք Յիսուսի, մեր անունները գրուած են երկինքը եւ մե՛նք կը վայելենք Անոր ամէնօրեայ ներկայութիւնը մեր կեանքերուն մէջ:

**Աղօթք** - Երկնաւոր Դայ՛ր, շնորհակալ եմ, որ գրեցի՛ր անունս  
երկինքը: Ես ուրախ եմ Զե՛զ ճանչնալուս համար: Ամէն:

**Ինչի՞ վրայ կեդրոնացած ենք:** Ինչպէ՛ս կարելի մեր ուշադրու-  
թիւնը դարձնել աւելի կարեւոր եւ յաւիտենական բաներու վրայ:



Անոնք իրենց սուրբերէն խոփեր պիտի դարբնեն, եւ իրենց նիզակներէն՝ յօտոցներ: [Միք. 4. 3]

## ՄԱՅՈՐԴՆԵՐԷՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ

**Կ**ինս՝ Միսգան (*Miska*), ունի վզնոց մը եւ օղակաձեւ ականջի օղեր՝ Եթովպիայէն: Անոնց նրբագեղ պարզութիւնը կը բացայայտեն՝ անոնց իսկական գեղարուեստական գործը: Այս զարդերուն ամենէն աւելի ապշեցուցիչը՝ անոնց պատմութիւնն է: Տասնամեակներ երկարող կատաղի ու սաստիկ հակամարտութիւններու եւ շարունակուող քաղաքացիական պատերազմի պատճառով, Եթովպիայի տարածքը լեցուն է գործածուած հրետանիներու արկերով եւ զինամթերքի պարապ պատեաններով: Որպէս յոյսի գործողութիւն, Եթովպիացիները կը մաքրեն եկիրը՝ հաւաքելով մնացորդները: Իսկ արհեստաւորները, զարդեր կը պատրաստեն այդ մնացորդացներէն:

Երբ իմացայ այս պատմութիւնը, լսեցի Միքիայի արձագանքները՝ որոնք համարձակօրէն կը յայտարարեն Աստուծոյ խոստումը: Օր մը, մարգարէն ծանուցանեց, որ մարդիկ «իրենց սուրբէն խոփեր պիտի դարբնեն, եւ իրենց նիզակներէն՝ յօտոցներ» (4. 3): Գործիքները, որոնք նախատեսուած են սպաննելու եւ հաշմանդամ դարձնելու համար, սակայն Աստուծոյ հզօր գործողութեան շնորհիւ կը վերածուին գործիքներու, որոնք նախատեսուած են կեանքը սնուցանելու համար: Աստուծոյ գալիք օրը, մարգարէն պնդեց, որ «ազգ ազգի վրայ սուր պիտի չվերցնէ, եւ ալ պատերազմիլ պիտի չսորվին» (Հմ. 3):

Միքիայի յայտարարութիւնը աւելի դժուար է՜ր պատկերացնել իր օրերերուն, քան մեր: Ինչպէս Հին Իսրայէլը, մենք ալ բախում կ'ունենանք բռնութեան եւ պատերազմի, եւ անհնար կը թուի, որ աշխարհը կը փոխուի: Բայց Աստուած կը խոստանայ մեզի, որ իր ողորմութիւնով եւ բժշկութիւնով, ապշեցուցիչ օրը կու գայ: Մեզի համար խնդիրը այն է, որ Հիմա սկսինք ապրելու այս ճշմարտութիւնով: Աստուած կ'օգնէ մեզի, ստանձնելու իր աշխատանքը նոյնիսկ Հիմա՝ մնացորդները վերածելով գեղեցիկ բաներու:

**Աղօթք** - Միքիի Աստուա՛ծ, կը խնդրեմ՝ փոխէ մեր աշխարհը: Գործէ իմ միջոցով՝ գեղեցկութիւն բերելու՝ այս աշխարհին: Ամէն:  
**Կարելի է տեսնել Աստուծոյ սիրով վերափոխուած չարը՝ եւ մնացորդները վերածել գեղեցկութեան:**





Ամեն մարդ թող արագ ըլլայ՝ լսելու մէջ, դանդաղ՝ խօսելու մէջ, դանդաղ՝ բարկանալու մէջ: [Յակ. 1. 19]

## ԱՐԱԳ ԼՍԵԼՈՒ

**Զ**գացի, որ սրտիս զարկերու արագութիւնը կ'աւելնայ, երբ բացի բերանս՝ հերքելու սիրելի ընկերուհիս մեղադրանքները: Այն ինչ որ տեղադրած էի համացանցին վրայ, ո՛չ մէկ կապ ունէր իր հետ, ինչպէս ան կ'ակնարկէր: Բայց մինչ ես կը պատասխանէի, շնջեցի աղօթք մը: Յետոյ հանգստացայ եւ լսեցի թէ ինչ կ'ըսէր ան եւ տեսայ իր խօսքերուն ետին եղող ցաւը: Պարզ էր, որ այս աւելի խոր էր, քան մակերեսը: Ընկերուհիս կը ցաւէր եւ ինքզինքս պաշտպանելու կարիքը լուծուեցաւ, երբ որոշեցի օգնել անոր՝ յաղթահարելու իր ցաւը:

Այս զրոյցի ընթացքին իմացայ, թէ ինչ նկատի ունէր Յակոբ այսօրուան հատուածին մէջ, երբ ան յորդորեց մեզ «արագ ըլլալ՝ լսելու մէջ, դանդաղ խօսելու մէջ, դանդաղ բարկանալու մէջ» (1. 19): Լսելը՝ կրնայ օգնել մեզի մտիկ ընելու, թէ ինչ կրնայ ըլլալ խօսքերուն ետին եւ խուսափիլ բարկութենէ, որովհետեւ «մարդուն բարկութիւնը չիրագործեր Աստուծոյ արդարութիւնը» (Հմ. 20): Թոյլ կու տայ մեզի՝ լսելու խօսողին սիրտը: Կը կարծեմ՝ կանգ առնել ու աղօթելը, ինծի մեծապէս օգնեց ու ես շատ աւելի զգայուն դարձայ անոր խօսքերէն, փոխանակ ինքզինքս պաշտպանելու: Հաւանաբար, եթէ ես չկենայի ու չաղօթէի, իմ խորհուրդներս գէնքի կրակոցի նման պիտի նետէի իր վրայ ըսելով թէ որքա՛ն վիրաւորուած էի:

Հակառակ անոր, որ ես միշտ չէ որ ճիշդ ձեւով առած եմ Յակոբի տուած ցուցմունքները, այդ օր՝ կարծեմ թէ ստացայ: Աղօթքի շուկով կանգ առնելը, նախ քան զայրուիլն ու վիրաւորանքը զիս կ'լանելը, զսպուած արագ լսելու եւ դանդաղ խօսելու բանալին է: Կ'աղօթեմ, որ Աստուած ինծի իմաստութիւն տայ այդ մէկը ընել՝ աւելի յաճախ: (Առ. 19. 11):

**Աղօթք** - Շնորհքի Աստուած, կը խնդրեմ՝ յիշեցուր ինծի, որ արագ ըլլամ լսելու եւ դանդաղ վիրաւորելու: Ամեն:

**Եթէ Յակոբի տուած ցուցմունքները կ'օգնեն, մտածե՛թ ինչպէ՞ս կրնաս օգտագործել զանոնք այսօր:**



Ո՞վ գիտե, թերեւս դուն այսպիսի ատենուան մը  
համար թագուհի եղար: [Եպթ. 4. 14]

## ԱՆՃԱՆՕԹ ՏԵՂԵՐ

**Ո**րպէս ամուսին եւ փոքր երեխաներու հայր, այդ հարցումները աւելի շրջեցան մտքիս մէջ, երբ կը պայքարէի քաղցկեղի լուրջ ախտորոշման հետ: Աւելին, մեր ընտանիքը տակաւին նոր ծառայութիւն մատուցած էր միսիոնարական խումբի մը հետ, ուր տեսան մեծ թիւով մանուկներ՝ ընդունեցին Յիսուս որպէս իրենց Փրկիչը: Աստուած ակնյայտ պտուղ կու տար: Այնքա՛ն ուրախութիւն կար: Եւ հիմա՛ ա՛յս:

Եսթէր, նոյնպէս՝ հարցեր եւ աղօթքներ յղեց Աստուծոյ, երբ զինք հանեցին իր սիրելի տունէն ու նետեցին տարօրինակ նոր աշխարհի մը մէջ (Եսթ. 2. 8): Անոր զարմիկը՝ Մուրթքէն՝ իր որբանալէն ետք, մեծցուց զինք՝ որպէս իր դուստրը (Հմ. 7): Բայց յետոյ զինք դրին թագաւորին հարեմին մէջ եւ ի վերջոյ բարձրացուցին ծառայելու որպէս անոր թագուհին (Հմ. 17): Մուրթքէն՝ հասկնալի կերպով մտահոգուած էր՝ թէ ի՞նչ կը կատարուի Եսթէրի հետ (Հմ. 11): Բայց ժամանակի ընթացքին՝ անոնք երկուքն ալ հասկեցան, որ Աստուած կանչած էր զինք, ըլլալու մեծ զօրութեան դիրքի մը վրայ «այսպիսի ատենուան մը համար» (4. 14), թոյլ տալու որ իր ժողովուրդը փրկուի կործանումէն (զլխ. 7-8):

Յստակ է, որ Աստուած նախախնամութիւնով՝ դրաւ Եսթէրին տարօրինակ տեղ մը, որպէս իր կատարեալ ծրագրին մէկ մասը: Նոյնը ըրաւ ինծի հետ: Քանի որ ես երկար կը պայքարէի քաղցկեղի դէմ, արտօնութիւն ունեցայ բաժնեկցելու իմ հաւատքս շատ ու շատ հիւանդներու եւ խնամողներու հետ: Ի՞նչ տարօրինակ տեղ առաջնորդած է քեզ: Վստահիր Անոր: Ան բարի է եւ Անոր ծրագիրները նոյնպէս (Հռոմ. 11. 33-36):

**Աղօթք** - Սիրելի Հայր, օգնէ՛ ինձի վստահելու Զեզի՝ երբ չես  
հասկնար, թէ ի՞նչ կ'ընես Դուն: Ամէն:

**Երբ տեսնես թէ Աստուած քեզ տարօրինակ տեղ մը տարած է,  
վստահի՛ր Անոր կատարեալ ծրագիրներուն:**



Մարդը արտաքին երեւոյթին կը նայի, բայց Տէրը սիրտին կը նայի: [Ա. Թագ. 16. 7]

## ԱՅԼԵԻՍ Ո՛Չ ՄԷԿ ՆԱԽԱՊԱՇՈՒՄ

**Շ**ատ տարիներ առաջ՝ Ճոլլի Լէնտզմըն (*Julie Landsman*) քննութեան համար նուագեց՝ Նիու Եօրք Քաղաքի Օփերայի Նուագախումբին մէջ գլխաւոր Գալարափողի (*French Horn*) աթոռը ունենալու: Քննիչ մարմինը նուագողներէն կը խնդրէր՝ պաստարի մը ետեւ նուագել՝ դատողներուն կողմէ նախապաշարումներէն խուսափելու համար: Լէնտզմըն յաջողեցաւ քննութեան ու շահեցաւ մրցոյթը: Սակայն երբ ան դուրս եկաւ պաստարին ետեւէն, բոլոր տղամարդ քննիչներէն մի քանին գացին սենեակին ետեւը ու կռնակ դարձուցին անոր: Յստակ էր որ անոնք ուրիշ մէկը կը փնտռէին:

Երբ Իսրայէլացիները թագաւոր խնդրեցին, Աստուած անոնց փափաքը իրականացուց եւ անոնց տուաւ մարդ մը, որ Ֆիզիքապէս ներկայանալի էր, ինչպէս միւս ազգերուն թագաւորները (Ա. Թագ. 8. 5, 9. 2): Բայց քանի որ Սաւուղի որպէս թագաւոր առաջին տարիները նշանակուեցան անհաւատարմութեամբ եւ անհնազանդութեամբ, Աստուած Սամուէլին ղրկեց Բեթլէհէմ՝ նոր թագաւոր մը օծելու համար (16. 1-13): Երբ Սամուէլ տեսաւ Յեսսէի աւագ որդին՝ Եղիաբը, ենթադրեց որ Աստուած ընտրած էր զայն որպէս թագաւոր, քանի որ ան Ֆիզիքապէս տպաւորիչ ու ներկայանալի էր: Բայց Աստուած մարտահրաւէր տուաւ Սամուէլի մտածելակերպին ըսելով. «Մարդը արտաքին երեւոյթին կը նայի, բայց Տէրը սիրտին կը նայի» (Հմ. 7): Աստուած ընտրած էր Դաւիթին՝ որ առաջնորդէ Իր Ժողովուրդը (Հմ.12):

Երբ Աստուած կը գնահատէ մարդոց ունեցած կարողութիւնն ու յարմարութիւնը Իր նպատակներուն համար, կը նայի անոնց նկարագիրին, կամքին եւ շարժառիթներուն: Ան կը հրաւիրէ մեզ ներդաշնակուելու տեսնելու աշխարհն ու մարդիկ այնպէս, ինչպէս Ինք կը տեսնէ, կեդրոնանալով մարդոց սիրտերուն վրայ:

**Աղօթք** - Տէր Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի որ չգնահատեմ միայն մարդոց արտաքինը: Ամէն:

**Կարեւոր է չդատել ոեւէ մէկը՝ անձնական  
նախապաշարումներու վրայ, որովհետեւ աւելի կարեւոր է՝  
իսկական սիրտ ունենալ Աստուծոյ հանդէպ:**



Ինչպես պաղ ջուրը՝ պապական անձին, այնպես է հեռաւոր երկրէ եկած բարի լուրը: [Առ. 25. 25]

## ԹԱՐՄԱՑՆՈՂ ԽՕՍՔԵՐ

**Կ**անգնած խոհանոցին մէջ՝ աղջիկս բացագանչեց. «Մամ, մեղրին մէջ ճանճ մը կայ»: Հեգնանքով՝ ծանօթ ասացուածք մը ըսի. «Մեղրով՝ միշտ աւելի շատ ճանճ կը բռնես, քան քացախով»: Թէեւ այս առաջին անգամն էր, որ ես (պատահաբար) ճանճ կը բռնէի մեղրով, ես ինքս մէջբերեցի այս ժամանակակից ասացուածքը անոր իմաստութեան պատճառով. բարի խնդրանքները աւելի հաւանական են, որ համոզեն ուրիշներուն, քան դառն վերաբերմունքը:

Առակաց գիրքը մեզ կու տայ Աստուծոյ Հոգիով ներշնչուած իմաստուն առակներու եւ ասացուածքներու հաւաքածոյ մը: Այս ներշնչուած առակները կ'օգնեն առաջնորդելու եւ սորվեցնելու մեզ կարեւոր ճշմարտութիւններ՝ այն մասին, թէ ինչպէ՛ս ապրելու ենք Աստուած պատուելու համար: Առակներուն մեծ մասը կը կեդրոնան միջանձնային յարաբերութիւններու վրայ, ներառեալ այն խոր ազդեցութիւնը, որ մեր խօսքերը կրնան ունենալ ուրիշներու վրայ:

Սողոմոն Թագաւորին վերագրուող առակներէն մէկ հատուածին մէջ, ան զգուշացուց դրացիին դէմ սուտ խօսելու հետեւանքով առաջացած վնասին մասին (Առ. 25. 18): Ան խորհուրդ տուաւ, որ «չարախօս լեզուն» պատճառ կ'ըլլայ տխուր յարաբերութիւններու (Հմ. 23): Սողոմոն զգուշացուց անընդհատ բողոքող խօսքեր օգտագործելու սառսեցնող ազդեցութեան դէմ (Հմ. 24): Ան խրախուսեց ընթերցողներուն, որ օրհնութիւնը կու գայ, երբ մեր խօսքերը բարի լուր կը բերեն (Հմ. 25):

Երբ մենք կը ձգտինք կիրառել այս ճշմարտութիւնները, մենք ունինք Աստուծոյ Հոգին, որ կ'օգնէ մեզի տալու «չիտակ պատասխան» (16. 1): Իր կողմէ զօրացած՝ մեր խօսքերը կրնան քաղցր եւ թարմացնող ըլլալ:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինծի արտացոլացնելու Ըու կարեկցութիւնդ իմ փոխազդեցութեանս մէջ, օգտագործելով ազնիւ եւ բարի խօսքեր: Ամէն:

**Մեր խօսքերը մե՛ծ ազդեցութիւն ունին. ուստի պէտք է Հոգիին առաջնորդութիւնով՝ թարմացնող խօսքեր օգտագործենք:**



Մեզմե իւրաքանչիւրին շնորհք տրուած է՝ Զրիստոսի պարգեւին չափին համեմատ: [Եփ. 4. 7]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀՔԻՆ ՊԱՐԳԵԻԸ

**Ե**րբ կը գնահատէի գոլէճի մէջ դասաւանդած՝ գրելու դասի գրաւորներու ծրար մը, շատ լաւ գրուած թուղթով մը տպաւորուեցայ: Սակայն շուտով հասկցայ, որ չափազանց լաւ գրուած էր այդ թուղթը: Ի հարկէ, քիչ մը հետազօտութիւն ցոյց տուաւ՝ որ գրութիւնը գրագողութիւն էր՝ արցանց աղբիւրէ մը:

Ե-նամակ զրկեցի ուսանողին՝ տեղեկացնելու, որ իր խորամանկութիւնը յայտնաբերուած է, եւ զէրոյ կը ստանայ այս թուղթին համար, բայց կրնայ՝ նոր թուղթ մը գրել մասնակի վարկի համար: Անոր պատասխանը. «Ես նուաստացած կը զգամ եւ շատ կը ցաւիմ: Կը գնահատեմ այն շնորհքը, որ դուք ցոյց կու տաք ինծի: Ես անոր արժանի չեմ»: Ես պատասխանեցի իրեն՝ ըսելով, որ մենք բոլորս կը ստանանք Յիսուսի շնորհքը ամէն օր, ուստի ինչպէ՞ս կրնամ ժխտել Անոր շնորհքը:

Կան բազմաթիւ ուղիներ, որոնց միջոցով Աստուծոյ շնորհքը կը բարելաւէ մեր կեանքը եւ կը փրկէ մեզ՝ մեր սխալներէն: Պետրոս կ'ըսէ, որ այդ փրկութիւն կու տայ. «Կը հաւատանք թէ Տէր Յիսուսի շնորհքով կը փրկուինք մենք, ինչպէս նաեւ անոնք» (Գործք 15. 11): Պօղոս կ'ըսէ, որ այդ կ'օգնէ մեզի որ տեղի չտանք մեղքին. «Արդարեւ մեղքը պիտի չիշխէ ձեր վրայ. որովհետեւ ո՛չ թէ Օրէնքին տակ էք, հապա՛ շնորհքի տակ» (Հռոմ. 6. 14): Ուրիշ տեղ՝ Պետրոս կ'ըսէ, որ շնորհքը թոյլ կու տայ մեզի ծառայելու. «Ձեզմէ իւրաքանչիւրը ստացած է շնորհք մը, սպասարկեցէ՛ք զայն իրարու՝ Աստուծոյ բազմազան շնորհքին բարի տնտեսներուն պէս» (Ա. Ժեա. 4. 10):

Շնորհք: Որպէս ձրի պարգեւ տրուած Աստուծմէ (Եփ. 4. 7): Թող որ մենք օգտագործենք այս պարգեւը ուրիշներ սիրելու եւ քաջալերելու համար:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, օգնէ՛ ինծի բաժնեկցելու Զու շնորհքդ ուրիշներու հետ՝ իմ փոխարաքերութիւններուս մէջ: Ամէն:  
**Եթէ** կը զգաս Աստուծոյ շնորհքը քու կեանքիդ մէջ, պատրաստ եղի՛ր դուս ալ՝ քու կարգիդ շնորհք ցոյց տալու ուրիշներուն:



Սիրե՛ք ընկերդ քու անձիդ պես: [Գաղ. 5. 14]

## ԲԱԺՆԵԿՑԻԼ՝ ԿԱՐԵԿՑՈՒԹԵԱՄԲ

**Ե**րիտասարդ հովիւը ամէն առտու կ'աղօթէր՝ խնդրելով Աստուծմէ, որ այդ օր զինք գործածէ՝ մէկու մը օրհնութիւն ըլլալու համար: Յաճախ, հաճելիօրէն նման իրավիճակ մը կը յառաջանար: Օր մը՝ իր երկրորդ աշխատանքի ընդմիջումի ժամանակ, ան նստեցաւ արեւին տակ՝ աշխատակիցի մը հետ, որ հարցուց իրեն Յիսուսի մասին: Հովիւը՝ պարզապէս պատասխանեց հարցերուն: Ո՛չ մէկ բամբասանք: Ո՛չ մէկ վիճաբանութիւն: Հովիւը մեկնաբանեց, որ Սուրբ Հոգիով առաջնորդուիլը՝ մղած է զինք պատահական գրոյցի, որ կը զգայ թէ արդիւնաւոր է, բայց սիրով: Ան նաեւ նոր ընկեր ձեռք բերաւ մէկը, որ անօթի է աւելին իմանալու Աստուծոյ մասին:

Թոյլ տալը որ Սուրբ Հոգին առաջնորդէ մեզ՝ Յիսուսի մասին ուրիշներու պատմելու լաւագոյն միջոցն է: Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Սուրբ Հոգին ձեր վրայ եկած ատենը՝ զօրութիւն պիտի ստանաք, եւ ինծի համար վկաներ պիտի ըլլաք» (Գործք 1. 8):

Սուրբ Հոգիին պտուղն է «սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն» (Գաղ. 5. 22-23): Ապրելով Հոգիին հսկողութեան ներքեւ, այդ երիտասարդ հովիւը գործնականին մէջ կիրառեց այն, ինչ որ Պետրոս հրահանգեց. «Միշտ պատրաստ եղէք հեզութեամբ ու երկիւղածութեամբ ջատագովական ներկայացնելու ամէն մէկուն որ կը խնդրէ ձեզմէ ձեր մէջ եղած յոյսին պատճառը. բարի՛ խղճմտանք ունեցէք» (Ա. Պետ. 3. 15):

Նոյնիսկ եթէ մենք կը տառապինք Քրիստոսի հաւատալու համար, մեր խօսքերը կրնան ցոյց տալ աշխարհին, որ Անոր Հոգին կ'առաջնորդէ մեզ: Հետեւաբար՝ մեր քայլերը կը քաշէ ուրիշներ՝ դէպի իրեն:

**Աղօթք** - Սուրբ Հոգի, երբ ես ուրիշներուն կ'ըսեմ Յիսուսի մասին,

կը խնդրեմ՝ առաջնորդէ զիս՝ խօսելու քու սիրովդ: Ամէն:

**Ուրիշներու հետ մեր հաղորդակցութեան ոճը ըլլալու է, թոյլ տալ Սուրբ Հոգիին՝ որ առաջնորդէ մեր գրոյցները՝ անելի արդիւնաւոր ըլլալու համար:**



Ահա թագաւոր մը արդարութեամբ պիտի թագաւորէ,  
... տաբաստանը՝ ջուրի առուններու պէս: [Ես. 32. 1-2]

## ՅԻՍՈՒՍ ՄԵՐ ԹԱԳԱՒՈՐԸ

**Ա**շխարհի ամենաարեւոտ եւ ամենաչոր երկիրներէն մէկուն մէջ քարիւղի հոր փորելու ժամանակ խումբերը ցնցուեցան՝ յայտնաբերելով հսկայական ստորերկրային ջրային համակարգ մը: Այսպէս, 1983 թուականին սկսաւ «մեծ մարդակերտ գետ»ի ծրագիրը՝ տեղադրելով խողովակներու համակարգ մը, բարձրորակ քաղցրահամ ջուրը հասցնելու այն քաղաքները, ուր անոր խիստ կարիքը կար: Ծրագրի սկսած վայրին մօտ գտնուող ցուցտախտակին վրայ գրուած է. «Այստեղէն կը հոսի կեանքի զարկերակը»:

Եսայի մարգարէն՝ օգտագործեց անապատի ջուրի պատկերը, ապագայի արդար թագաւորը նկարագրելու համար (Ես. 32): Քանի որ թագաւորներն ու տիրակալները կը թագաւորէին արդարութեամբ եւ արդարադատութեամբ, կը նմանցուին «տաբաստանի ջուրի առուններուն եւ մեծ ժայռի մը հովանիին» (Հմ. 2): Որոշ կառավարիչներ կը նախընտրէին առնել տալու փոխարէն: Սակայն Աստուած յարգող առաջնորդի մը նշանը այն մարդն է, որ ապաստան, թարմութիւն եւ պաշտպանութիւն կը բերէ: Եսայի ըսաւ որ «Աստուծոյ արդարութեան գործը խաղաղութիւն պիտի ըլլայ՝ իր ժողովուրդին համար», եւ պիտի ըլլայ «արդարութեան արդիւնքը՝ հանդարտութիւն ու ապահովութիւն յաւիտեան» (Հմ. 17):

Եսայիի յոյսի խօսքերը՝ յետագային լիարժէք իմաստ պիտի ունենայ Յիսուսի մէջ, որ «պիտի իջնէ երկինքէն՝ ... եւ այդպէս Տէրոջ հետ պիտի ըլլանք յաւիտեան» (Ա. Թեա. 4. 15-17): «Մեծ մարդակերտ գետ»ը ճիշդ այդ է՝ ստեղծուած մարդու ձեռքով: Օր մը՝ այդ ջրամբարը պիտի սպառի: Բայց մեր արդար թագաւորը կը բերէ թարմութիւն եւ կեանքի ջուր, որ երբէք չի չորնար:

**Աղօթք** - Տէր Յիսուս, շնորհակալութիւն Զեզի, որ խաղաղութիւն բերիր՝ Զու կատարեալ արդար իշխանութեան միջոցով: Ամէն:

**Ո՛ր պետք ունիս Յիսուսի՝ կեանքի ջուրը բերելու համար:**  
**Ինչպէ՞ս կրնաս հետեւիլ Իր օրինակին, ուրիշներու թարմութիւն բերելու համար:**



Ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ շահի ամբողջ աշխարհը,  
բայց կորսնցնէ իր անձը: [Մարկ. 8. 36]

## ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՅԱՆՁՆՈՒՄՔ ԲՐԻՍՏՈՍԻ

1920 թուականին՝ Ճան Սանկ (John Sung) Չինացի հովիւի վեցերորդ զաւակը, ստացաւ կրթաթոշակ՝ Միացեալ Նահանգներու համալսարաններէն մէկուն մէջ ուսանելու համար: Ան աւարտեց իր ուսումը՝ բարձրագոյն գերազանցութեամբ եւ ստացաւ Դոկտորայի վկայականը: Բայց մինչ իր ուսումը կը շարունակէր, հեռացաւ Աստուծոյ: Ապա՝ 1927-ին գիշեր մը, ան իր կեանքը յանձնեց Քրիստոսի եւ զգաց, որ կոչուած ունի քարոզիչ ըլլալու:

Բազմաթիւ բարձր վարձատրութիւն ստանալու հնարաւորութիւններ կը սպասէին իրեն Չինաստանի մէջ, բայց նաւով տուն վերադառնալու ատեն՝ ան դատապարտուեցաւ Սուրբ Հոգիին կողմէ՝ մէկ կողմ ձգելու իր մարմաջները: Որպէս իր յաճնառութեան խորհրդանիշ՝ ան ծով նետեց իր բոլոր մրցանակները՝ պահելով միայն Դոկտորայի վկայականը, որ պէտք էր տար իր ծնողներուն յարգելու համար գիրենք:

Ճան Սանկ հասկցաւ, թէ ինչ ըսաւ Յիսուս իր աշակերտը դառնալու մասին. «Ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ շահի ամբողջ աշխարհը, բայց կորսնցնէ իր անձը» (Մարկ. 8. 36): Երբ մենք մեզ կ'ուրանանք եւ կը թողունք մեր հին կեանքը՝ հետեւելու Քրիստոսի եւ Անոր առաջնորդութեան (Հմ. 34-35), այդ կը նշանակէ զոհաբերել մեր անձնական ցանկութիւնները եւ նիւթական շահը, որոնք կը շեղեն մեզ Իրեն հետեւելէ:

Յաջորդ տասներկու տարիներուն ընթացքին՝ Ճան ամբողջ սիրտով իրականացուց իր Աստուծոյ կողմէ տրուած առաքելութիւնը՝ քարեզելով աւետարանը հազարաւոր մարդոց՝ ամբողջ Չինաստանի եւ Հարաւ Արեւելեան Ասիայի մէջ: Մենք կրնանք կոչուած չունենալ քարոզիչներ կամ միսիոնարներ ըլլալու, բայց ուր որ ալ Աստուած կանչէ մեզ ծառայելու, իր Հոգիին միջոցով, որ կը գործէ մեր մէջ, լիովին յանձնուինք Իրեն:

**Աղօթք** - Հայր, օգնէ՛ ինձի մէկ կողմ դնել այն ամէնը, որ կը խանգարէ գիւյ լիովին Քեզի յանձնուելու: Ամէն:

**Ի՞նչ բան պէտք է՝ յանձնուելու, որպէսզի իսկապէս հետեւինք Քրիստոսի:** Ի՞նչ են այն մարմաջները, որոնք արգելք կը հանդիսանան մեզի:





Ունայնացուց ինքզինք, իր վրայ առաւ  
ծառայի մը կերպարանքը: [Փիլ. 2. 7]

## ԵՐԵԻԵԼԻ ԽՈՆԱՐՅՈՒԹԻՒՆ

**Խ**աղէն ետք, գոլէճի պապէթպօլի աստղը՝ ետ մնաց, որպէսզի  
օգնէ աշխատողներուն հաւաքելու պարապ գաւաթներն ու  
ակրատներուն թողութէ փաթեթները: Երբ նոր խանդավառեալ  
մը հրապարակեց անոր ըրածներուն տեսանքիզը համացանցի  
վրայ, աւելի քան ութսուն հազար մարդ դիտեց զայն: Մարդ մը  
մեկնաբանեց. «Երիտասարդը ամենախոնարհ տղաներէն մէկն է,  
որու երբեւէ պիտի հանդիպի՞ք ձեր կեանքին մէջ»: Պապէթպօլի  
խաղացողին համար՝ աւելի լաւ կ'ըլլար երթալ խաղընկերներուն  
հետ եւ նշել իր դերը խումբին յաղթանակին մէջ: Փոխարէ՛նը,  
ան կամաւոր ներկայացաւ անշնորհակալ աշխատանքի մը մէջ:

Խոնարհութեան վերջնական ոգին՝ կը տեսնուի Տէր  
Յիսուսի մէջ, որ ձգեց երկինքի Իր բարձր պաշտօնը՝ ստանձնելու  
ծառայի դերը երկրի վրայ (Փիլ. 2. 7): Յիսուս ստիպուած չէ՛ր  
այդ բանը ընելու, բայց Ան պատարաստակամօրէն Ինքզինք  
խոնարհեցուց: Անոր ծառայութիւնը երկրի վրայ կը ներառէր  
ուսուցանել, բժշկել եւ սիրել բոլոր մարդոց. մեռելի եւ  
յարութիւն առնել զանոնք փրկելու համար:

Թէեւ Քրիստոսի օրինակը կրնայ ոգեշնչել մեզ՝ աւելի ու  
գետինը, կամ կերակուր պատրաստելու. իսկ ամենէն  
ազդեցիկը պիտի ըլլայ, երբ տեսնուի ուրիշներու հանդէպ մեր  
ունեցած վերաբերմունքը: Իսկական խոնարհութիւնը՝ ներքին  
յատկութիւն մըն է, որ ո՛չ միայն կը փոխէ մեր գոծողութիւնները,  
այլեւ կը փոխէ այն՝ ինչ որ մեզի համար կարեւոր է: Կը մղէ մեզ  
«ուրիշներ մեզմէ գերազանց համարելու» (Հմ. 3):

Հեղինակ եւ քարզիչ Անտրու Մարրի (Andrew Murray) ըսաւ.  
«Խոնարհութիւնը սրբութեան ծաղկումն ու գեղեցկութիւնն է»: Թող  
մեր կեանքը արտացոլայայա գեղեցկութիւնը: Անոր Հոգիին զօրութեան  
միջոցով՝ մենք կ'արտացոլացնենք Քրիստոսի սիրտը (Հմ. 2-5):

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, շնորհակալ եմ որ Ինքզինքդ խոնարհեցուցիր ինձի համար: Օգնէ՛ ինձի, որ հետեւիմ օրինակիդ ուրիշներու կարիքները՝ իմ կարիքներէս աւելի վեր դասելով: Ամէն:  
**Տէր Յիսուսի խոնարհութեան օրինակը՝ ազդելու է մեր վրայ, մանաւա՛նդ երբ կարգ մը պարագաներու՝ կը փորձուիք հպարտանալ:**



Գնա՛ խաղաղութեամբ, ինչպէս երկուքս ալ Տէրոջ  
անունով երդում ըրինք: [Ա. Թագ. 20. 42]

## ԽՈՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Անգլիոյ՝ Գէյմպրիճի (Cambridge) Քրիստոսի Գոյէճի մատու-  
ռին մէջ յուշարձան մը կայ, որ նուիրուած է տասնեօթերորդ  
դարու երկու բժիշկներուն շան Ֆինչի (John Finch) եւ Թամըս Պէյնզի  
(Thomas Baines): Ծանօթ որպէս «անբաժան ընկերներ», Ֆինչ  
եւ Պէյնզ Համագործակցեցան բժշկական հետազօտութիւններու  
վրայ եւ միասին ճամբորդեցին՝ դիւանագիտական  
ուղեւորութիւններով: Երբ Պէյնզ մեռաւ 1680 թուականին,  
Ֆինչ ողբաց իրենց «Հոգիներու անխախտ ամուսնութիւնը», որ  
տեւեց երեսունվեց տարիներ: Անոնց կապը եղած էր ջերմութեան,  
հաւատարմութեան եւ նուիրուածութեան բարեկամութիւն:

Դաւիթ Թագաւոր եւ Յովնաթան՝ նոյնքան մտերիմ  
ընկերութիւն ունէին: Անոնք իրարու հանդէպ ունէին խոր՝  
փոխադարձ սէր (Ա. Թագ. 20. 41), եւ նոյնիսկ իրարու հանդէպ  
ըրած էին նուիրուածութեան երգումներ (Հմ. 8-17, 42): Անոնց  
բարեկամութիւնը նշուած էր՝ արմատական հաւատարմութեամբ  
(Ա. Թագ. 19. 1-2, 20. 13): Յովնաթան՝ նոյնիսկ զոհեց գահի իր  
իրաւունքը, որպէսզի Դաւիթ կարենար Թագաւոր ըլլալ (20.  
30-31, տես 23. 15-18): Երբ Յովնաթան մեռաւ, Դաւիթ ողբաց՝  
ըսելով որ անոր սէրը իր հանդէպ «կիներուն սէրէն գերազանց  
էր» (Ա. Թագ. 1. 26):

Այսօր մենք կրնանք անյարմար զգալ՝ բարեկամութիւնը  
նմանցնելով ամուսնութեան, բայց գուցէ՝ Ֆինչի եւ Պէյնզի,  
Դաւիթի եւ Յովնաթանի նման բարեկամութիւնները կրնան  
օգնել մեր սեփական բարեկամութիւնները հասցնելու աւելի  
խորութեան: Յիսուս ողջունեց իր բարեկամները, որ իրեն հենուին  
(Յովհ. 13. 23-25), եւ այն ջերմութիւնը, հաւատարմութիւնը եւ  
նուիրուածութիւնը, որ ինք ցոյց կու տայ մեզի, կրնայ ըլլալ խոր  
բարեկամութեան հիմքը, որ մենք կը կառուցանենք միասին:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինծի կառուցանելու  
աւելի խոր եւ մտերմիկ բարեկամութիւն: Ամէն:

**Յիսուսի հանդէպ մեր ունեցած հաւատքով, մենք կրնանք  
մեր բարեկամութիւնները խորացնել՝ աւելի ջերմութիւն,  
հաւատարմութիւն եւ նուիրուածութիւն ցուցաբերելով:**



Մարդ կայ՝ որ իր ստացուածքը  
ցրուելով կ'աւելցնէ: [Առ. 11. 24]

## ՍԻՐՈՎ ՕԺՏՈՒԱԾ

**Ի**ր հարսանիքի օրը՝ Կուէնտըլին Սթալկիս (Gwendolyn Stulgis) հազուեցաւ իր երազած հարսանեկան զգեստը: Յետոյ նուիրեց զանիկա՝ անծանօթի մը: Սթալկիս համոզուած էր՝ որ զգեստը աւելիին արժանի է, քան թէ պահարանին մէջ մնայ փոշի հաւաքելու համար: Ուրիշ հարսեր՝ համաձայնեցան: Այժմ՝ բազմաթիւ կիներ կապուած են իր ընկերական կայքի էջին, նուիրելու ինչպէս նաեւ ստանալու համար հարսանեկան զգեստներ: Ինչպէս տուողներէն մէկը ըսաւ. «Կը յուսամ, որ այս զգեստը կը փոխանցուի՝ հարսէ մը՝ ուրիշ հարսի եւ պարզապէս կը մաշի եւ կը հիննայ իր կեանքի վախճանին՝ այն բոլոր տօնակատարութիւններու պատճառով, որոնք կը կատարուին անով»:

Տալու հոգին՝ իսկապէս կրնայ զգացուիլ որպէս տօնակատարութիւն: Ինչպէս գրուած է. «Մարդ կայ՝ որ իր ստացուածքը ցրուելով կ'աւելցնէ. ու մարդ կայ՝ որ չափազանց կը խնայէ, բայց կարօտութեան կը հասնի: Բարեբար անձը պիտի պարարտանայ, եւ ոռոգողը ինք ալ պիտի ոռոգուի» (Առ. 11. 24-25):

Պօղոս առաքեալ ուսուցանեց այս սկզբունքը Նոր Կտակարանին մէջ: Երբ ան հրաժեշտ կու տար Եփեսոսի հաւատացեալներուն, ան օրհնութիւն տուաւ անոնց (Գործք 20. 32) եւ յիշեցուց առատաձեռնութեան կարեւորութիւնը: Պօղոս մատնանչեց իր աշխատանքային բարոյագիտութիւնը՝ որպէս օրինակ անոնց, որ հետեւին: Ան ըսաւ. «Ամէն բան ցոյց տուի ձեզի, թէ այսպէս պէտք է աշխատիլ եւ օգնել տկարներուն, ու յիշել Տէր Յիսուսի խօսքը՝ որ ինք ըսաւ. 'Աւելի՛ երանելի է տալը՝ քան ստանալը'» (Հմ. 35):

Առատաձեռն ըլլալը կ'արտացոլացնէ Աստուած: «Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ...» (Յովհ. 3. 16): Եկէ՛ք հետեւինք Անոր փառաւոր օրինակին, երբ ան կ'առաջնորդէ մեզ:

**Աղօթք** - Սիրելի Հայր, կը խնդրեմ՝ բա՛ց ձեռքերս, որպէսզի իմ սիրտիս մէջ եղած Զու սէ՛րդ՝ նուիրեմ ուրիշներուն: Ամէն:  
**Եթէ բարի պարգէւներ փոխանցես ուրիշներու, օգնած կ'ըլլանք անոնց:**



Ո՛վ իմ անձս, օրհնաբանե՛ Տէրը, ու մի՛ մոռնար  
անոր բոլոր երախտիքները: [Սաղմ. 103. 2]

## ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԼԵՑՈՒԱԾ

**Ո**ւղեղային ուռու՛ մը ախատաճանաչուելէ ետք, Քրիսթինա Քոսթան (*Christina Costa*) նկատեց, թէ քաղցկեղ դիմազրաւելու մասին խօսակցութիւններու մեծ մասը կ'ըլլան պայքարի լեզուով: Ան պարզեց, որ այս փոխաբերութիւնը շատ արագ սկսաւ յոգնեցնել զինք: Ան «չուզեց տարիէ մը աւելի անցընել պատերազմով՝ իր մարմինին հետ»: Փոխարէնը, նկատեց թէ ամենաօգտակարը՝ երախտագիտութեան զգացում ունենալն էր, իրեն հոգ տանող մասնագէտներու խումբին, ինչպէս նաեւ իր ուղեղին ու մարմինին բուժման համար: Ան փորձարար զգաց, անկախ անկէ՝ թէ որքա՛ն դժուար է պայքարը, երախտագիտութեան գործելակերպը կրնայ օգնել մեզի՝ դիմակայելու ճնշուածութեան եւ «լարել մեր ուղեղը, որպէսզի օգնէ՝ ճկունութիւն ձեռք բերելու»:

Քոսթայի հզօր պատմութիւնը յիշեցուց ինծի, որ երախտագիտութիւն ցուցաբերելը պարզապէս բան մը չէ՛, որ հաւատացեալները կ'ընեն պարտականութիւն սեպելով: Թէեւ ճիշդ է՝ որ Աստուած արժանի է մեր երախտագիտութեան, այդ նաեւ իսկապէս լաւ է մեզի համար: Երբ մենք կը բարձրացնենք մեր սրտերը՝ ըսելու. «Օրհնաբանէ՛ Տէրը, ու մի՛ մոռնար անոր բոլոր երախտիքները» (Սաղմ. 103. 2), մեզի կը յիշեցնէ Աստուծոյ անթիւ ճանապարհներուն մասին - վստահեցնելով մեր ներումը, գործող բուժումը մեր մարմիններուն եւ սիրտերուն մէջ, թոյլ տալով մեզի զգալու «սէր եւ կարեկցութիւն» եւ անհամար «լաւ բաներ»: Անոր ստեղծագործութեան մէջ (Հմ. 3-5):

Թէեւ՝ ո՛չ բոլոր տառապանքները լիարժէք բժշկութիւն կը գտնեն ա՛յս կեանքին մէջ, մեր սիրտերը միշտ կրնան նորոգուիլ երախտագիտութեամբ, քանի որ Աստուծոյ սէրը մեզի հետ է «զարէ զար» (Հմ. 17):

**Աղօթք** - Սիրելի Զա՛յր, շնորհակալ եմ Զեզի, որ միշտ ինծի երախտագիտութեան եւ յոյսի պատճառներ կու տաս: Ամէն:  
**Երախտապարտ սիրտ մը ունենալով՝ բուժում կը զգանք: Եկէ՛ք այսօր շնորհակալ ըլլանք ամէն բանի համար:**



Ո՞չ մէկը դատապարտեց քեզ: [Յովհ. 8. 10]

## ԸՆԴԼԱՅՆՈՒՈՂ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ

**Մ**ակիի (*Maggie*) երիտասարդ ընկերուհին՝ յայտնուեցաւ եկեղեցիին մէջ՝ հագած ցնցիչ հագուստներ: Սակայն ո՛չ մէկը պէտք էր զարմանար. ան պոռնիկ էր: Մակիի այցելուն անհանգիստ շարժեցաւ իր նստած տեղը՝ հերթական քաշելով իր շատ կարճ շրջագեցատը եւ գիտակցաբար ձեռքերը ծալելով իր շուրջ:

Մակին հարցուց. «Ո՛հ, կը պաղի՞ս», հմտութեամբ շեղելով մարդոց ուշադրութիւնը՝ անոր հագած հագուստէն: «Ահա՛, ա՛յն շալս»:

Մակին՝ տասնեակ մարդոց ծանօթացուցած էր Յիսուսը՝ պարզապէս հրաւիրելով զանոնք՝ գալու եկեղեցի եւ օգնելով անոնց, որ հանգիստ զգան: Աւետարանը ունէր փայլելու ձեւ մը, Մակիի գործածած ճարտար մէթոտներուն միջոցով: Ան կը վերաբերէր բոլորին հետ՝ արժանապատուութեամբ:

Երբ կրօնական առաջնորդները՝ շնութեան մէջ բռնուած կին մը բերին Յիսուսի առջեւ ճշգրիտ մեղադրանքով, Քրիստոս ուշադրութիւն չդարձուց անոր, մինչեւ որ հեռացուց անոր մեղադրողները: Երբ անոնք գացին, Ան կրնար նախատել կնոջ: Փոխարէնը, Ան տուաւ երկու պարզ հարցեր. «Ո՛ւր են անոնք»: «Ո՛չ մէկը դատապարտեց քեզ» (Յովհ. 8. 10): Վերջին հարցումին պատասխանը, ի հարկէ՝ բացասական էր: Ուստի Յիսուս անոր տուաւ աւետարանը՝ մէկ կարճ յայտարարութիւնով. «Ուրեմն ես ալ չեմ դատապարտեր քեզ»: Եւ յետոյ տուաւ հրաւէր. «Գնա՛ եւ ասկէ ետք ալ՝ բնա՛ւ մի մեղանչէր» (Հմ. 11):

Երբէ՛ք մի թերգնահատէք մարդոց հանդէպ իսկական սիրոյ ուժը. այն սիրոյ տեսակը, որ կը հրաժարի դատապարտելէ, նոյնիսկ երբ ան արժանապատուութիւն եւ ներում կը հաղորդէ բոլորին:

**Աղօթք** - Ողորմած Աստուա՛ծ, կը խնդրեմ՝ Ներէ ինձի՝ դատողի հոգի մը ունենալու համար եւ օգնէ՛ ցոյց տալու ուրիշներուն՝ Զու սերդ ու շնորհքդ: Ամէն:

**Եթէ տեսնես մէկը՝ որ դատողական հոգի ունի, ինչպէ՛ս կ'արձագանքես: Որո՞ւ կրնաս եկեղեցի հրաւիրել՝ այս շաբաթ՝ եւ ինչպէ՛ս կ'ապահովէս անոր գալը:**





Մենք մեր Աստուծոյն աղօթեցինք, եւ անոսցմէ պաշտպանուելու համար՝ ցերեկ գիշեր անոսց դեմ պահակագունդ մը դրին: [Նե. 4. 9]

## ՀՐԵՇՏԱԿՆԵՐ՝ ՊԱՏԵՐՈՒՆ ՎՐԱՅ

**Ե**րբ Ուոլըս եւ Մէյրի Պրաուն (Wallace and Mary Brown) տեղափոխուեցան Անգլիոյ Պրըմինկհամ (Birmingham) աղքատ շրջանը, ստանձնելու մահամեծ եկեղեցիի մը հովիւի պաշտօնը, անոնք չէին գիտեր՝ որ անօրէններու ամբօխ մը, եկեղեցին եւ անոր կողքին եղող բնակարանը՝ ըրած էր իրենց գլխաւոր կեդրոնը: Պրաուններուն տան պատուհաններուն աղիւսներ նետած էին եւ այրած էին ցանկապատերը. իսկ անոնց երեխաներուն սպառնացած էին: Չարաշահումները շարունակուեցան երկար ամիսներ. ոստիկանները չէին յաջողած կասեցնել զայն:

Նէեմիայի գիրքը կը պատմէ, թէ ինչպէ՛ս Իսրայէլացիները վերակառուցանեցին Երուսաղէմի փլատակ պարիսպները: Երբ տեղացիները խնդիրներ յարուցանեցին «անհանգստութիւն առաջացնելու»՝ սպառնալով անոնց բռնութեամբ (Նե. 4. 8), Իսրայէլացիները «աղօթեցին ... որ Աստուած անոնց դէմ պահակագունդ մը դնէ» (հմ. 9): Զգալով, որ Աստուած օգտագործեց՝ ա՛յս հատուածը իրենց ուղղելու համար, Պրաունները, անոնց երեխաները եւ մի քանի եկեղեցիի անդամներ շրջեցան իրենց եկեղեցիի պատերուն շուրջ՝ աղօթելով, որ Ան հրեշտակներ տեղադրէ, որպէս պահակներ՝ պաշտպանելու իրենց: Ամբօխը ծաղրեց, բայց յաջորդ օրը յայտնուեցաւ անոնց՝ միայն կէսը: Յաջորդ օրը՝ միայն հինգ հոգի էին, իսկ յաջորդ օրը ո՛չ մէկը եկաւ: Աւելի ուշ՝ Պրաունները լսեցին, որ ամբօխը հրաժարած է՝ մարդոցմէ ահաբեկուելուն պատճառով:

Աղօթքին այս հրաշալի պատասխանը՝ մեր սեփական պաշտպանութեան բանաձեւն է՝, բայց կը յիշեցնէ, որ Աստուծոյ գործին դէմ հակադրութիւնը պիտի գայ եւ պէտք է պայքարիլ աղօթքի գէնքով: «Յիշեցէ՛ք Տէրը որ մեծ ու ահեղ է» ըսաւ Նէեմիա Իսրայէլացիներուն (հմ. 14): Ան նոյնիսկ կրնայ ազատ արձակել՝ բռնակալ սիրտերը:

**Աղօթք** - Հիանալի Աստուա՛ծ, պաշտպանէ ժողովուրդդ՝ Ըու հզօր հրեշտակներով եւ ազատ արձակէ թշնամիներուդ սիրտերը: Ամէն:  
**Ի՞նչ պիտի ընէիր՝ եթէ Պրաուններուն իրավիճակին մէջ ըլլայիր:**  
**Ո՞վ պէտք ունի քու աղօթներուդ՝ ազատագրուելու համար:**



Հաւատքով ... կրակի զօրութիւն մարեցին, սուրի բերանէ խուսափեցան, տկարութենէ զօրացան, պատերազմի մէջ ուժեղացան, օտարներու բանակները ընկճեցին: [Եբ. 11. 34]

## ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՒԱՏՔԻ ՍՈՒՐԲ ԿՏԱԿԸ

**Ե**րբ սիրելի մը մեռնի, իր հարազատներուն առաջին գործը կ'ըլլայ ծրագրել պատուաբեր յուզարկաւորութիւն մը: Կը պատրաստեն ննջեցեալին կենսագրականը, մատնանշելով անոր մատուցած ծառայութիւններն ու արձանգրած յաջողութիւնները: Կը գետեղեն գեղեցիկ շիրիմնաքար մը անոր գերեզմանին վրայ, հոն արձանգրելով պերճիմաստ գովաբանական խօսքեր:

Սակայն մեր Վարդանանք հերոսները, որոնք ինկան Աւարայրի ճակատամարտին՝ 451-ին, չունեցան ո՛չ պատշաճ յուզարկաւորութիւն, ո՛չ ալ արժանի եղան շիրիմներու: Անոնք ինկան պատերազմի ճակատին վրայ՝ «Վասն Հայրենեաց եւ վասն Հաւատքի»: Այսօր ի՞նչ կարելի է ըսել անոնց մասին: Ինչպէ՞ս գովանբանել եւ փառաբանել զիրենք: Եւ թէ ի՞նչ է անոնց թուղուցած կտակը մեզի:

Վարդանանց հոգին մեզի կը յիշեցնէ թէ անոնք մեռան ի սէր Աստուծոյ եւ Հայրենիքին: Եբրայեցիներու նամակին հեղինակին յիշած հաւատքի հերոսներուն նման, անոնք ալ «հաւատքով կրակի զօրութիւն մարեցին, սուրի բերանէ խուսափեցան, տկարութենէ զօրացան, պատերազմի մէջ ուժեղացան, օտարներու բանակները ընկճեցին» (Հմ. 34): Անոնք պատրաստ էին անձնագոհութեան, իրենց ունեցած հաւատքին, համոզումներուն եւ սուրբ սկզբունքներուն համար: Անոնք թողուցին տիպա՛ր օրինակ մը իրենց յաջորդ սերունդներուն ու փոխանցեցին հաւատքի սուրբ կտակ մը:

Անոնց կտակը՝ հաւատարմութեան, հաւատքի եւ միասնականութեան կտակ մըն էր: Այս է աւանդը՝ Վարդանանք հերոս նահատակներուն:

**Աղօթք** - Սիրելի Հայր, մինչ կը յարգենք յիշատակը Վարդանանք հերոսներուն, յիշեցո՛ւր մեզի՝ որ ընդունիկսք նաեւ անոնց

հաւատքի կտակն ու աւանդը: Ամեն:

**Սուրբ կտակներու մասին խօսիլն ու նշելը լա՛ւ է, սակայն աւելի կարեւոր է զայն պահելը՝ նոյնանման հզօր ու անսակարկելի հաւատքով խոնարհիլ Աստուծոյ առջեւ:**





Ո՛չ մէկ պարտք ունեցեք ոեւե մէկուն,  
բացի զիրար սիրելէ: [Հոռոմ. 13. 8]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵԾ ՍԻՐՈՅՆ ԾԻՐԸ

**Ո**րպէս նորահաւատ Յիսուսի, երեսուն տարեկանին՝ շատ հարցեր ունէի իմ կեանքս Իրեն յանձնելէ ետք: Երբ սկսայ կարդալ Աստուածաշունչը, աւելի շատ հարցեր ունեցայ: Դիմեցի ընկերուհիս ու հարցուցի: «Ինչպէ՞ս կարելի է հնազանդիլ Աստուծոյ տուած բոլոր պատուէներուն: Տակաւին այս առտու շառաչեցի ամուսինիս վրայ»:

Ան ըսաւ. «Պարզապէ՛ս՝ շարունակէ կարդալ Աստուածաշունչդ եւ խնդրէ Հոգիէն, որ օգնէ քեզի սիրելու այնպէ՛ս, ինչպէ՛ս կը սիրէ մեզ»:

Աւելի քան քսան տարի ապրելէ ետք՝ որպէս Աստուծոյ զաւակ, այդ պարզ բայց խոր ճշմարտութիւնը տակաւին կ'օգնէ ինծի՝ ընդունելու Անոր մեծ սիրոյ ծիրին երեք քայլերը: Նախ՝ Պօղոս առաքեալ հաստատեց, որ սէրը առանցքային է Յիսուսի հաւատացողներուն կեանքին մէջ: Երկրորդ, շարունակելով վճարել «իրար սիրելու պարտքը», Քրիստոսի հետեւողները հնազանդութեամբ կը քայեն, «որովհետեւ ո՛վ որ կը սիրէ ընկերը՝ գործադրած կ'ըլլայ Օրէնքը» (Հռոմ. 13. 8): Ի վերջոյ, մենք կը կատարենք օրէնքը, քանի որ «սէրը ո՛չ մէկ չարիք կը գործէ իր ընկերին. ուրեմն սէ՛րն է Օրէնքին գործադրութիւնը» (Հմ. 10):

Երբ կը զգանք մեզի հանդէպ Աստուծոյ սիրոյ խորհուրդը, որ լաւագոյն դրսեւորումն է՝ խաչի վրայ Քրիստոսի զոհաբերութեան միջոցով, մենք կրնանք երախտագիտութեամբ արձագանքել: Յիսուսի հանդէպ մեր երախտապարտ նուիրուածութիւնը կը տանի մեզի ուրիշները սիրելու՝ մեր խօսքերով, արարքներով եւ վերաբերմունքով: Իսկական սէրը կը բխի միակ ճշմարիտ Աստուծմէ, որ սէր է (Ա. Յովհ. 4. 16, 19):

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ, օգնէ ինծի՝ հաւատալու, որ Դուն կը սիրե՛ս զիս, որպէսզի՝ ես ալ իմ կարգիս՝ սիրե՛մ ուրիշները՝ Զու յորդառատ սիրով, որ ունիս ինծի հանդէպ: Ամէն:  
**Ե՛րբ պայքարած ես՝ Յիսուսի կողմէ սիրուած զգալու համար կամ սիրել՝ այնպէս, ինչպէս Ան կը սիրէ: Զրիստոս կը սիրէ մեզ՝ ամբողջութեամբ եւ անվերապահ, ուստի մե՛նք ալ սիրելու եւնք մեր շուրջիները:**



Մանկութենէդ ի վեր գիտես Սուրբ Գիրքը, որոնք կրնան իմաստուն ընել քեզ՝ փրկուելու Զրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքով: [Բ. Տիմ. 3. 15]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՓՈԽԱՎԵՐՊՈՂ ԱՇԽԱՐՀ

**Ե**րբ Գրիսդին (*Kristin*) ուզեց գնել յատուկ գիրք մը՝ Զիօ-Հուի (*Xio-Hu*), իր Զինացի ամուսինին համար, միակ գիրքը՝ որ գտաւ՝ Աստուածաշունչ էր: Թէեւ իրենցմէ ո՛չ մէկը կը հաւատար Քրիստոսի, սակայն՝ կը յուսար, որ Զիօ-Հու կը գնահատէ նուէրը: Աստուածաշունչի առաջին հայեացքէն՝ ան զայրացաւ, բայց ի վերջոյ վերցուց զայն: Ու երբ կը կարդար, համոզուեցաւ անոր ճշմարտութիւններով: Այս չնախատեսուած զարգացումէն վրդովուած՝ Գրիսդին սկաւ կարդալ Սուրբ գրութիւնները՝ Զու-Հուին հերքելու համար: Ի զարմանք իրեն, ի՛նք եւս հաւատաց Յիսուսի, համոզուելով իր կարգացածներէն:

Պօղոս առաքեալ գիտէր Սուրբ Գիրքին փոխակերպող բնոյթը: Հռոմի բանտէն գրելով, ան յորդորեց Տիմոթէոսի, որու խրատած էր նախապէս. «Դուն հաստատ կեցիր այն բաներուն մէջ, որ սորվեցար ու հաւատացիր: Նաեւ մանկութենէդ ի վեր գիտես Սուրբ Գիրքը» (Բ. Տիմ. 3. 14-15): Յունարէն բնագիրին մէջ՝ «չարունակել» բառը ունի նաեւ «մնալ» բառին իմաստը, ինչ որ Աստուածաշունչը կը բացայատէ: Գիտնալով որ Տիմոթէոս պիտի դիմագրաւէ հակառակութիւններ ու հալածանք, Պօղոս կը ցանկար՝ որ ան ուժ եւ իմաստութիւն գտնէ Աստուածաշունչին մէջ, քանի որ ժամանակ կը տրամադրէր՝ անոր մէջ եղած ճշմարտութիւններուն մասին խորհելով:

Աստուած՝ Իր Հոգիին միջոցով՝ կեանքի կը բերէ Սուրբ Գիրքը: Երբ մենք անոր մէջ բնակինք, կը փոխէ մեզ՝ աւելի իրեն նմանելու. ինչպէս ըրաւ Զիօ-Հուի եւ Գրիսդինի պարագային:

**Աղօթք** - Սուրբ Խօսքին հեղինակ, շնորհակալ եմ՝ որ ոգեշնչեցիր որ Աստուածաշունչը ըլլայ՝ այդպիսի կեանք տուող գիրք մը: Թո՛ղ որ Զեզի յանձնուիմ՝ մինչ կը կարդամ Սուրբ Գիրքը: Ամէն:  
**Երբ ժամանակ կը յատկացնենք Խօսքը կարդալու եւ խորհրդա-ծելու անոր մասին, կը տեսնենք փոխակերպում մեր մէջ:**



Ասոր համար հեթանոսներուն մէջ քեզ պիտի  
ներբողեմ, ո՛վ Տէր, եւ քու անունիդ սաղմոս պիտի  
երգեմ: [Բ. Թագ. 22. 50]

## ՏԵՍԱԾ ԵՄ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ

**Ի**ր պատմական եօթանասուն տարիներու ընթացքին՝ որպէս Բրիտանիայի ղեկավար, Թագուհի Էլիզապէթ Բ.՝ Հաստատեց իր մասին գրուած միայն մէկ կենսագրութիւն՝ անձնական նախաբանով. «Ծառայ Թագուհին եւ Թագաւորը՝ որու ինք կը Ծառայէ»: Գիրքը՝ որ հրատարակուած է իր ինիստներորդ տարեդարձին առիթով, կը պատմէ՝ թէ ինչպէ՞ս իր հաւատքը առաջնորդած է զինք, ծառայելու իր երկրին: Նախաբանին մէջ՝ Էլիզապէթ Թագուհին երախտագիտութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք աղօթած են իրեն համար եւ շնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ՝ իր անսասան սիրոյն համար: Ապա կ'եզրափակէ ըսելով. «Ես իսկապէս տեսած եմ Անոր հաւատարմութիւնը»:

Էլիզապէթ Թագուհիին՝ այս պարզ յայտարարութիւնը կը կրկնէ՝ պատմութեան ընթացքին տղամարդոց ու կիներու վկայութիւնները, որոնք իրենց կեանքին մէջ զգացած են Աստուծոյ անձնական ու հաւատարիմ հոգատարութիւնը: Ճիշդ այս նիւթը կը գտնենք գեղեցիկ երգի մը մէջ, որ գրեց Դաւիթ Թագաւորը, երբ ան անբարեբաւ իր կեանքին: Արձանագրուած երգը՝ Բ. Թագաւորաց 22-ին մէջ, կը խօսի Աստուծոյ հաւատարմութեան մասին պաշտպանելով Դաւիթին, իր կարիքները հոգալով եւ նոյնիսկ ազատելով զինք, երբ իր կեանքը վտանգի տակ էր (Հմ. 3-4, 44): Որպէս պատասխան Աստուծոյ հաւատարմութեան՝ իր ունեցած փորձառութեան, Դաւիթ գրեց. «Քու անունիդ սաղմոս պիտի երգեմ» (Հմ. 50):

Երբ մենք կը գիտակցինք, որ ո՛չ թէ մեր սեփական կարողութիւններն են որ մեզ կը տանին կեանքի, այլ սիրող Հօր մը հաւատարիմ հոգատարութիւնը, մենք մղումը կ'ունենանք երախտագիտութիւն եւ գովասանք ընելու:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, այնքան երախտապարտ եմ, որ կեանքի իւրաքանչիւր եղանակին՝ տիրութեան եւ ուրախութեան, ես տեսած եմ Զո՛ւ հաւատարմութիւնդ: Ամէն:

**Եթէ տեսած ես Աստուծոյ հաւատարմութիւնը՝ քու կեանքիդ մէջ, արտայայտե՛ք ո՛ւ երախտագիտութիւնդ Անոր:**



Բայց ես կը յայտարարեմ ձեզի. «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, ... եւ աղօթեցէ՛ք անոնց համար՝ որ կը հալածեն ձեզ: [Մատթ. 5. 44]

## ՍԻՐԵ՛Լ ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

**Ե**րբ Ամերիկայի քաղաքացիական պատերազմը շատ դառն զգացումներ կ'առաջացնէր, Ապրահամ Լինքըն (*Abraham Lincoln*) նպատակաւարմար սեպեց ազնիւ խօսք մը ըսելու՝ Հարաւին մասին: Յնցուած ներկայ մը հարցո՛ւց, թէ ինչպէ՞ս ան կրնար ընել այդ մէկը: Լինքըն պատասխանեց. «Տիկին, չե՞մ ոչնչացներ թշնամիներս, երբ գիրենք իմ ընկերս կը դարձնեմ»: Մէկ դար ետք անդրադառնալով այդ խօսքերուն՝ Մարթին Լութըր Գինկ Կրտսեր՝ մեկնաբանեց. «Սա՛ է փրկագնող սիրոյ՝ ուժը»:

Ակնարկելով Քրիստոսի ըրած աշակերտներուն կոչին՝ սիրելու իրենց թշնամիները, Գինկ նայեցաւ Յիսուսի ուսուցմունքներուն: Ան նշեց, որ թէեւ հաւատացեալները կրնան պայքարիլ սիրելու անոնց, որոնք կը հալածել գիրենք, այս սէրը կ'աճի «Աստուծոյ՝ հետեւողական եւ ամբողջական յանձնումէն»: Շարունակեց Գինկ ու ըսաւ. «Երբ մենք այսպէս սիրենք, մենք կը ճանչնանք Աստուած եւ կը զգանք Անոր սրբութեան գեղեցիկութիւնը»:

Գինկ վերագրեց Լեււան Քարոզը, ուր Յիսուս ըսաւ. «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, ...եւ աղօթեցէ՛ք անոնց համար որ կը հալածեն ձեզ, որպէսզի ըլլաք ձեր երկնաւոր Հօր որդիները» (Մատթ. 5. 44-45): Յիսուս խորհուրդ տուաւ այդ օրերուն ընդունուած՝ սիրել միայն դրացիներուն եւ ատել թշնամիները սովորական իմաստութեան դէմ: Փոխարէնը, Հայր Աստուած իր զաւակներուն ուժ կու տայ՝ սիրելու անոնց, որոնք կը հակառակին իրենց:

Կարելի է մտածել, որ անհնար է սիրել մեր թշնամիները, բայց երբ մենք Աստուծոյ կը դիմենք օգնութեան համար, Ան կը պատասխանէ մեր աղօթքներուն: Ան քաջութիւն ալ կու տայ ընդունելու այս արմատական կիրառութիւնը, քանի որ ինչպէս ըսաւ Յիսուս. «Ամէն բան կարելի է Աստուծոյ քով» (19. 26):

**Աղօթք** - Սիրող Աստուա՛ծ, գիս եւ ուրիշները, որոնք կը վիրաւորեն գիս, ստեղծեցիր Զու պատկերով: Օգնէ՛ ինձի որ տեսնեմ անոնց՝ այնպէ՛ս, ինչպէս Դուս: Ամէն:

**Ո՞վ է թշնամիդ:** Եթէ հակասական կը տեսնես՝ հակառակորդներ սիրելու հարցը, ինչպէ՛ս կրնաս այդ զգացումներդ յանձնել Աստուծոյ:



Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես են, ձիւնի պէս պիտի ճերմկնան: [Ես. 1. 18]

## ՅԻՍՈՒՍԻ ԱՐԻԻՆԸ

**Կ**արմիր գոյնը՝ միշտ չէ, որ բնականօրէն կը յայտնուի մեր պատարաստած բաներուն մէջ: Ինչպէ՞ս կրնանք խնձորի վար գոյնը դնել՝ շապիկի կամ շրթունքի ներկին մէջ: Հին օրերուն կարմիր գոյնը կը պատրաստուէր կաւէն կամ կարմիր ժայռերէն: 1400-ական թուականներուն Ազթէքները (Aztecs) ստեղծած են ձեւ մը, գործածելու որդան կարմիրի միջատներ՝ կարմիր գոյն պատրաստելու համար: Այսօր այդ նոյն փոքրիկ միջատները աշխարհին կարմիր գոյնը կը մատակարարեն:

Աստուածաշունչին մէջ՝ կարմիր գոյնը կը նշանակէ թագաւորութիւն, ինչպէս նաեւ կը նշանակէ մեղք եւ ամօթ: Այդ նաեւ արիւնի գոյնն է: Երբ գինուորները «մերկացնելով զայն՝ հագցուցին անոր որդան կարմիր վերարկու մը» (Մատթ. 27. 28), այս երեք խորհրդանիշները միաձուլուեցան՝ կարմիրի մէկ սրտաճմլիկ պատկերի մէջ. Կը ծաղրէին զինք՝ որպէս ապագայ արքայ, պատած էին ամօթի վերարկուով եւ հագցուցած էին արյան գոյնով, որ շուտով պիտի թափէր: Բայց Եսայիի խօսքերը կը կանխագուշակեն այս բոսորած Յիսուսի խոստումը, որ կ'ազատէ մեզ ներկուած կարմիր բիծերէն. «Եթէ ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս են, ձիւնի պէս պիտի ճերմկնան» (1. 18):

Եւս մէկ բան կարմիր ներկի համար՝ օգտագործուած որդան կարմիր միջատներուն մասին. անոնք իսկութեան մէջ՝ արտաքնապէս կաթնային սպիտակ են: Միայն ճգմուելով՝ անոնք դուրս կը ձգեն իրենց կարմիր արիւնը: Այդ փոքրիկ փաստը՝ մեզի համար կը կրկնէ Եսայիի միւս խօսքերը. «Ան մեր անօրէնութիւններուն համար ճգմուեցաւ» (Ես. 53. 5):

Յիսուս որ մեղք չէր գիտեր, հո՞ս է փրկելու մեզ, որ մեղքով կարմիր գոյնով ծածկուած ենք: Կը տեսնես՝ Իր Զախճախիչ մահուան ատեն, Յիսուս համբերեց շատ կարմիր գոյներու, որպէսզի մենք կարենանք սպիտակ ըլլալ, ինչպէս ձիւնը:

**Աղօթք** - Սիրելի Զայր, շնորհակալութիւն Զեզի՝ Զու Որդիիդ՝

Յիսուսի եւ Անոր թափած փրկարար շնոհքին համար: Ամէն:

**Մեղքը, կարմիր գոյնի նման՝ մեր կեանքերը կը լեցնէ բիծերով. սակայն Յիսուս կրնայ վերականգնել մեզ ու դարձեալ մաքրել:**



Եթե սեր չունենամ, ես օգուտ մը չեմ ընել: [Ա. Կորնթ. 13. 3]

## ՍԻՐՈ՛Վ ԴԻԴՈՒԱԾ

**Ճ**իմ եւ Լանիիտա (*Jim and Laneeda*) գոլէճի օրերէն սիրելիներ էին: Անոնք ամուսնացան ու կեանքը՝ երկար տարիներ երջանիկ էին: Յետոյ Լանիիտան սկսաւ տարօրինակ վարուիլ՝ մոլորուելով եւ մոռնալով իր ժամադրութիւնները: Ան ախտորոշուեցաւ վաղաժամ Ալզայմերս՝ մոռացութեան հիւանդութիւնով՝ քառասուն ութ տարեկանին: Տասնամեակ մը ծառայելէ ետք, որպէս հիմնական խնամակալ՝ Ճիմ կրցաւ ըսել. «Ալզայմերսը՝ ինծի հնարաւորութիւնը տուած է սիրելու եւ ծառայելու կնոջս՝ այնպիսի ձեւով, որոնք աներեւակայելի էին, երբ ես ըսի. «Կ'ընեմ»:

Մինչ կը բացատրէր Սուրբ Հոգիին պարգեւները՝ Պօղոս առաքեալ շատ գրեց սիրոյ առաքինութեան մասին (Ա. Կորնթ. 13): Ան հակադրեց սովորական ծառայութիւններու գործողութիւնները՝ սիրալիւ սրտէն բխողներուն հետ: Մարդոց եւ հրեշտակներու հօգը լեզուով խօսիլը լաւ է, Պօղոս գրեց, բայց առանց սիրոյ՝ այդ նման է անիմաստ աղմուկի (Հմ. 1): «Եթէ սնուցանեմ աղքատները, ... ու մարմինս այրուելու ընծայեմ, բայց սէր չունենամ, ես օգուտ մը չեմ ունենար» (Հմ. 3): Ի վերջոյ Պօղոս ըսաւ. «Մէ'ն է ասոնց մեծագոյնը» (Հմ. 13):

Ճիմի՝ սիրոյ եւ ծառայութեան հասկացողութիւնը խորացաւ, երբ ան հոգ տարաւ իր կնոջ: Միայն խոր եւ մշտական սէրը կրնար անոր ուժ տալ ամէ'ն օր աջակցելու անոր: Ի վերջոյ միակ տեղը, ուր մենք կը տեսնենք այս զոհաբերական սէրը կատարեալ կերպով ձեւաւորուած, Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած սիրոյն մէջ է, որ ստիպեց զինք՝ զրկելու Յիսուսը մեռնելու մեր մեղքերուն համար (Յովհ. 3. 16): Այդ զոհաբերութեան արարքը, որ դրդուած է սիրով, ընդմիշտ փոխած է մեր աշխարհը

**Աղօթք** - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ՝ որ կը սիրես զիս: Թո'ղ այսօր իմ գործողութիւններս բխին՝ սիրող սիրտէ մը: Ամէն:

**Առանց սիրոյ՝ կարելի չէ՝ ծառայութիւն մատուցանել: Աստուծոյ եւ ուրիշներու հանդէպ մեր ունեցած սերը միան՝ կրնայ ներշնչել մեզ գործելու:**



Խոնարհութեան եւ Տէրոջ վախի՛ն վախճանը՝  
հարստութիւն, փառք ու կեանք է: [Առ. 22. 4]

## ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ՝ ՀՊԱՐՏԱՆՔԸ

**Շ**ատ ուսուցիչներու նման, *Քէրրի (Carrie)* անթիւ ժամեր կը յատկացնէ իր ասպարէզին, յաճախ գնահատելով գրուած թուղթեր եւ կը շփուի աշակերտներու եւ ծնողներու հետ՝ մինչեւ ուշ երեկոյներ: Զանքը պահելու համար՝ կ'ապաւինի իր գործընկերներուն՝ ընկերակցութեան եւ գործնական օգնութեան: Անոր դժուար գործը հեշտ կ'ըլլայ համագործակցութեան միջոցով: Մանկավարժներու վերջին ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, որ համագործակցութեան օգուտը կը մեծնայ, երբ անոնք, որոնց հետ մենք կ'աշխատինք, խոնարհութիւն կը ցուցաբերեն: Երբ գործընկերները պատրաստ են ընդունելու իրենց տկար կողմերը, միւսները ապահով կը զգան՝ իրենց գիտելիքները իրարու հետ բաժնեկցելու արդիւնաւոր ձեւով օգնելու խումբի բոլոր անդամներուն:

Աստուածաշունչը կը սորվեցնէ խոնարհութեան կարեւորութիւնը՝ աւելի քան ուժեղացուած համագործակցութիւնը: «Տէրոջմէ վախնալը»՝ Աստուծոյ գեղեցկութեան, զօրութեան եւ վեհութեան համեմատութեամբ ճիշդ հասկնալով, թէ ո՞վ ենք մենք, կը բերենք «Հարստութիւն, փառք եւ կեանք» (Առ. 22. 4): Խոնարհութիւնը՝ մեզի կը տանի դէպի համայնքին մէջ ապրելու՝ այնպիսի ձեւով, որ արգասաբեր է Աստուծոյ տնտեսութեան մէջ, եւ ո՛չ միայն աշխարհի, քանի որ մենք կը ձգտինք օգուտ քաղելու մեր ընկերակից պատկերակիրներէն:

Մենք Աստուծմէ չենք վախնար, որպէս՝ մեզի համար «Հարստութիւն, փառք եւ կեանք» ձեռք բերելու միջոց, այդ ամենեւին իսկական խոնարհութիւն չըլլար: Փոխարէնը, մենք կ'ընդօրինակենք Յիսուսի, ան որ «ունայնացուց ինքզինք, իր վրայ առաւ ծառայի մը կերպարանքը» (Փիլ. 2. 7), որպէսզի մենք կարենանք դառնալ մարմինի մը անդամները, որ խոնարհաբար կը համագործակցի՝ Անոր գործը կատարելու, Իրեն փառք բերելու կեանքի պատգամը տալու մեզ շրջապատող աշխարհին:

**Աղօթք** - Տէր Յիսուս, կը յանձնեմ իմ հպարտութիւնս Զեզի: Ամէն:  
Դուն ինչպէս կը հասկնաս խոնարհութիւնը: Տեսա՞ծ ես, թէ ինչ որ մէկու մը խոնարհութիւնը օգուտ կը բերէ ուրիշներուն:



Ո՛չ մեկը ունի աւելի մեծ սեր, քան այն՝ երբ մեկը կ'ընծայէ իր անձը իր բարեկամներուն համար: [Յովհ. 15. 13]

## ՅԻՍՈՒՄԻ ՊԷՍ ՍԻՐԵԼ

«*Բոլորը զինք կը սիրէին*» խօսքերը, կը գործածուէին նկարագրելու համար Իտալիայի Քասնիկօ (Casnigo) քաղաքէն Տան Կուիսէթ Դէրարտէլին (Don Guiseppe Berardelli): Տան սիրելի մարդ մըն էր, որ կը շրջէր քաղաքին մէջ իր հին շարժակաւոր հեծելանիւով եւ միշտ կը բարեւէր «խաղաղութիւն եւ բարիք» ողջոյնով: Ան անխոնջ կ'աշխատէր՝ ուրիշներու բարօրութեան համար: Բայց՝ իր կեանքի վերջին տարիներուն, ան առողջական խնդիրներ ունէր, որոնք աւելի վատթարացան, երբ ան վարակուեցաւ պսակաւոր ժահրով ու իր համայնքը՝ շնչարութեան գործիք մը գնեց իրեն համար: Սակայն՝ երբ իր վիճակը ծանրացաւ, ան հրաժարեցաւ գործիքէն՝ փոխարէնը ընտրեց տրամադել զանիկա՝ աւելի երիտասարդ հիւանդի մը, որ անոր կարիքը ունէր: Անոր ըրած այս արարքը՝ չգարմացուց ոեւէ մէկուն, քանի որ այդ պարզապէս մարդու մը նկարագիրին մէջ էր, որ սիրուած ու հիացուած էր ուրիշները սիրելուն համար:

Սիրուած՝ սիրելուն համար. այս էր պատգամը, որ Յովհաննէս առաքեալ կը շարունակէ հնչեցնել իր գրած աւետարանին մէջ: Սիրուած ըլլալ եւ ուրիշները սիրելը, նման է մատուռի զանգակին, որ կը հնչէ՝ գիշեր-ցերեկ՝ անկախ եղանակէն: Եւ Յովհաննու 15-ին մէջ անոնք որոշ չափով կը հասնին իրենց գազաթնակէտին, քանի որ Յովհաննէս կը բացայայտէ, որ ո՛չ բոլորին կողմէ սիրուած ըլլալը, այլ բոլորը սիրելը՝ մեծագոյն սէրն է. «երբ մէկը կ'ընծայէ իր անձը իր բարեկամներուն համար» (Հմ. 13):

Ձոհաբերական սիրոյ մարդկային օրինակները՝ միշտ կը ոգեշնչեն մեզ: Սակայն՝ անոնք գունատ են Աստուծոյ մեծ սիրոյն համեմատ: Սակայն մի՛ կորսնցնէք տրուած մարտահրաւէրը, քանի որ Տէր Յիսուս կը պատուիրէ. «Սիրէք զիրար, ինչպէս ես սիրեցի ձեզ» (Հմ. 12): Այո, սիրել բոլորին:

**Աղօթք** - Յիսուս, կը խնդրե՛մ, օգնէ ինծի՝ սիրել այնպէ՛ս, ինչպէ՛ս Դուն սիրեցիր: Ամէն:

Սիրուած բոլորէն ու բոլորը սիրել: Ծա՛տ դիրքին է շփոթիլ: Ինչո՞ւ եւ ինչո՞ւ ո՛չ: Ինչի՞ նման պիտի ըլլայ՝ կեանքդ գոհելը՝ բարեկամիդ համար:





Իմ զօրութիւնս կ'իրագործուի տկարութեան մէջ: [Բ. Կորնթ. 12. 9]

## ՅԻՍՈՒՍՈՎ ԱԾԻԼ

**Ո**րպէս երեխայ, կը տեսնէի՜ն մեծերը՝ իմաստուն եւ ձախողելու՝ անկարող: Կը խորհէի թէ՛ «Անոնք միշտ գիտեն թէ ինչ ընելու են: Օր մը, երբ ես մեծնամ՝ ես ալ միշտ պիտի գիտնամ՝ թէ ի՞նչ ընելու եմ»: Լա՛ւ. «Օր մը»՝ն եկաւ շատ տարիներ առաջ, եւ «ամէն»ը ինծի սորվեցուցած է՝ այն, որ շատ անգամ, ես տակաւին չեմ գիտեր թէ ի՞նչ ընելու եմ: Անկախ անկէ, որ կա՛յ հիւանդութիւն, աշխատանքի խնդիրներ, կամ յարաբերութիւններու բախումներ, որոնք կողոպտած են զիս՝ անձնական վերահսկութեան եւ ուժի պատրանքէն, ինծի պարզապէս կը ձգեն մէկ տարբերակ՝ փակել աչքերս ու փսփսալ. «Տէ՛ր, օգնէ՛ ինծի: Չեմ գիտեր՝ ի՞նչ ընելու եմ»:

Պօղոս առաքեալ՝ հասկցաւ անօգնականութեան այս զգացումը: Անոր կեանքի «փուշ»ը, որ շատ հաւանաբար՝ Ֆիզիքական հիւանդութիւն մըն էր, իրեն յուսախաբուութիւն եւ ցաւ պատճառեց: Սակայն՝ այս փուշին միջոցով, Պօղոս զգաց Աստուծոյ սէրը, խոստումները եւ օրհնութիւնները՝ բաւարար իրեն համար՝ որպէսզի յարատեւէ եւ յաղթահարէ իր դժուարութիւններուն (Բ. Կորնթ. 12. 9): Ան սորվեցաւ, որ անձնական տկարութիւնն ու անօգնականութիւնը չեն նշանակեր պարտութիւն: Երբ վստահութեամբ յանձնուեցաւ Աստուծոյ, անոնք գործիքներ դարձան իրեն համար՝ գործելու այս իրավիճակներուն մէջ եւ միջոցով (Հմ. 9-10):

Մեր աճած ըլլալը չի՝ նշանակէր, որ մենք ամէն ինչ գիտենք: Ի հարկէ, տարիքի հետ մենք աւելի իմաստուն կը դառնանք, բայց՝ ի վերջոյ, մեր տկարութիւնները յաճախ կը բացայայտեն, թէ որքա՛ն իրապէս անզօր ենք մենք: Մեր իսկական զօրութիւնը՝ Քրիստոսի մէջ է. «Որովհետեւ երբ տկար եմ՝ ա՛յն ատեն զօրաւոր եմ» (Հմ. 10): Իսկապէ՛ս «աճիլ» կը նշանակէ՝ գիտնալ, վստահիլ եւ հնազանդիլ այն զօրութեան, որ կու գայ, երբ կը գիտակցինք, որ Աստուծոյ օգնութեան կարիքը ունինք:

**Աղօթք** - Երկնաւոր Զա՛յր, շնորհակալ եմ Զեզի, իմ օգնութիւնս եւ ուժս ըլլալուդ համար: Ամէն:

**Կեանքի մէջ մեր դիմագրաւած փորձութիւնները՝ կը ստիպեն մեզի՝ գիտակցելու մեր անօգնական ըլլալուն: Ո՛ւստի՝ կարեւոր է վստահիլ Աստուծոյ առաջնորդութեան:**

Լեռներուն ծնելէն առաջ ... դարե դար՝ դուն

Աստուած ես: [Սաղմ. 90. 2]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՐՈՅ ՁԵՌՔԵՐՈՒՆ ՄԵՋ

**Ա**ռողջական՝ այլ մէկ անյաջողութենէ ետք, վախցա՛յ անծանօթէն եւ անկառավարելիէն: Օր մը, երբ կը կարդային Ֆօրպզ (Forbes) ամսագիրի յօդուած մը, իմացայ որ գիտնականները ուսումնասիրեցին «Երկիր մոլորակին թաւալումին արագութեան» աճը եւ յայտարարեցի, որ մոլորակը «տատանուած է» եւ «աւելի արագ կը թաւալի»: Անոնք ըսին, որ «կրնանք պահանջել երբեւէ առաջին՝ կաթիլ երկվայրկեանը՝ եւ պաշտօնապէս վերցնել համաշխարհային ժամանակէն»: Թէեւ երկվայրկեան մը՝ մեծ կորուստ մը չի թուիր ըլլալ, բայց գիտնալ որ մոլորակին թաւալումը կրնայ փոխուիլ, ինծի համար մեծ խնդիր է: Նոյնիսկ աննշան անկայունութիւնը՝ կրնայ ստիպել որ հաւատքս տատանուի: Արդարեւ, իմանալը, որ Աստուած կը կառավարէ, կ'օգնէ ինծի որ վստահիմ իրեն՝ անկախ անկէ, թէ որքա՛ն սարսափելի են մեր անյայտները կամ որքա՛ն ցնցող կը թուին ըլլալ մեր իրավիճակները:

Սաղմոս 90-ին մէջ՝ Մովսէս ըսաւ. «Լեռներուն ծնելէն առաջ՝ երկրին ու երկրագունդին ստեղծուելէն առաջ՝ դարէ դար՝ դուն Աստուած ես» (Հմ. 2): Ընդունելով Աստուծոյ անսահմանափակ զօրութիւնը, վերահսկողութիւնը եւ իշխանութիւնը բոլոր ստեղծագործութեան վրայ՝ Մովսէս յայտարարեց, որ ժամանակը չի կրնար կաշկանդել Աստուծոյ (Հմ. 3-6):

Երբ մենք կը ձգտինք աւելի իմանալ Աստուծոյ եւ Անոր ստեղծած հրաշալի աշխարհին մասին, մենք կը բացայայտենք, թէ ինչպէ՛ս Ան կը շարունակէ կատարելապէս կառավարել ժամանակին եւ այն ամէնը, ինչ որ ինք ստեղծած է: Կարելի է Աստուծոյ վստահիլ՝ նաեւ մեր կեանքի ամէն անյայտ եւ նոր բացայայտուած բան: Ամբողջ ստեղծագործութիւնը ապահով կը մնայ Աստուծոյ սիրառատ ձեռքերուն մէջ:

**Աղօթք** - Անփոփոխ Արարի՛չ, շնորհակալ եմ քու վստահելի ձեռքերուդ մէջ՝ կեանքս ամէն վայրկեան ապահովելուդ համար: Ամէն: **Աստուած՝** կը վերահսկէ ժամանակին ու ամբողջ ստեղծագործութեան, կ'օգնէ քեզի իրեն վստահելու՝ երբ կը դիմագրաւես անծանօթը: Կարեւորը՝ Աստուծոյ սիրոյ ձեռքերուն մէջ մնալն է:



Ամեն ատեն ուրախ եղեք: Անդադար աղօթեցեք: Ամեն բանի մեջ շնորհակալ եղեք, որովհետեւ այս է Աստուծոյ կամքը ձեզի հանդէպ՝ Բրիստոս Յիսուսով: [Ա. Թես. 5. 16-18]

## ԴՐՈՒՄ ԱՂՕԹԵԼՈՒ

**Ա**նգամ մը՝ գործընկերուհի մը ըսաւ ինծի, որ իր աղօթքի կեանքը բարելաւուած է՝ մեր գործի տնօրէնին շնորհիւ: Տպաւորուած էի՝ մտածելով, որ մեր դժուար առաջնորդը՝ բաժնեկցած է իր հետ քանի մը հոգեւոր խորհուրդներ եւ ազդեցութիւն ձգած է, թէ ինչպէս աղօթելու է: Սխալած էի՝ ձեռով մը: Գործընկերուհիս ու բարեկամուհի մը շարունակեցին բացատրել. «Ամէն անգամ, երբ կը տեսնեմ՝ որ ան կու գայ, կը սկսիմ աղօթել»: Իր աղօթքի ժամանակը բարելաւուած էր, քանի որ ան աւելի շատ կ'աղօթէր անոր հետ իւրաքանչիւր զրոյցէ առաջ: Ան գիտէր, որ Աստուծոյ օգնութեան կարիքը ունի՝ իր տնօրէնին հետ իր դժուար աշխատանքային յարաբերութիւններուն մէջ, եւ ճիշդ այդ պատճառով՝ աւելի շատ դիմեց անոր:

Դժուար ժամանակներու եւ փոխգործակցութեան ատեն աղօթելու իմ գործընկերուհիս վարժութիւնն ըրածը՝ բան մըն է, մը ես որդեգրած եմ: Այդ նաեւ՝ Աստուածաշնչական վարժութիւնն է, որ կը գտնուի Ա. Թեսաղոնիկեցիսին մէջ, երբ Պօղոս կը յիշեցնէ Յիսուսի հաւատացողներուն՝ «անգաղար աղօթել. ամէն բանի մէջ շնորհակալ ըլլալ» (15. 17-18): Ինչ բանի որ հանդիպինք, աղօթքը՝ միշտ ալ լաւագոյն վարժութիւնն է: Մեզ կը պահէ կապուած Աստուծոյ հետ եւ կը հրաւիրէ Անոր Հոգին առաջնորդելու մեզ (Գաղ. 5. 16), ո՛չ թէ ապաւինելու մեր մարդկային հակումներուն: Այս՝ կ'օգնէ մեզի «խաղաղութիւն ունենալու իրարու հետ» (Ա. Թես. 5. 13), նոյնիսկ երբ կը դիմագրաւենք բախումներ:

Երբ Աստուած կ'օգնէ մեզի, մենք կրնանք ուրախանալ Իրմով, աղօթել ամէն բանի համար եւ յաճախ շնորհակալութիւն յայտնել: Այդ բաները կ'օգնեն մեզ՝ ապրելու աւելի մեծ ներդաշնակութեան մէջ՝ մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ՝ Յիսուսով:

**Աղօթք** - Հայր, կը խնդրեմ, օգնէ՛ ինծի որ յիշեմ, որ անդադար աղօթեմ, երբ կը ձգտիմ ներդաշնակ ապրելու ուրիշներու հետ: Ամեն:

**Մեր յարաբերութիւններուն համար՝ միշտ աղօթելու ենք, որպէսզի օգնէ մեզի հետեւելու Աստուծոյ տուած առաջնորդութեան՝ մեր մարդկային հակումներուն դէմ:**

Ո՛վ Տէր, մինչեւ ե՞րբ. զիս ընդմիջտ պիտի մոռնաս: [Սաղմ. 13. 1]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԻՄԱՍՏՈՒՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**Մ**իացեալ Թագաւորութիւնը (United Kingdom)՝ լեցուն է պատմութեամբ: Ուր որ երթաս, կը տեսնես պատմական գործիչներու պատիւին յուշատախտակներ կամ ոգեկոչման վայրեր, ուր կարեւոր իրադարձութիւններ տեղի ունեցած են: Բայց այդպիսի նշաններէն մէկը ցոյց կու տայ Բրիտանական զուարճութեան զգացումը: Անգլիոյ՝ Սէնտուիչ (Sandwich) քաղաքին մէջ, ‘անկողին եւ նախաճաշ’ (bed and breakfast) տան մը դուրսը գտնուող օդամաշ յուշատախտակին վրայ գրուած է. «Այս տեղ, 5 Սեպտեմբեր 1782-ին, ո՛չինչ պատահած է»:

Երբեմն մեզի կը թուի, թէ մեր աղօթքներուն հետ կապուած ո՛չինչ կը կատարուի: Մենք կ’աղօթենք ու կ’աղօթենք մեր խնդրանքները բերելով մեր Հօրը՝ ակնկալութիւններով, որ Ան կը պատասխանէ՝ ճիշդ հիմա: Սաղմոսներու Դաւիթ՝ նման յուսախաբութիւն արտայայտեց, երբ ան աղօթեց. «Ո՛վ Տէր, մինչեւ ե՞րբ. զիս ընդմիջտ պիտի մոռնաս: Մինչեւ ե՞րբ քու երեսդ ինձմէ պիտի ծածկես» (Սաղմ. 13. 1): Մենք դիւրութեամբ կրնանք կրկնել այդ նոյն միտքերը. Մինչեւ ե՞րբ, Տէր, ե՞րբ պիտի պատասխանես:

Սակայն մեր Աստուածը ո՛չ միայն կատարեալ է Իր իմաստութեամբ, այլեւ Իր ժամանակներով: Դաւիթ կը ցաւ ըսել. «Ես քու կարեկցութեանդ վստահեցայ, սիրտս քու փրկութեամբ պիտի խայտայ» (Հմ. 5): Ժողովող 3. 11-ը մեզի կը յիշեցնէ. «Ամէն ինչ գեղեցիկ ըրաւ ժամանակին»: «Գեղեցիկ» բառը կը նշանակէ «համապատասխան», «յարմար» կամ «հաճութեան աղբիւր»:

Աստուած միշտ չէ՛, որ կը պատասխանէ մեր աղօթքներուն երբ մենք կը ցանկանք, բայց Ան միշտ կ’իրականացնէ Իր իմաստուն նպատակները: Մենք կրնանք համոզուիլ, որ երբ Ան կը պատասխանէ, այդ կ’ըլլայ ճիշդ, լաւ ու գեղեցիկ:

**Աղօթք** - Սիրող Աստուած, կը խնդրեմ, օգնէ ինձի՝ որ սորվիմ համբերութեամբ աղօթքի մէջ ըլլամ՝ Զեզի վստահելով: Ամէն:  
**Երբեմն անդադար ու Յիսուսի անունով կ’աղօթենք. սակայն կը զգանք, որ գուցէ Աստուած կ’անտեսէ մեր խնդրանքները:**  
**Սպասումի ժամանակ՝ դասեր կը սորվինք:**



Ահա՛ առջեւդ դրի բացուած դուռ մը: [Յայտ. 3. 8]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՅ ԴՈՆԵՐԸ

**Մ**եծ քաղաքի մը մօտ գտնուող իմ նոր դպրոցին՝ վարիչին խորհրդատուն, հայեացք մը նետեց իմ վրաս եւ դրաւ զիս Անգլերէն շարագրութեան՝ ամենացած կատարողական դասարանին մէջ: Ես նոր հասած էի ներքին քաղաքի իմ նախկին դպրոցէն՝ բացառիկ քննութեան արդիւնքներով, գերազանց նիշերով եւ նոյնիսկ Տնօրէնի Մրցանակով՝ իմ գրածներուս համար: Սակայն իմ նոր դպրոցի «լաւագոյն» գրելու դասարանի դուռը փակուեցա՛ւ ինծի համար, երբ խորհրդատուն որոշեց, որ ես ճիշդ կամ պատրաստ չեմ:

Հին Ֆիլատելֆիայի եկեղեցին պիտի հասկնար նման կամայական անյաջողութիւններ: Փոքր ու խոնարհ եկեղեցի մը, իր քաղաքը տուժած էր երկրաշարժներէ՝ վերջին քանի մը տարիներուն, որ տեւական վնասներ ձգած էր: Անոնք նաեւ դիմագրաւած էին սատանայական հակառակութիւն (Յայտ. 3. 9): Նման արհամարհուած եկեղեցի մը «քիչ զօրութիւն ունէր», ինչպէս նշեց յարութիւն առած Յիսուսը, բայց «պահեցիր իմ խօսքս եւ չուրացար իմ անունս» (Հմ. 8): Ուստի Աստուած անոնց առջեւ դրաւ «բաց դուռ մը, որ ո՛չ մէկը կրնար գոցել» (Հմ. 8): Իսկապէս, «ա՛ն՝ որ կը բանայ ու ո՛չ մէկը կը գոցէ, եւ կը գոցէ ու ո՛չ մէկը կը բանայ» (Հմ. 7):

Այդ ճիշդ է նաեւ մեր ծառայութեան ջանքերուն համար: Որոշ դռներ չեն բացուիր: Սակայն Աստուծոյ համար իմ գրածներովս՝ Ան իսկապէս դռներ բացած է՝ թոյլ տալով անոր միջոցով հասնելու համաշխարհային ունկնդիրներու անկախ խորհրդատուի մը փակ վերաբերմունքէն: Փակ դռները նոյնպէս ձեզ ալ չեն կրնար խանգարել. «Ես եմ դուռը» ըսաւ Յիսուս (Յովհ. 10. 9): Եկէ՛ք մտնենք այն դռները, որոնք ինք կը բանայ եւ հետեւինք Իրեն:

**Աղօթք** - Սիրելի Հայր, երբ դռները փակուին իմ առջեւ, թող որ դառնա՛մ դէպի Զեզ, ո՛վ Սուրբ Դուռ, եւ քալեմ այնտեղ՝ ուր Դուս կ'ըսես որ քալեմ: Ամէն:

**Աստուած մեր առջեւ ծառայութեան դռներ կը բանայ ու մեր կեանքերը կը ծաղկին՝ երբ պատրաստ ըլլանք մտնելու:**



Հագէք գուրը, կարեկցութիւնը: [Կող. 3. 12]

## ՅԻՍՈՒՄԻ ԿՕՇԻԿՆԵՐՈՎ ՔԱԼԵԼ

**Ի** նչպէ՞ս կ'ըլլայ՝ քայել թագաւորական կօշիկներով: Անժէլա Գէլլին՝ (Ghgela Kelly) նաւահանգիստի աշխատաւորի եւ հիւանդապահուհիի մը աղջիկան՝ ծանօթ է այս: Ան եղած էր վերջին երկու տասնեակներուն ընթացքին՝ հանգուցեալ էլիզապէթ Թագուհիի պաշտօնական հանդերձներուն պատասխանատուն: Անոր պարտականութիւններէն մէկն էր նաեւ՝ հագնիլ տարիքով յառաջացող Թագուհիին նոր կօշիկները ու շրջիլ պալատին տարածքին մէջ: Այդ ընելու պատճառ մը կար. կարեկցութիւն՝ տարեց կնոջ հանդէպ, որմէ երբեմն կը պահանջուէր երկար ժամերով ոտքի կանգնիլ արարողութիւններու ժամանակ: Քանի որ անոնք ունէին նոյն ոտքի չափը, Գէլլին՝ կրցաւ խնայել Թագուհին՝ որոշ անհանգստութենէ, անոր նոր կօշիկները հագած քալելով՝ աւելի հանգստաւէտ ընելու համար զանոնք:

Էլիզապէթ Թագուհիի հանդէպ իր հոգատարութեան մէջ՝ Գէլլիի անձնական շփումը, ինծի կը ստիպէ՝ մտածել Կողոսայի (ներկայիս Թուրքիոյ տարածաշրջանը գտնուող) մէջ եղող եկեղեցիին՝ Պօղոսի ըրած ջերմ խրախուսանքին մասին. «Որպէս Աստուծոյ ընտրեալներ՝ սուրբ ու սիրելի, հագէ՛ք գուրը, կարեկցութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, համբերատարութիւնը» (Կող. 3. 12): Երբ մեր կեանքերը «շինուին Անոր վրայ» (2. 7), մենք կ'ըլլանք «Աստուծոյ ընտրեալները՝ սուրբ եւ սիրելի» (3. 12): Ան կ'օգնէ մեզի հանելու մեր «հին մարդը» եւ «հագնիլ նորը» (Հմ. 9-10), ապրելով անոնց ինքնութիւնը, որոնք կը սիրեն ու կը ներեն ուրիշներու, քանի որ Աստուած սիրած ու ներած է մեզի (Հմ. 13-14):

Մեր շուրջն են բոլոր անոնք, որոնք պէտք ունին՝ որ մենք «քալենք իրենց կօշիկներով» եւ կարեկցութիւն ցուցաբերենք անոնց՝ կեանքի առօրեայ մարտահրաւէրներուն մէջ:

**Աղօթք** - Տէր, շնորհակալութիւն՝ Զու ներումիդ եւ սիրոյդ համար: Օգնէ՛ ինծի ստանալ զայն, ինչպէս նաեւ տալու ուրիշներուն: Ամեն: **Աստուած միշտ կը կարեկցի մեզի: Կրնանք այսօր ցոյց տալ իր սերը:**



Ուրեմն հիմա դուք այլևս օտարականներ ու պանդուխտներ չէք, հապա սուրբերուն քաղաքակիցները, եւ Աստուծոյ ընտանիքը: [Եփ. 2. 19]

## ՈՂՋՈՒՆԷ՝ ՕՏԱՐԱԿԱՆԸ

«Ամէն Բան Տխուր Իրական Ձէ»-ին մէջ, Տէնյըլ Նայէրի (Danile Nayeri) կը նկարագրէ իր սարսափելի փախուստը գաղթականի հալածանքէն մօր եւ քրոջ հետ, դէպի Ամերիկայի Միացեալ Նահանգներու անվտանգութիւնը: Անծանօթ տարեց զոյգ մը համաձայնեցաւ հովանաւորել զիրենք: Տարիներ ետք Տէնյըլ տակաւին չէր կրնար յաղթահարել այդ դառն փորձառութեան: Ան կը գրէ. «Կրնա՞ս հաւատալ: Կոյրօրէն՝ անոնք ըրին այդ բանը: Անոնք մեզ երբէ՛ք չէին հանդիպած: Եւ եթէ պարզուէր որ մենք չարագործներ ենք, անոնք պէտք էր մեծ գին ալ վճարէին: Այդ գրեթէ նոյնքան խիզախ, բարի եւ անխոհեմ էր, որքան ես կրնամ մտածել ոեւէ մէկուն համար»:

Սակայն, Աստուած կը ցանկայ, որ մենք նման մակարդակի մտահոգութիւն ունենանք ուրիշներու համար: Ան Իսրայէլին պատուիրեց. «Սիրէ՛ զայն քեզի պէս, որովհետեւ դուք ալ Եգիպտոսի երկրին մէջ պանդուխտ էիք» (Ղեւ. 19.34): Ան կը յիշեցնէ Յիսուսի հաւատացող հեթանոսներուն, որոնք մեզմէ շատերն են, որ ժամանակ մը մենք ալ «առանց Քրիստոսի էինք, ... օտարացած՝ խոստումին ուխտերէն. ո՛չ յոյս ունէինք, ո՛չ ալ Աստուած՝ աշխարհի մէջ» (Եփ. 2. 12): Այսպէս, Ան կը պատուիրէ մեր բոլորին նախկին օտարերկրացիներուն՝ թէ Հրեայ եւ թէ հեթանոս, «հիւրասիրութիւն ցուցաբերել օտարներուն» (Եբ. 13. 2):

Տէնյըլ, որ այժմ մեծցած՝ եւ ունի իր ընտանիքը, կը գովաբանէ Ճիմ եւ Ճին Տօւրնները (Jim and Jean Dawson), «որոնք այնքան Քրիստոնեայ էին, որ թոյլ տուին փախստական ընտանիքին ապրելու իրենց հետ, մինչեւ որ կարենային տո՛ւն մը գտնել»:

Աստուած կ'ողջունէ անծանօթին եւ կը յորդերէ, որ մե՛նք ալ նոյնպէս ողջունենք անոնց:

**Աղօթք** - Տէր Յիսո՛ւս, ցոյց տո՛ւր ինծի այն անծանօթին, որուն կ'ուզես որ սիրեմ: Ամէն:

**Մեր շուրջ միշտ կան ու պիտի ըլլան օտարականներ. ուստի պատրա՛ստ ըլլանք՝ ընդունելու ու ողջունելու զանոնք՝ Աստուծոյ տուած պատուերին համաձայն:**



Երկուքը մեկեն լաւ է, .. քանի որ եթէ իյնան, մէկը  
ընկերակիցը կը վերցնէ: [Ժող. 4. 9-10]

## ԱԲԵԼԻ ԼԱՒ Է՝ ՄԻԱՍԻՆ

**Ս**օրէն Սօլգէյրը (*Soren Solkaer*) տարիներ անցուցած է լուսանկարելով աստղերը եւ անոնց շո՛ւնչ կտրող տեսարանը. մրմուռմը, ուր հարիւր հազարաւոր աստղահոյլեր կը շարժին երկինքին վրայ հեղուկային շարժումով: Այս հրաշքը դիտելը նման է նստելու կազմակերպուած, պտտուող ալիքի կամ զանգուածային, մուգ վրձինի հարուածներու պաստարի մը տակ, որ կը հոսի գեղացուցական նախշերու մէջ: Տանիմարքայի մէջ՝ անոնք կը կոչեն այս աստղահոյլերու փորձառութիւնը «Սեւ Արեւ», որ նաեւ Սօլգէյրի լուսանկարներու հիանալի գիրքին խորագիրն է: Ամենէն ուշագրաւը այն է, թէ ինչպէ՞ս աստղահոյլերը բնագոյնաբար կը հետեւին իրենց մօտակայ ուղեկիցին՝ թռչելով այնքան մօտ, որ եթէ մէկը քիչ մը աւելի մօտենայ, անոնք զանգուածային աղէտի կ'ենթարկուին: Սակայն, աստղահոյլերը կը գործածեն մրմուռացում՝ զիրար պաշտպանելու համար: Երբ բազէ մը իջնէ, այս փոքրիկ արարածները կը մտնեն ամուր ձեւաւորումի եւ կը շարժին միասին՝ ետ մղելով գիշատիչին, որ հեշտութեամբ կրնայ խլել զիրենք, եթէ անոնք միմեկի ըլլան:

Մենք աւելի լաւ ենք միասին, քան թէ առանձին: Ժողովողը կ'ըսէ. «Երկուքը մէկէն լաւ է, քանի որ եթէ իյնան, մէկը ընկերակիցը կը վերցնէ: Նաեւ եթէ երկու անձ միասին պառկին կը տաքնան» (4. 9-11: Առանձին, մենք մեկուսացուած եւ հեշտ զոհ ենք: Մենք անպաշտպանելի ենք՝ առանց ուրիշներու սփոփանքին եւ պաշտպանութեան:

Բայց ուղեկիցներու հետ մենք օգնութիւն կու տանք եւ կը ստանանք: «Թէեւ մէկը կրնայ յաղթել», Ժողովողը կ'ըսէ. «Եթէ մէկը իրեն յաղթէ, երկուքը կրնան անոր ընդիմանալ. երեքստիկ դերձանը դիւրաւ չի փրթիր» (Հմ. 12): Մենք միասին աւելի լաւ ենք, քանի որ Աստուած կ'առաջնորդէ մեզ:

**Աղօթք** - Սիրելի Հայր, կը խնդրեմ, օգնէ՛ ինձի որ ըլլամ  
համայնքին մէջ եւ տարածեմ Զու սերդ: Ամէն:

**Երբ մեկուսանանք՝ աւելի խոցելի կը դառնանք. ուստի աւելի լաւ է՝ մտերմանալ ուրիշներու հետ:**





Ան ամեն բանե առաջ է, ու անո՛վ ամեն բան  
հաստատ կը կենայ: [Կող. 1. 17]

## Ո՛Չ ԲԱՆՏ, Ա՛ՅԼ ՔՐԻՍՏՈՍ

**Բ**ացայայտե՛ք (*Discover*) ամսագիրը կ'առաջարկէ, որ տիեզերքին մէջ կա՛ն մօտ 700 հնգիլիոն (7 եւ 20 գէրոններ) մոլորակներ, բայց միայն մէկը նման է Երկիր մոլորակին: Աստղաֆիզիկոս՝ Էրիկ Ջագրիսսըն (*Erik Zackrisson*) ըսաւ թէ մոլորակի համար կեանքը պահպանելու պահանջներէն մէկը «Ոսկեհեր» (*Goldilocks*) գօտիի ուղեծիրին մէջ մնալ է, ուր ջերմաստիճանը ճիշդ է եւ ջուրը կրնայ գոյութիւն ունենալ: 700 հնգիլիոն մոլորակներէն՝ Երկիր մոլորակը՝ կարծես այն միակ մոլորակն է, ուր պայմանները ճիշդ են: Ջագրիսսըն եզրակացուց, որ Երկիր մոլորակին ինչ որ կերպ «բաւարար բախտաւոր ձեռք տրուած է»:

Պօղոս վատահեցուց Կողոսայի հաւատացեալներուն, որ տիեզերքը գոյութիւն ունի՝ ո՛չ թէ բախտի բերումով, այլ՝ Յիսուսի աշխատանքին շնորհիւ: Առաքեալը Քրիստոսը կը ներկայացնէ՝ որպէս աշխարհի Արարիչը. «Որովհետեւ անո՛վ ստեղծուեցաւ ամէն բան» (Կող. 1. 16): Յիսուս՝ ո՛չ թէ միայն աշխարհի հզօր Արարիչն է, այլեւ Պօղոս կըսէ, որ «Անո՛վ ամէն բան հաստատ կը մնայ» (Հմ. 17), աշխարհ մը, որ ո՛չ շատ տաք՝ ո՛չ շատ ցուրտ է, այլ ճիշդ է՝ մարդկային գոյութեան համար: Այն ինչ որ Յիսուս ստեղծեց, Ան կը հաստատէ իր կատարեալ իմաստութեամբ եւ անվերջ գորութեամբ:

Երբ մենք կը մասնակցինք եւ կը վայելենք ստեղծագործութեան գեղեցկութիւնը, եկէ՛ք ընտրենք ո՛չ մատնանշել բախտի պատահական գործունէութիւնը, այլ նպատակասլաց, ինքնիշխան, հզօր եւ սիրող Մէկը, որ «Աստուածութեան ամբողջ լիութիւնը կը բնակի անոր մէջ» (Հմ. 19):

**Աղօթք** - Սիրելի Յիսու՛ս, շնորհակալ եմ շնորհքով եւ նպատակաւորողուած ստեղծելուդ եւ պահպանելուդ համար՝ Զուստեղծագործութիւնդ: Ամեն:

**Յիսուս կը վերահսկէ աշխարհի ու մեր վրայ, հետեւաբար մենք կախեալ ենք իրմէ եւ ո՛չ ուրիշ որեւէ բանէ:**

Ես պառկեցայ ու քնացայ. արթնցայ, քանի  
Տերը ինձի նեցուկ եղաւ: [Սաղմ. 3. 5]

## ԱՆՈՒՇ ՔՈՒՆ

**Վ**ատ յիշատակները եւ մեղադրական հաղորդագրութիւնները՝ հեղեղեցին Սալի (Sal) միտքը: Քուներ փախցուց, քանի որ վախ լեցուեցաւ սիրտին մէջ, իսկ քրտինքը ծածկեց իր մարմինը: Այդ իր մկրտութեան նախորդող գիշերն էր ու չկրցաւ կասեցնել մութ մտքերու յարձակումները: Սալ փրկութիւն ստացած էր Տէր Յիսուսով եւ գիտէր, որ իր մեղքերը ներուած էին, բայց հոգեւոր պայքարը շարունակուեցաւ: Ծիշդ այդ պահուն իր կիներ բռնեց իր ձեռքը եւ աղօթեց իրեն համար: Քիչ ետք՝ խաղաղութիւնը փոխարինեց՝ Սալի սիրտին վախը: Ան ոտքի ելաւ եւ գրեց այն խօսքերը, որոնք կը բաժնեկցէր նախ քան մկրտուիլը, բան մը որ ան չէր կրցած ընել: Անկէ ետք ան քաղցր քուն մը քաշեց:

Դաւիթ Թագաւոր ալ գիտէր, թէ ինչպիսի անհանգիստ գիշեր էր: Փախչելով՝ իր որդի Աբիսողոմէն, որ կը ցանկար գողնալ իր գահը, (Բ. Թագ. 15-17), ան գիտէր, որ «բիւրաւոր ժողովուրդներ գինք պաշարած էին» (Սաղմ. 3. 6): Դաւիթ հառաչեց ըսելով. «Ինձի գէմ կանգնողները բազմաթիւ են» (Հմ. 1): Թէեւ վախն ու կասկածը կրնային յաղթել, բայց ան կանչեց Աստուծոյ՝ իր «վահանին» (Հմ. 3): Աւելի ուշ ան հասկցաւ, որ կրնայ «պառկիլ ու քնանալ ..., քանի Տէրը իրեն նեցուկ եղաւ» (Հմ. 5):

Երբ վախեր եւ դժուարութիւններ կը գրաւեն մեր միտքը, եւ հանգիստը կը փոխարինուի անհանգստութեամբ, յոյսը կը յայտնուի, երբ մենք կ'աղօթենք Աստուծոյ: Թէեւ մենք կրնանք չզգալ անմիջապէս քաղցր քուն քաշելու փորձառութիւնը, ինչպէս Սալ եւ Դաւիթ ունեցան, «խաղաղութիւնով մենք կրնանք պառկիլ .... եւ ապահովութեամբ բնակիլ» (4. 8): Որովհետեւ Աստուած մեզի հետ է եւ Ան կ'ըլլայ մեր հանգիստը:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ Զեզի՝ յոյս եւ խաղաղութիւն տալուդ համար, երբ ես կը բարձրացնեմ աղօթքներս Զեզի: Ամէն:

**Սեր սիրտն ու միտքը կրնայ ծանրաբեռնուած ըլլալ շատ բաներով, սակայն կարելի է այդ բոլորը մեր աղօթքներով տանիլ Աստուծոյ:**



Յիսուս կանգ առնելով՝ հրամայեց որ  
իրեն բերեն զայն: [Ղուկ. 18. 40]

## ԵՐԲ ՅԻՍՈՒՍ ԿԱՆԳ ԱՌՆԷ

**Օ**րեր շարունակ՝ հիւանդ կատուն կու լար՝ չփոթած ու կգած  
իմ աշխատավայրի մօտ գտնուող տուփի մը մէջ: Փողոցը  
լքուած փոքր կատուն՝ աննկատ մնաց շատերու կողմէ, որոնք  
կ'անցնէին անոր մօտէն, մինչեւ՝ որ եկաւ Ճուն (Յոն): Փողոց  
մաքրողը՝ տարաւ խեղճ կենդանին իր տունը, ուր ան ունէր  
երկու շնիկներ, որոնք նոյնպէս նախապէս թափառական էին:

«Ես կը խնամեմ զանոնք, քանի որ անոնք այնպիսի  
արարածներ են, որոնց ո՛չ մէկը կը նկատէ» ըսաւ Ճուն: «Ես  
ինքզիքս կը տեսնեմ անոնց մէջ: Փողոց մաքրողին, ի վերջոյ,  
ո՛չ մէկը կը նկատէ»:

Երբ Յիսուս կը քալէր դէպի Երիքով՝ Երուսաղէմ երթալու  
իր ճամբուն վրայ, կոյր մարդ մը նստած էր ճանապարհին՝  
մուրալու համար: Ան նոյնպէս ինքզիքս աննկատ կը զգար:  
Եւ յատկապէս այդ օր, երբ ամբողջ կ'անցնէր եւ բոլորին  
հայեացքը կեդրոնացած էր Քրիստոսի վրայ, ոչ մէկը կանգ  
կ'առնէր՝ օգնելու մուրացկանին:

Ո՛չ մէկը, բացի Յիսուսէն: Թէեւ աղմկոտ ամբողին մէջ էր,  
Ան լսեց մոռցուած մարդուն աղաղակը: Յիսուս հարցուց. «Ի՞նչ  
կ'ուզես՝ որ ընեմ քեզի», եւ ստացաւ սրտագին պատասխան մը:  
«Տէ՛ր, թող աչքերս բացուին» (Ղուկ. 18. 41-42):

Արդեօ՞ք մենք երբեմն աննկատ կը զգանք մենք մեզ:  
Արդեօ՞ք մեր լացը կը խեղթուի այն մարդոց կողմէ, որոնք  
մեզմէ աւելի կարեւոր կը թուին: Մեր Փրկիչը կը նկատէ անոնց,  
որոնք աշխարհը չէ հետաքրքրուած նկատելու: Դիմենք իրեն  
օգնութեան համար: Մինչ ուրիշներ կրնան անցնիլ մեր կողքով,  
Ան կ'անգ կ'առնէ մեզի համար:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, շնորհակալ եմ որ կը լսես ինծի՝ երբ կը  
կանչեմ: Ինչպէ՛ս որ կոյր մարդը ստացաւ տեսողութիւն, օգնե՛ որ  
ես ալ Զեզի հետեւիմ գովաբանելով Զեզ: Ամէն:

**Եթէ մարդիկ չեն տեսներ մեզ, Յիսուս կը տեսնէ ու մեր կեանքը  
կը փոխուի: Հետեւաբար մենք ալ ուշադրութիւն դարձնենք մեր  
շուրջ եղողներուն՝ նկատելով զանոնք:**



Իսկոյն մանուկին հայրը աղաղակեց եւ արցունքով ըսաւ. «Կը հաւատա՛մ, Տէ՛ր. օգնե՛ իմ անհաւատութեանս: [Մարկ. 9. 23]

## «ՕԳՆԷ՛ ԻՄ ԱՆՀԱՒԱՏՈՒԹԵԱՆՍ»

«Ո՛ր է հաւատքս: Նոյնիսկ խորքին մէջ՝ ճիշդ հոն՝ ոչինչ կայ, բացի դատարկութենէ եւ խաւարէ: ... Եթէ Աստուած կա՛յ, կը խնդրեմ ներէ ինծի»:

Այս խօսքերուն հեղինակը՝ կրնայ ապշեցնել քեզ. Մայր Թերեզան (*Mother Teresa*): Սիրուած եւ ծանօթ՝ որպէս Հնդկաստանի՝ Կալկադա քաղաքի անխոնջ ծառայ, Մայր Թերեզան հինգ տասնեակներ շարունակ՝ յուսահատ պատերազմ մղեց իր հաւատքին համար: 1997 թուականին իր մահէն ետք, այդ պայքարը բացայատուեցաւ, երբ անոր օրատետրէն՝ որոշ հատուածներ տպագրուեցան «Եկո՛ւր Եղիր Իմ Լոյսս» գրքին մէջ:

Ի՞նչ կ'ընենք մենք Աստուծոյ բացակայութեան համար մեր ունեցած կասկածներուն կամ զգացումներուն հետ: Այդ պահերը կրնան աւելի շատ տանջել որոշ հաւատացեալներու, քան միւսներուն: Բայց Յիսուսի շատ հաւատարիմ հաւատացեալներ, կրնան իրենց կեանքէն՝ որոշ ժամանակ մը զգալ նման կասկածներու պահեր կամ եղանակներ:

Ես չնորհակալ եմ, որ Սուրբ Գիրքը մեզի տուած է գեղեցիկ, տարաբանական աղօթք մը, որ կ'արտայայտէ թէ՛ հաւատք եւ թէ՛ անոր բացակայութիւնը: Մարկոս 9-ին մէջ Յիսուս կը հանդիպի հօր մը, որու որդին մանկութենէն ի վեր դեւալին տանջանքներու ենթարկուած էր (Հմ. 21): Երբ Յիսուս ըսաւ, որ մարդ պէտք է հաւատք ունենայ, որովհետեւ «ամէն բան կարելի է անոր որ կը հաւատայ » (Հմ. 22), մարդը պատասխանեց. «Կը հաւատամ, Տէ՛ր. օգնե՛ իմ անհաւատութեանս» (Հմ. 23):

Այս ազնիւ, սրտառուչ խնդրանքը կը հրաւիրէ մեզմէ անոնք, որոնք կը պայքարին կասկածի դէմ՝ որ Աստուծոյ վստահին՝ որ կարող է ամբապնդել մեր հաւատքը եւ ամուր բռնել մեզ, երբ կ'անցնինք ամենախոր եւ ամենամութ հովիտներուն մէջէն:

**Աղօթք** - Հայր, երբեմն կը կասկածիմ: Կը խնդրեմ՝ օգնե՛ ինծի, երբ կը պայքարիմ՝ Զու ներկայութիւնդ զգալու համար: Ամէն:

**Երբեմն կը պայքարինք մեր հոգեւոր ճանապարհորդութեան մէջ, սակայն կարելի է Աստուծոյ եւ Իր Խօսքին երթալ՝ յաղթահարելու համար այդ մութ պահերուն:**

Սո՛ւրբ եղէք ինձի. քանի որ ես՝ Տէրս  
սուրբ եմ: [Ղեւ. 20. 26]

## ՆՈ՛ՅՆԻՍԿ ՂԵՒՏԱՑԻՈՅԸ

**Ն**իւթը՝ Ղեւտացւոց գիրքն էր, եւ ես խոստովանութիւն մը ունէի. «Ես շատ մասեր չեմ կարդացած», ըսի Աստուածաշունչի սերտողութեան խումբին: «Ես այլեւս չեմ կարդար մաշկային հիւանդութիւններու մասին»:

Այն ատեն, ընկերս՝ Տէյվը (Dave) ըսաւ. «Ես գիտեմ տղայ մը, որ հաւատաց Յիսուսի այդ հատուածին պատճառով»: Ապա՝ բացատրեց, որ իր բժիշկ ընկերը՝ անաստուած էր: Ան որոշեց, որ նախքան Աստուածաշունչը ամբողջութեամբ մերժէ, աւելի լաւ է որ կարգայ զայն: Ղեւտացւոց գիրքին մաշկային հիւանդութիւններու բաժինը հիացո՛ւց զինք: Այդ կը պարունակէր զարմանալի մանրամասնութիւններ վարակիչ եւ ո՛չ վարակիչ վէրքերու մասին (13. 1-46), եւ ինչպէս կարելի է բուժել զանոնք (14. 8-9): Ան գիտէր, որ այսքանը կը գերազանցէր այդ օրուայ բժշկական գիտելիքները, սակայն հո՛ն էր՝ գիրքին մէջ: Ո՛չ մէկ կերպով՝ Մովսէս կրնար իմանալ այդ ամէնը, խորհեցաւ ան: Բժիշկը սկսաւ մտածել, որ Մովսէս իսկապէս ստացած ըլլալու էր իր տեղեկութիւնները՝ Աստուծմէ: Ի վերջոյ, ան հաւատաց Յիսուսի:

Եթէ Աստուածաշունչի որոշ հատուածներ քեզ կը ձանձրացնեն, ապա ես քեզի հետ եմ: Բայց այն ամէնը, ինչ որ կ'ըսէ, կ'ան մէկ պատճառով. Ղեւտացւոց գիրքը գրուած է, որպէսզի Իսրայէլացիները իմանան, թէ ինչպէ՞ս ապրելու են Աստուծոյ համար եւ իր հետ: Մինչ մենք աւելի կը սորվինք Աստուծոյ եւ իր ժողովուրդին միջեւ եղած այդ փոխյարաբերութեան մասին, մենք կը սորվինք՝ Աստուծոյ մասին:

«Ամբողջ գիրքը աստուածաշունչ է, եւ օգտակար՝ սորվեցնելու, կշտամբելու, ուղղելու եւ արդարութեան մէջ կրթելու համար». գրած է Պօղոս առաքեալ (Բ. Տիմ. 3. 16): Եկէ՛ք շարունակենք կարգալ: Նո՛յնիսկ Ղեւտացւոց գիրքը:

**Աղօթք** - Հայր, սորվեցուր ինձի՝ գնահատել Աստուածաշունչը:

Թող ամէն մէկ հատուած խօսի ինձի հետ: Ամէն

**Աստուածաշունչի կարգ մը հատուածներ կրնան ձանձրացուցիչ թուիլ, սակայն մենք կրնանք ընդունիլ անոնց արժեքը:**



Իմս են անտառին բոլոր գազանները: [Սաղմ. 50. 10]

## ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԻ ԹԷ՝ ՄԱՏԱԿԱՐԱՐ

«Շն տէ՞ր եմ, թէ՛ մատակարար»: Մի քանի միլիարդ տոլար արժող ընկերութեան մը Գործադիր Տնօրէնը ուղղեց ինքն իրեն այս հարցումը, երբ ան կշռադատեց, թէ ի՞նչ է լաւագոյնը իր ընտանիքին համար: Անհանգիստ ըլլալով հսկայական հարստութեան հետ կապուած փորձութիւնները, ան չուզեց ծանրաբեռնել իր ժառանգորդները այդ մարտահրաւէրով: Ուստի՛, ան հրաժարեցաւ իր ընկերութեան սեփականատիրութենէն եւ դրաւ քուէարակող բաժնետոմսերուն հարիւր տոկոս վարկի հաշիւի մէջ: Գիտակցելով թէ իր ամբողջ ունեցածը՝ կը պատկանի Աստուծոյ, որոշեց արտքնել իր ընտանիքին՝ վաստկելու իրենց ապրուստը՝ աշխատանքի դիմաց, միաժամանակ օգտագործելով ապագայ շահերը՝ տրամադրել քրիտսոնէական ծառայութեան:

Սաղմոս 50. 10-ին մէջ՝ Աստուած կ'ըսէ Իր ժողովուրդին. «Իմս են անտառին բոլոր գազանները եւ հազարաւոր լեռներուն անասունները»: Որպէ՛ս ամէն բանի Արարիչ, Աստուած մեզի ոչի՛նչ պարտական է եւ մեզմէ ոչի՛նչ պէտք ունի: «Քու տունէդ զուարակ չեմ առներ, ո՛չ ալ քու փարախէդ՝ նոխազներ» (Հմ. 9): Ան՝ առատաձեռնօրէն կ'ապահովէ այս ամէնը, ի՛նչ որ մենք ունինք եւ կ'օգտագործենք, ինչպէ՛ս նաեւ ապրուստ վաստկելու ուժ եւ կարողութիւն: Քանի որ Ան, ինչպէ՛ս որ ցոյց կու տայ մեզի Սաղմոսը, արժանի է մեր սրտագին փառաբանութեան:

Աստուած ամէն բանի տէրն է: Բայց Իր բարութեան պատճառով՝ նոյնիսկ նախընտրեց տալ ինքզինք՝ մտնելու համար յարաբարութեան մէջ՝ ոեւէ մէկու մը հետ, որ կը դիմէ իրեն: Յիսուս «եկաւ ո՛չ թէ սպասարկութիւն ընդունելու, հապա՝ սպասարկելու եւ իր անձը իբր փրկանք տալու շատերուն համար» (Մաթ. 10. 45): Երբ մենք կը գնահատենք Տուողը՝ քան պարգեւները եւ կը ծառայենք Անոր, անոնց միջոցով՝ մենք օրհնուած կ'ըլլանք յաւիտենապէս՝ ուրախանալու Իրմով:

**Աղօթք** - Հաւատարիմ Արարի՛չ, ամէն բան Դո՛ւն ստեղծեցիր:

Օգնե՛ ինձի ապրելու կեանքս՝ որպէ՛ս նուէր Զեզի: Ամէն Ի՞նչ տուած է Աստուած մեզի, որու համար մենք երախտապարտ ե՛նք: Ինչպէ՛ս կրնանք՝ մեր ունեցածներով ծառայել Իրեն:



Երբ անոնք կենային եւ իրենց թելերը իջեցնէին, իրենց գլուխին վրայ եղող հաստատութենէն ձայն մը կու գար: [Եզ. 1. 25]

## ԽՕՍԻԼ ԱՅՆՊԷՄ ԻՆՉՊԷՄ ԱՍՏՈՒԱԾ ԿՕԳՆԷ

Սովորաբար թիթեռնիկները կարելի է համարել բարձր ձայներ հանող արարածներ. ի վերջոյ, մէկ Միապետութեան մը պատկանող թիթեռնիկներու թեւերուն թափահարումը՝ գործնականին մէջ չլսուիր: Բայց Մէքսիկայի խիտ անտառներուն մէջ, ուր անոնցմէ շատերը կը սկսին իրենց կարճ կեանքը, անոնց հաւաքական թափահարումներուն ձայնը, զարմանալիօրէն՝ բարձր է: Երբ միլիոնաւոր Միապետութիւններու թիթեռնիկներ իրենց թեւերը միաժամանակ կը թափահարեն, կը հնչէ՝ որպէս հզօր ջրվէժ: Նոյն նկարագրութիւնը կը տրուի, երբ Եզեկիէլի տեսիլքին մէջ՝ չորս տարբեր թեւաւոր արարածներ կը յայտնուին: Թէեւ թիթեռնիկներուն թիւէն քիչ են անոնք, մարգարէն կը նմանցնէ անոնց թեւերուն թափահարումը՝ «յորդառատ ջուրերու աղմուկին» (Եզ. 1. 24): Երբ արարածները կանգ առին եւ իջեցուցին իրենց թեւերը, Եզեկիէլ լսեց Աստուծոյ ձայնը. կը կանչէր զինք «որ հաղորդէ՝ անոնց (Իսրայելացիներուն) իր խօսքերը» (2. 7):

Եզեկիէլ, Հին Կտակարանի միւս մարգարէներուն նման, յանձնարարուած էր յայտնելու ճշմարտութիւնը Աստուծոյ ժողովուրդին: Այսօր Աստուած կը խնդրէ մեզմէ՝ բաժնեկցիլ մեր շուրջիներուն հետ, մեր կեանքերուն մէջ իր ըրած բոլոր բարի գործերուն ճշմարտութիւնը (Ա. Պետ. 3. 15): Երբեմն մեզմէ ուղղակի պիտի խնդրուի՝ բաժնեկցիլ այդ, այնքան «բարձր», որքան որ է ջրվէժին ձայնը: Այլ ժամանակներուն՝ հրաւէրը կրնայ աւելի նման ըլլալ շշուկի. օրինակ՝ չըսուած կարիք մը տեսնելը: Անկախ անկէ, թէ Աստուծոյ սէրը ուրիշներու հետ բաժնեկցելու հրաւէրը՝ այնքան բարձր է, որքան մէկ միլիոն թիթեռնիկներ կամ ալ լուռ ինչպէս միայն մէկը, մենք պէտք է լսենք, ինչպէս Եզեկիէլ՝ աւանջները սեղմած էր լսելու համար, թէ Աստուած ի՞նչ կ'ուզէ, որ մենք ըսենք:

**Աղօթք** - Յայր, շնորհակալ եմ՝ որ հրաւիրեցիր զիս՝ բաժնեկցելու Զու մասիդ: Ամէն

**Ո՞վ կը հրաւիրէ մեզ՝ խօսելու իրենց կեանքին մէջ, թէեւ մեղմ ձայնով: Եթէ կը լսենք այդ հրաւերը, ի՞նչ պիտի ընենք:**



Սրտեն կ'ելլեն չար մտածումները ... ասո՛նք են որ  
կը պղծեն մարդը: [Մատթ. 15. 19-20]

## ՍԻՐՏ ՄԸ՝ ՅԻՍՈՒՄԻ ՀԱՄԱՐ

**Ե**ս ինծի ըսի. «Այնքան ատեն որ բերանդ փա՛կ կը պահես, սխալ բան մը չես ըներ»: Արտաքնապէս՝ ես կը զսպէի իմ զայրոյթս՝ գործընկերուհիի մը հանդէպ՝ Անոր ըսածները սխալ մեկնաբանելէ ետք: Քանի որ մենք ամէ՛ն օր պէտք էր տեսնէինք զիրար՝ որոշեցի սահմանափակել շփումս իր հետ՝ միայն անհրաժեշտ պարագաներուն (պատասխանելով՝ լուռ վերաբերմունքով): Ինչպէ՞ս կրնայ լուռ պահուածքը՝ սխալ ըլլալ:

Յիսուս ըսաւ, որ մեղքը կը սկսի սիրտէն (Մատթ. 15. 18-20): Լռութիւնս՝ կրնար խաբել մարդոց՝ մտածելով, որ ամէն ինչ լա՛ւ է, բայց այդ չէ՛ր խաբէր Աստուծոյ: Ան գիտէր, որ ես կը թաքցնէի զայրոյթով լեցուն սիրտ մը: Ես նման էի Փարիսեցիներուն, որոնք կը պատուէին Աստուած՝ իրենց շրթունքներով, բայց անոնց սիրտերը հեռու էին Իրմէ (Հմ. 8): Թէեւ արտաքին տեսքս ցոյց չէր տար իմ զգացումներս, դառնութիւնը կը բորբոքէր իմ ներսիդէս: Ուրախութիւն ու մտերմութիւնը, որ ես միշտ կը զգայի իմ Երկնաւոր Հօրս հետ, անհետացած էին: Մեղքը սնուցելը եւ թաքցնելը՝ այդ բանը կ'ընէր:

Աստուծոյ ողորմութեամբ, պատմեցի գործընկերոջս՝ Թէ ի՞նչ կը զգամ եւ ներողութիւն խնդրեցի: Ան սիրով ներեց ինծի եւ ի վերջոյ, մենք դարձանք լաւ ընկերներ: Յիսուս կ'ըսէ. «Սրտէն կ'ելլեն չար զգացումները» (Հմ. 19): Մեր սիրտի վիճակը կարեւոր է, քանի որ այնտեղ բնակող չարը՝ կրնայ լեցնել մեր կեանքը: Մեր՝ Թէ՛ արտաքինը եւ Թէ՛ ներքինը կարեւոր է:

**Աղօթք** - Սիրող Աստուա՛ծ, կը խնդրեմ, ներէ ինծի՝ այն մեղքերուն համար որով կը սնուցանեմ սիրտս: Կ'ուզեմ՝ որ սիրտս հաճելի ըլլայ՝ Զու աչքերուդ: Կը խնդրեմ՝ օգնէ ինծի որ փոխուիմ: Ամեն: **Յիսուս ըսաւ, որ մեր սիրտերուն մէջ եղած մեղքը կը պղծէ մեզ:** Ի՛նչ մտքեր կրնան պղծել քեզ: Ինչպէ՛ս կրնաս աղօթել այս հարցին մասին:





Որպեսզի Զրիստոս բնակի ձեր սիրտերուն մեջ: [Եփ. 3. 17]

## ՅԻՍՈՒՍ ԿԸ ԲՆԱԿԻ ՆԵՐՍԸ

**Ե**րբ Միացեալ Նահանգներու արեւմուտքին գտնուող իմ նահանգս ձիւնամրրիկով բռնուեցաւ, այլրի մայրս համաձայնեցաւ մնալ ընտանիքիս հետ՝ փոթորիկէն հեռու մնալու համար: Զիւնամրրիկէն ետք, սակայն, ան ալ չվերադարձաւ իր տունը: Ան մեր տունը փոխադրուեցաւ, իր կեանքի մնացեալ տարիները՝ բնակելու մեր մօտ: Անոր ներկայութիւնը՝ շատ դրական առումներով՝ փոխեց մեր ընտանիքը: Ան ամէն օր տրամադրելի էր՝ իմաստութիւն եւ խորհուրդներ տալու ընտանիքի անդամներուն եւ պատմելու մեր նախնիներուն պատմութիւնները: Ինք եւ ամուսինս դարձան լաւագոյն ընկերներ՝ բաժնեկցելով նոյն զուարճութեան զգացումը եւ մարզանքի հանդէպ իրենց ունեցած սէրը: Այլեւս ան այցելու չէ՛ր, այլ մշտական եւ կենսական բնակիչ էր՝ ընդմիշտ փոխելով մեր սիրտերը՝ նոյնիսկ Աստուած գինք տուն կանչելէ ետք:

Այս փորձառութիւնը կը յիշեցնէ ինծի՝ Յովհաննէսի նկարագրութիւնը Յիսուսի մասին, որ Ան «մեր մէջ բնակեցաւ» (Յովհ. 1. 14): Այդ համոզիչ նկարագրութիւն է, քանի որ բնագիր Յունարէն բնակիլ բառը, կը նշանակէ «վրան լարել»։ Ուրիշ թարգմանութիւն մը կ'ըսէ. Ան «Իր տունը բրաւ մեր մէջ»:

Հաւատքով մենք նաեւ կ'ընդունինք Յիսուսի որպէս մէկը, որ կը բնակի մեր սիրտերուն մէջ: Ինչպէս Պօղոս գրեց. «Ուստի կը ծնրադրեմ՝ մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսի Հօրը առջեւ, որպէսզի չնորհէ ձեզի՝ իր փառքին ճոխութեան համեմատ զօրութեամբ ուժովնալ ներքին մարդուն մէջ, իր Հոգիին միջոցով. որպէսզի Քրիստոս բնակի ձեր սիրտերուն մէջ՝ հաւատքով, եւ դուք սիրոյ մէջ արմատանալով ու հիմնուելով, կարողանաք ըմբռնել ... » (Եփ. 3. 16-17):

Պատահական այցելու չէ, Յիսուս՝ մշտական բնակիչն է բոլոր անոնց, որոնք կը հետեւին Իրեն: Թո՛ղ որ մենք լայն բանաք մեր սիրտի դռները եւ ողջունենք զինք:

**Աղօթք** - Սիրելի Յիսո՛ւս, քանի որ Դուն կը բնակիս սիրտիս մէջ, գի՛ս աւելի Զեզի նման ըրէ: Ամէն:

**Ի՞նչ կը նշանակէ քեզի համար սիրտդ բանալ Զրիստոսի առջեւ: Ինչպե՛ս կրնաս զինք աւելի լաւ ձեռով ողջունել:**



Տերը անոր ըսաւ. «...զայն քու ձեռքդ մատնեցի:» [Դատ. 7. 9]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵԾ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

**Մ**արտ 1945-ին, «Ուրուական Բանակը» օգնեց Միացեալ Նահանգներու ուժերուն՝ հասնելու Հռենոս Գետի (Rhine River) անցքը, տալով դաշնակիցներուն կենսական հիմք՝ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի Արեւմտեան ճակատին վրայ՝ ճակատելու: Զինուորները, անկասկած, մարդիկ էին, ոչ թէ երեւոյթներ, բոլորը՝ 23-րդ Բաժինի Յատուկ Զոկատներու մաս կը կազմէին: Այս առիթով 1,100 մարդերէ բաղկացած խումբը, նմանեցաւ 30,000 մարդոց՝ օգտագործելով օդով լեցուած խաբեբայ հոստանիներ, պայթուցիկներու եւ մեքենաներու ձայներ հանելով՝ բարձրախօսներու վրայ, եւայլն: Ուրուականներու բանակի անդամներու համեմատաբար փոքր թիւը՝ ստիպեց թշնամիին՝ վախնալու, ինչ որ կը թուէր՝ թէ շատ աւելի մեծ ուժ մըն էր:

Մագիանացիները եւ անոնց դաշնակիցները նոյնպէս կը դողային փոքր բանակի մը առջեւ, որ մեծ էր գիշեր ատեն (Դատ. 7. 8-22): Գեղէտն Իսրայէլի դատաւորը, մարգարէն եւ զինուորական առաջնորդը, Աստուծոյ կողմէ օգտագործուեցաւ թշնամիին համար սարսափի աղբիւր դարձնելու՝ իր փոքր բանակը: Անոնք նաեւ կ'օգտագործէին ձայներ (փողի փչոցներ, կաւէ սափորներու ջարդում, մարդոց ձայներ) եւ տեսանելի առարկաներ (վառուած ջահեր)՝ ստիպելու հսկայական թշնամիին, որ «մարախի պէս բազմութիւն» մըն էր (Հմ. 12), հաւատայ թէ կանգնած է հսկայական թշնամիի մը դիմաց: Իսրայէլ յաղթեց իր թշնամիին այդ գիշեր՝ Աստուծոյ հրամանով 32,000 մարդերու միայն 300 հաշուող բանակով (Հմ. 2-8): Ինչո՞ւ: Որովհետեւ պարզ դարձաւ, թէ ո՞վ իրականութեան մէջ յաղթեց ճակատամարտը: Ինչպէ՞ս Աստուած ըսաւ Գեղէտնին. «Զայն քու ձեռքդ մատնեցի» (Հմ. 9):

Երբ մենք մեզ տկար եւ թերի կը զգանք, եկէ՛ք փնտռենք Աստուած եւ հանգստանանք միայն Անոր ուժով: Որովհետեւ Անոր «զօրութիւնը՝ կ'իրագործուի տկարութեան մէջ» (Բ. Կորնթ. 12. 9):

**Աղօթք** - Սիրելի Յիսո՛ւս, թո՛յլ տուր ինծի՝ գտնել Զու ուժդ՝ իմ տկարութեանս մէջ: Ամէն:

**Ի՞նչ մեծ թշնամիներ կամ մարտահրաւերներ կը դիմագրաւե՞ս: Ինչպէ՞ս կրնաս այդ պահերուն՝ հանգստանալ Աստուծոյ զօրութեան մէջ:**



Յիշեցնո՛ւր անոնց, որ պատրաստ ըլլան  
ամեն բարի գործի: [Տիտ. 3. 1]

## ԲԱՐԻՔ ԸՆԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՄԱՐ

**Թ**էեւ սովորաբար ան իր հետ դրամ չէր տաներ, Բաթրիք (Patrick) զգաց որ Աստուած կը մղէր զինք որ իր հետ հինգ տոլար թղթադրամ մը առնէ՝ տունէն դուրս գալէ առաջ: Իր աշխատած դպրոցը՝ ճաշի ժամանակ, ան հասկցաւ թէ ինչպէ՛ս Աստուած զինք պատրաստած էր հրատապ կարիք մը հոգալու համար: Ծաշասրահի աղմուկին մէջ՝ ան լսեց այս խօսքը. «Սքաթի՛ (Scotty) կարիքաւոր երեխան պէտք ունի հինգ տոլարի իր հաշիւին վրայ, որպէսզի ան կարենայ ճաշ ուտել շաբթուան մնացեալ օրերուն մէջ»: Պատկերացուցէ՛ք, թէ ի՞նչ զգացումներ ապրեցաւ Բաթրիք այդ պահուն երբ իր դրամը տուաւ Սքաթիին օգնելու համար:

Տիտոսի գիրքին մէջ Պօղոս կը յիշեցնէ հաւատացեալներուն, որ անոնք չեն փրկուիր «իրենց ըրած արգարութեան գործերով» (3. 5), այլ պէտք է «ճիշդ թափեն մատակարար ըլլալու բարի գործերու» (Հմ. 8, տե՛ս Հմ. 14): Կեանքը կրնայ ըլլալ յագեցած, չափազանց զբաղ եւ հիւծախտային: Մեր սեփական բարեկեցութեան հետամուտ ըլլալը կրնայ ճնշիչ ըլլալ: Սակայն, որպէս Յիսուսի հաւատացողներ, մենք պէ՛տք է «պատարաստ ըլլանք բարի գործերու համար»: Փոխանակ՝ չունեցածով եւ չենք կրնարով ճնշուելու, եկէ՛ք մտածենք այն մասին, թէ ի՞նչ ունինք եւ ի՞նչ կրնանք ընել Աստուծոյ օգնութեամբ: Այդ ընելով, մենք կ'օգնենք ուրիշներուն՝ իրենց կարիքներուն մէջ եւ Աստուած կը պատուենք. «Զեր լոյսը այնպէս թող փայլի մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաբանեն ձեր Հայրը՝ որ երկինքն է» (Մատթ. 5. 16):

**Աղօթք** - Սիրելի Հայ՛ր, կը խնդրեմ՝ ներէ՛ ինձի, երբ կ'անտեսեմ բարիք ընելու հնարաւորութիւնները: Օգնէ՛ ինձի աւելի հասանելի ըլլալ՝ ուրիշներու կարիքները հոգալու համար: Ամեն:

**Ի՞նչը կը խանգարէ բարիք ընելու մեր պատարաստակամութիւնը: Ինչպէ՛ս կարելի է վերադասաւորել մեր կեանքը, որպէսզի կարենա՛նք մարդոց օգնել:**



Տերոջ անունը ամուր աշտարակ է. Արդարը անոր  
կը վագէ ու պաշտպանուած կ'ըլլայ: [Առ. 18. 10]

## ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԱՊԱԷՆԸ

2019 թուկանի ուշագրաւ «Փոքրիկ Կանայք» (Little Women) շարժապատկերը, զիս ետ տարաւ իմ մաշած վէպի գիրքի օրինակին, յատկապէս Մարմիի՝ (Marmee) իմաստուն եւ մխիթարիչ խօսքերուն: Ինձ կը գրաւէ վէպին մէջ ցոյց տրուած անասան հաւատքի պատկերը, որ հիմնական է իր դուստրերուն ուղղուած իր խրախուսական խօսքերէն շատերը: Ինծի համար առանձնայատուկ մէկ խօսք՝ հետեւեալն է. «Դժբախտութիւններ եւ փորձութիւններ ... կրնան շատ ըլլալ, բայց դուք կրնաք յաղթահարել եւ գերազանցել անոնց բոլորին, եւ սորվիք զգալ ձեր երկնաւոր Հօր ուժն ու քնքշութիւնը»:

Մարմիի խօսքերը կ'արձագանգեն Առակացի մէջ գտնուած ճշմարտութիւնը, որ «Տէրոջ անունը ամուր աշտարակ է. արդարը անոր կը վագէ ու պաշտպանուած կ'ըլլայ» (18. 10): Հին քաղաքներու մէջ աշտարակներ կը կառուցուէին՝ վտանգի ժամանակ ապահով վայրեր ըլլալու համար, գուցէ թշնամիին յարձակումին պատճառով: Նոյն կերպով, դէպի Աստուած վազելու միջոցով է, որ Յիսուսի հաւատացողները կրնան խաղաղութեան փորձառութիւնը ունենալ՝ Անոր խնամքին մէջ, որ «մեր ապաւէնն ու զօրութիւնն է» (Սաղմ. 46. 1):

Առակաց 18. 10-ն մեզի կ'ըսէ, որ պաշտպանութիւնը կու գայ Աստուծոյ «անունէն», որը կը վերաբերի իր ո՞վ է ըլլալուն: Սուրբ Գիրքը կը նկարագրէ Աստուած՝ որպէս «գլխած ու ողորմած, համբերատար եւ առատաձեռն՝ կարեկցութեամբ ու ճշմարտութեամբ» (Ել. 34. 6): Աստուծոյ պաշտպանութիւնը կու գայ՝ Անոր հզօր ուժէն, ինչպէս նաեւ Անոր քնքշութեան եւ սէրէն, որոնք կը ստիպեն Անոր՝ որ ցանկայ ապաստան տրամադրել վիրաւորներուն: Բոլոր անոնց համար, որոնք կը պայքարին, մեր երկնաւոր Հայրը կ'առաջարկէ ապաստան՝ իր ուժի եւ քնքշութեան մէջ:

**Աղօթք** - Երկնաւոր Զայր, օգնէ՛ ինծի վագել դէպի Զեզ՝ թէ լա՛ւ եւ թէ պայքարի ժամանակներուն մէջ: Ամէն:

**Աստուած կը մխիթարէ մեզ՝ իր զօրութիւնով, դժուարութեան ժամանակ ու կը խնամէ:**

Տերը անոր (Մովսեսին) ըսաւ. «Այդ ձեռքիդ ի՞նչ է»: [Ել. 4. 2]

## ԳՈՐԾԱԾԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒԱԾՆԵՐԸ

Աւստրալիոյ՝ Պրիզպըն (*Brisbane*) քաղաքի Քաղաքապետարանի Սրահը 1920-ական թուականներու շրջանէն ծրագրերէն մէկն էր: Սպիտակ աստիճանները՝ պարճանքի արժանի մարմարէ շինուած՝ նոյն քարահանքէն էր, որ Մայքելանճէլօն (*Michaelangelo*) գործածած էր իր Դաւիթի քանդակին համար: Աւստրալիա արտացոլումն էր՝ Վենետիկի Սուրբ Մարկոս Մայր Եկեղեցիին, իսկ պղինձէ գմբեթը՝ ամենամեծն էր Հարաւային կիսագունդին մէջ: Շինարարները մտադիր էին խաղաղութեան հսկայական հրեշտակով մը զարդարելու գագաթը, բայց հարց մը կար. դրամ չմնաց: Օգնութեան հասաւ կապարագործ Ֆրէտ Չանսըն (*Fred Johnson*): Ան օգտագործեց գուգարանի ջրամբար մը, հին լամբարի սիւն մը եւ մետաղի կտորներ՝ ստեղծելու համար խորհրդանշական գունդը, որ պսակած է աշտարակը՝ մօտ հարիւր տարի:

Ֆրէտ Չանսընի նման, մենք կրնանք միանալ Աստուծոյ աշխատանքին՝ ի՞նչով որ ունինք: Երբ Ան խնդրեց Մովսէսին դուրս բերելու Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսէն, Մովսէս հրաժարեցաւ ըսելով. «Բայց անոնք ինծի պիտի չհաւատան ո՛չ ալ իմ խօսքս մտիկ պիտի ընեն» (4. 1): Աստուած անոր ըսաւ. «Այդ ձեռքիդ ի՞նչ է» (Հմ. 2): Մովսէս՝ ձեռքին՝ գաւազան մը ունէր, հասարակ պարզ փայտ մը: Աստուած ըսաւ անոր. «Գետին ձգէ՛ զայն»: Երբ ձգեց՝ «օձ եղաւ» (Հմ. 3): Ապա պատուիրեց անոր վերցնել օձը, եւ դարձեալ գաւազան դարձաւ: Ամէն ինչ որ Մովսէս պէտք էր ընէր, Աստուած բացատրեց ու թելադրեց, որ գաւազանը տանէր իր հետ ու վստահ ըլլար, որ ինք պիտի ընէ մնացածը: Յատկանշական է, որ Ան օգտագործեց Մովսէսի ձեռքին մէջ եղած այդ փայտը՝ Իսրայէլացիները Եգիպտացիներէն փրկելու համար (7. 10-12, 17. 5-7):

Այն՝ ի՞նչ որ ունինք, կրնայ մեզի շատ չթուիլ, բայց Աստուծոյ համար՝ ի՞նչ որ ալ ունինք, բաւական կ'ըլլայ:

**Աղօթք** - Սիրելի Հայր, Զեզի կը յանձնեմ՝ ամէն ինչ որ ունիմ: Ամէն: Ամէնէն քիչ կամ փոքր նկատուած բանն իսկ՝ Աստուած կրայ օգտագործել, եթէ վստահիսք իրեն:

Փութաջանութեան մէջ ծոյլ մի՛ ըլլաք. եռանդուն  
հոգիով Տերոջ ծառայեցէք: [Հոռմ. 12. 1]

## ԲԱԺՆԵԿՑԻԼ ՈԳԵԻՈՐՈՒԹԻՒՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ

**Ա**ռաջին անգամ, երբ մենք հանդիպեցանք մեր դրացի Հէնրիին (Henry), ան պայտուսակէն հանեց՝ մաշած Աստուածաշունչ մը: Փայլփլող աչքերով՝ հարցո՛ւց, եթէ կը փափաքէինք քննարկել Սուրբ Գիրքը իր հետ: Երբ համաձայնեցանք, անդրադարձաւ որոշ ընդգծուած հատուածներու: Մեզի ցոյց տուաւ դիտարկումներով լեցուն իր նօթատետրը եւ ըսաւ, որ ստեղծած է նաեւ համակարգչային ներկայացում մը, որ լեցո՛ւն է յարակից այլ տեղեկութիւններով:

Հէնրի շարունակեց պատմել մեզի, թէ ինչպէ՞ս եկած էր ընտանեկան ծանր իրավիճակէ մը, իսկ յետոյ՝ առանձին եւ իր վատագոյն վիճակին մէջ, ընդունած է Յիսուսի մահն ու յարութիւնը, որպէս իր հաւատքի հիմը (Գործք 4. 12): Անոր կեանքը փոխուած էր, քանի որ Հոգին օգնեց իրեն՝ հետեւելու Աստուածաշունչի սկզբունքներուն: Թէեւ Հէնրին՝ տարիներ առաջ իր կեանքը նուիրած էր Աստուծոյ, իր ոգեւորութիւնը թարմ եւ հզօր էր:

Հէնրիի եռանդը ոգեշնչեց զիս, մէկը՝ որ երկար տարիներ քալած էր Յիսուսի հետ, մտածելու իմ հոգեւոր եռանդիս մասին: Պօղոս առաքեալ գրեց. «Փութաջանութեան մէջ ծոյլ մի՛ ըլլաք. եռանդուն հոգիով Տէրոջ ծառայեցէք» (Հռմ. 12. 1): Այդ կը թուի ըլլալ երկար պատուէր մը, եթէ թոյլ չտամ, որ Սուրբ Գրութիւնները դաստիարակեն՝ այնպիսի վերաբերմունք, որ կ'արտացոլայ շարունակական երախտագիտութիւն, այն ամեն բանի համար՝ ի՛նչ որ Յիսուս ըրած է ինծի համար:

Ի տարբերութիւն՝ զգացական բարձունքներու եւ անկումներու, որոնք կ'ունենանք մեր կեանքին մէջ, Քրիստոսի հանդէպ նախանձախնդրութիւնը կու գայ՝ Իր հետ անընդհատ ընդլայնուող յարաբերութենէն: Որքա՛ն շատ սորվինք Իր մասին, այնքան աւելի Ան արժէքաւոր կը դառնայ եւ այնքա՛ն Անոր բարութիւնը՝ կը ողողէ մեր հոգիները եւ կը թափի աշխարհի մէջ:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, վերակենդանացո՛ւր Քեզ ճանչնալու իմ ոգեւորութիւնս: Ամէն:

**Յիսուս ինչպէ՞ս կը զգայ՝ երբ տեսնէ, որ դուն խանդավառ ես Իրմով:** Ի՞նչ է կապը՝ երախտագիտութեան եւ եռանդին միջեւ:



Ո՛վ Տեր, ո՛րչափ շատ են քու գործերդ. անոնք բոլորը  
իմաստութեամբ կատարեցիր: [Սաղմ. 104. 24]

## ԱՍՏՈՒԱԾ ՍՏԵՂԾԵՑ ԱՆՈՆՑ ԲՈԼՈՐԸ

**Ե**րեք տարեկան մանչս՝ Զավյէր (*Xavier*), սեղմեց ձեռքս, երբ մտանք Գալիֆորնիայի՝ Մօնթէրէյ Ծոց (*Monterey Bay*) Զկնարանը: Ցոյց տալով՝ առաստաղէն կախուած իրական չափով՝ սապատաւոր կէտծուկի քանդակը, ըսաւ ան. «Հսկայական»: Լայն բաց աչքերով անոր ուրախութիւնը շարունակուեցաւ, երբ մենք ուսումնասիրեցինք իւրաքանչիւր ցուցանմուշ: Ծիծաղեցանք երբ ջրասամոյրները կը ցատկէին՝ կը ցողէին կերակրումի ժամանակ: Մենք լուռ կանգնեցանք՝ ձկնարանին մեծ ապակիէ պատուհանին առջեւ՝ հմայուած ոսկէ-շագանակագոյն ծովամայրով, որ կը պարէր ելեկտրական կապոյտ ջուրին մէջ: Ե՛ս ըսի. «Աստուած ստեղծեց ովկիանոսի բոլոր արարածները, ճի՛շդ այնպէս՝ ինչպէս Ան ստեղծեց քեզ եւ զի՛ս»: Զավյէր փսփսաց. «Վա՛ռ»:

Սաղմոս 104-ին մէջ, սաղմոսերգուն ընդունեց Աստուծոյ առատ ստեղծագործութիւնը եւ երգեց. «Անոնք բոլորը իմաստութեամբ կատարեցիր, երկիրը լեցուած է քու ստեղծածներովդ» (Հմ. 24): Ան յայտարարեց. «Ահա՛ւասիկ ծովը մեծ ու լայն, ուր կը շարժին անթիւ կենդանիներ, պզտիկ եւ մեծ» (Հմ. 25): Ան հռչակեց Աստուծոյ առատաձեռն եւ գոհացուցիչ նախատեսութիւնը՝ այն ամէնուն համար՝ որ ինք ստեղծած է (Հմ. 27-28): Ան նաեւ հաստատեց, որ Աստուած որոշած է իւրաքանչիւրին գոյութեան օրերը (Հմ. 29-30):

Մենք կրնանք միանալ սաղմոսերգունին՝ երգելով այս նուիրուածութեան հռչակագիրը. «Տէրոջ պիտի երգեմ՝ որքան ատեն որ ապրիմ, Սաղմոս պիտի ըսեմ իմ Աստուծոյս՝ քանի ողջ եմ» (Հմ. 33): Իւրաքանչիւր արարած՝ կրնայ մեզ տանիլ գովաբանութեան, քանի որ Աստուած ստեղծած է անոնց բոլորը:

**Աղօթք** - Ամենահզօր Արարի՛չ եւ բոլորին Պահապան, Դո՛ւն՝ արժանի ես իմ բոլոր գովասանքին: Ամեն:

**Աստուծոյ ստեղծած հրաշալի աշխարհը ուսումնասիրելը՝ կը ստիպէ մեզի՝ փառաբանել Անոր, որովհետու Անոր ստեղծագործութիւնը՝ կը խորացնէ մեր հաւատքը, Իր գոյութեան եւ տուած ապահովութեան համար:**



Գևա՛, հացդ ուրախութեամբ կեր, ու գինիդ  
գուա՛րթ սիրտով խմէ. որովհետեւ Աստուած արդէն  
հաւանեցաւ քու արարքներուդ: [Ժող. 9. 7]

## ՅԻՇԷ՛ ՍՏԵՂԾԻՉԸ

**Վ**երջերս՝ կարգացի վէպի մը մէջ՝ կնոջ մը մասին, որ կը  
հրաժարի ընդունելու, որ ունի մահացու քաղցկեղ:  
Երբ Նիգոլային (Nicola) գրգռուած ընկերները կը ստիպեն  
զինք որ հաշտուի ճշմարտութեան հետ, ի յայտ կու գայ  
անոր խուսափելուն պատճառը: Ան ըսաւ անոնց. «Վատնեցի  
կեանքս»: Թէեւ տաղանդներով եւ հարստութեամբ ծնած, ան  
շարունակեց ըսել. «Ես ոչի՛նչ չեմ առած եմ կեանքէն: Անփոյթ  
էի: Երբէ՛ք չեմ խորացած որեւէ բանի մէջ»: Հիմա՛ աշխարհը  
ձգելու հեռանկարը տեսնելով, ան կը զգար թէ քիչ բանի հասած  
է եւ իրեն համար չափազանց ցաւալի է մտածելու համար:

Նոյն օրերուն ես կը կարգայի Ժողովողին ուր  
հակադրութիւնը խիստ էր: Անոր Ուսուցիչը՝ Թոյլ չի տար, որ  
մենք խուսափինք գերեզմանի իրողութենէն «դժոխքին (մեռած  
անձերու կայանին) մէջ՝ ուր կ'երթաս» (9. 10): Թէեւ դժուար է  
դիմակայել այս (հմ. 2), բայց կրնայ մղել մեզ՝ արժեւորելու մեր  
ունեցած իւրաքանչիւր պահը (հմ. 4), դիտումնաւոր վայելելու  
մեր ուտելիքն ու ընտանիքը (հմ. 7-9), նպատակաւաց գործել  
(հմ. 10), արկածախնդիր ըլլալ եւ վտանգը աչք առնել (11. 1, 6),  
եւ ընել այդ ամէնը՝ Աստուծոյ առջեւ, որու օր մը՝ պատասխան  
պիտի տանք (հմ. 9, 12. 13-14):

Նիգոլայի ընկերները կը նշեն, որ անոր հաւատարմութիւնն  
ու առատաձեռնութիւնը իրենց հանդէպ կ'ապացուցանեն, որ  
անոր կեանքը՝ վատնում չէ՝ եղած: Բայց միգուցէ՛ Ուսուցիչին  
խորհուրդը կրնայ մեզ՝ բոլորս՝ փրկել նման ճգնաժամէն՝ մեր  
կեանքի վերջաւորութեան: Յիշենք մեր Արարիչը (12. 1), հետեւինք  
իր ճանապարհներուն եւ ընդունինք ապրելու եւ սիրելու  
իւրաքանչիւր հնարաւորութիւն, որ Ան կու տայ մեզի ամէն օր:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ՝ այսօրուան եւ

տուած պարգեւներուդ համար: Կը վայելեմ անոց պարզ  
ուրախութիւնները եւ կ'ընդունիմ անոց հնարաւորութիւնները,

որպէս Զեզի ուղղուած երկրպագութիւն: Ամէն:

**Ուրախացի՛ր ու ցնծայ՝ Աստուծոյ Զեզի տուած այսօրուան բոլոր  
բարիքներուն եւ պարգեւներուն համար: Մի՛շտ յիշէ քու Ստեղծիչդ:**





Թագաւորին քով պիտի մտնեմ, ինչ որ օրէնքին  
համաձայն է, ու եթէ մեռնիմ՝ թող մեռնիմ: [Եպոթ. 4. 16]

## ՔԱՉՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍՈՎ

**Տ**ասնիններորդ դարու արշալոյսին մօտ, Մէյրի ՄքՏօուլ (Mary McDowell) բնակեցաւ Շիքակոյի (Chicago) դաժան շրջափակներէն՝ տարբեր աշխարհի մը մէջ: Թէեւ անոր տունը միայն քսան մղոն հեռու էր, ան քիչ բան գիտէր աշխատանքային սարսափելի պայմաններուն մասին, որոնք պատճառ կ'ըլլային շրջափակներուն մէջ աշխատողներուն գործադուլ ընելու: Երբ գիտցաւ անոնց եւ անոնց ընտանիքներու դժուարութիւններուն մասին, ան տեղափոխուեցաւ եւ բնակեցաւ անոնց մէջ՝ ջատագովելով՝ որ անոնք աւելի լաւ պայմաններ ունենան: Ան սպասարկեց անոնց կարիքներուն, ներառեալ երեխաներուն ուսուցանելով՝ փոքրիկ խանութի մը ետեւ գտնուող՝ դպրոցին մէջ:

Ուրիշներու համար՝ աւելի լաւ պայմաններու տէր կանգնիլը, նոյնի՛սկ այն պարագային՝ երբ ուղղակիօրէն չազդեր, այն էր այդ բանը որ Եսթէր ըրաւ: Ան Պարսկաստանի թագուհին էր (Եսթ. 2. 17) եւ ունէր տարբեր առանձնաշնորհումներ՝ քան Իսրայէլացի ժողովուրդը, որ ցրուած էր Պարսկաստանի մէջ որպէս աքսորեալ ժողովուրդ: Բայց Եսթէր՝ ձեռնամուխ եղաւ Պարսկաստանի մէջ բնակող Իսրայէլացիներու գործին եւ վտանգի ենթարկեց իր կեանքը անոնց համար՝ ըսելով. «Թագաւորին քով պիտի մտնեմ, ինչ որ օրէնքին համաձայն է, ու եթէ մեռնիմ՝ թող մեռնիմ» (4. 16): Ան կրնար լուռ մնալ, քանի որ իր ամուսինը՝ Թագաւորը, չէր գիտեր որ ինք Հրեայ է (2. 10): Բայց, ընտրելով իր հարազատներու օգնութեան խնդրանքները, ան խիզախօրէն աշխատեցաւ բացայայտել՝ Հրեաներուն ոչնչացնելու՝ չար դաւադրութիւնը:

Հնարաւոր է, որ չկարենանք մեր վրայ վերցնել այնպիսի հսկայական գործեր, ինչպէս ըրին՝ Մէյրի ՄքՏօուլ կամ Եսթէր թագուհի, բայց կրնանք ընտրել ուրիշներու կարիքները տեսնելու եւ գործածելու, ինչ որ Աստուած տուած է մեզի անոնց օգնելու համար:

**Աղօթք** - Սիրելի Տէ՛ր, կը խնդրեմ՝ տո՛ւր ինձի իմաստութիւն եւ քաջութիւն՝ ծառայելու կարիքաւորներուն:

**Մեր ունեցածները գործածելու ենք՝ ուրիշներու օգնելու համար:**  
**Մեծ դեր կը խաղանք անոնց համար՝ որոնք կրնան մեր մօտ չապրիլ:**



Տազնապի մէջ Տերոջ գոչեցի, եւ Տերը պատասխանեց  
ինծի՝ ընդարձակ տեղ մը դնելով զիս: [Եբ. 12. 1]

## ՅԱԻ ԱՂԱՂԱԿՆԵՐ

**Ե**րկրաշարժի հետեւանքով առաջացած փլուզուած փլատակներու՝ երկու յարկի տակ փակուած՝ հինգ տարեկան ձինան (Jinan)՝ Սուրիացի աղջիկը, կանչեց փրկարարներուն՝ պաշտպանելով իր փոքր եղբօր՝ շրջապատող բեկորներէն: Ան՝ գոչեց սրտաճմլիկ. «Զի՛ս այս տեղէն դուրս հանէ. ես քեզի համար՝ ամէն ինչ կ'ընեմ: Ես Քու ծառադ կ'ըլլամ»:

Ճնշուածութեան աղաղակներ կան Սաղմոսներուն մէջ. «Տագնապի մէջ Տէրոջ գոչեցի, եւ Տէրը պատասխանեց ինծի՝ ընդարձակ տեղ մը դնելով զիս» (Սաղմ. 118. 5): Թէեւ մենք երբէք չենք զգար երկրաշարժի հետեւանքով՝ փլուզուած շէնքերու ջախջախիչ ծանրութիւնը, սակայն մենք բոլորս կը գիտակցինք դժուար բժշկական ախտորոշումի, տնտեսական դժուարութիւններու, ապագայի նկատմամբ անորոշութեան կամ յարաբերութիւններու կորուստի խեղդող վախերը:

Այդ պահերուն մենք կրնանք սակարկութիւններ առաջարկել Աստուծոյ՝ ազատագրումի համար: Բայց Աստուած պէտք չունի համոզուելու օգնելու համար: Ան կը խոստանայ պատասխանել, եւ թէեւ այդ կարող չէ՝ ազատել մեզ՝ մեր իրավիճակէն, Ան կ'ըլլայ մեզի հետ եւ մեր կողքին: Պէտք չէ նաեւ վախնալ որեւէ այլ վտանգէ, ինչպէս նաեւ՝ մահէն: Սաղմոսերգուին հետ կրնանք ըսել. «Տէրը ինծի հետ է՝ իմ օգնականներուս մէջ, ու ես ոսոխներուս կորուստը պիտի տեսնեմ» (Հմ. 7):

Մեզի խոստացուած չէ՝ այնպիսի թատերական փրկութիւն, ինչպիսին էր ձինանին ու անոր եղբօր ունեցած փորձառութիւնը, բայց մենք կրնանք վստահիլ մեր հաւատարիմ Աստուծոյ, որ բերաւ Սաղմոսերգուին «ընդարձակ տեղ մը» (Հմ. 5): Ան գիտէ մեր վիճակը եւ երբէք չ'ըլլեր մեզ, նոյնիսկ մահուան պարագային:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, կը կանչեմ քեզ՝ իմանալով, որ Դու կը լսես զիս: Ընորհակալութիւն՝ հաւատարիմ եւ սիրող ըլլալուդ համար: Ամէն:

**Աստուած ցոյց կու տայ իր հաւատարմութիւնը, երբ մենք նեղութեան մէջ ըլլանք: Գիտակցի՛նք Անոր ներկայութեան՝ դժուար ժամանակներու մէջ:**



Օր մը երբ Յակոբ ապուր կ'եփեր, Եսաւ դաշտէն եկաւ եւ Յակոբին ըսաւ ... պարտասած եմ: [Ծն. 25. 29-30]

## ՄԻԱՅՆ ԱՍՏՈՒԱԾ ԿՐՆԱՅ ԳՈՐԱՑՆԵԼ

Հազար տուարի ճաշ՝ մեծ խեցեփերին, շաուրմա, աղցաններ եւ ալյուր, առաքուած էր տան տէրոջ մը: Բայց մարդը խնճոյք չէր ընէր: Փաստօրէն, ինք չէր պատուիրած այդ մեծ քանակութեամբ ճաշը. իր վեց տարական տղան պատուիրած էր: Ինչպէ՞ս պատահեցաւ այդ բանը: Հայրը՝ արտօնած էր որդիին, որ խաղայ իր հեռախօսով՝ եւ տղան գործածեց զանիկա քանի մը ճաշարաններէն՝ թանկարժէք ճաշերը գնելու համար: Հայրը հարցուց որդիին. «Ինչո՞ւ ըրիր այդ բանը»: Վեց տարեկան տղան պատասխանեց. «Անօթի էի»: Տղուն ախորժակն ու տհասութիւնը՝ յանգեցան թանկ արդիւնքի:

Եսաւի ախորժակը՝ իրեն համար արժեք աւելի քան հազար տուար: Ծննդոց 25-րդ գլուխին պատմութիւնը կ'ըսէ՝ թէ ան ուժասպառ էր եւ ուտելիքի անմիջական կարիք ունէր: Ան ըսաւ եղբօրը. «Կ'աղերսեմ, տո՛ւր այդ շիկաթանէն որ ուտեմ, քանի որ պարտասած եմ»: (Հմ. 30): Յակոբ պատասխանեց՝ խնդրելով Եսաւի անդրանիկի իրաւունքը (Հմ. 31): Անդրանիկութեան իրաւունքը կը ներառէր Եսաւի առջինեկ որդիի յատուկ տեղը, Աստուծոյ խոստումներու օրհնութիւնը, ժառանգութեան կրկնակի բաժինը եւ ընտանիքի հոգեւոր առաջնորդը ըլլալու արտօնութիւնը: Իր ախորժակին տեղի տալով՝ Եսաւ «կերաւ ու խմեց» եւ «իր անդրանիկութիւնը արհամարհեց» (Հմ. 34):

Երբ մենք կը փորձուինք եւ բա՛ն մը կը ցանկանք ունենալ, փոխանակ թոյլ տալու՝ որ մեր ախորժակները տանին մեզ սուղ արժող սխալներու եւ մեղքի, եկէ՛ք ձեռք երկարենք՝ մեր երկնաւոր Հօր՝ Ան, որ միայն Ինք կրնայ գոհացնել մեր անօթի հոգին «բարի բաներով» (Սաղմ. 107. 9):

**Աղօթք** - Սիրելի Աստուած, օգնէ՛ ինձի, որ յիշեմ իմ հոգեւոր անդրանիկի իրաւունքը, երբ կը փորձուիմ մեղք գործելու: Ամէն:  
**Թոյլ մի տար որ փորձութիւնը՝ քեզի շատ սուղ արժէ: Յիշէ՛**  
**որ միայն Աստուած կրնայ գոհացնել քու ամենախոր**  
**ցանկութիւններդ:**



Արեւիկն տակ տեսայ թե ցաւառիթ չարիք մը  
կայ, այսինքն այն հարստութիւնը, որ իր տիրոջ  
ծախորդութեան համար պահուած է: [Ժող. 5. 13]

## ՅԱԻՏԵՆԱԿՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

**Ե**րբ Փոշի Սկահակ (*Dust Bowl*) աւազի փոթորիկները  
աւերեցին Միացեալ Նահանգները Մեծ Ճնշուածութեան  
(*Great Depression*) ժամանակ, Գանսաս (*Kansas*) նահանգի  
Հիաուաթայի (*Hiawatha*) բնակիչ՝ Ճան Միլլպըրն Տէյվիս  
(*John Millburn Davis*), որոշեց ձեռք բերել անուն: Ինքնակերտ՝  
անգաւակ՝ միլիոնատէր Տէյվիս, կրնար ներդրումներ կատարել  
բարեգործութեան կամ տնտեսական զարգացման մէջ:  
Փոխանակ, մեծ գումար ծախսելով՝ պատուիրեց՝ որ իր եւ իր  
հանգուցեալ կնոջ՝ տասնմէկ անգամ մեծութեամբ, արձանները  
կանգնեցնեն՝ տեղական գերեզմանատան մէջ:

«Անոնք զիս կ'ատեն» ըսաւ Տէյվիս թղթակից՝ Էմի Փայլիին  
(*Emie Pyle*): Գանասացիները կը ցանկային, որ ան նիւթապէս  
օժանդակէր հասարակական ծրագիրներու կառուցման, ինչպիսին  
էին՝ հիւանդանոցը, լողաւազանը կամ զբօսայգին: Սակայն՝ ան  
միայն ըսաւ. «Իմ դրամս է եւ կը ծախսեմ՝ այնպէս, ինչպէս կ'ուզեմ»:

Սողոմոն թագաւոր, իր օրերու ամենահարուստ մարդը,  
գրեց. «Արծաթ սիրողը, արծաթէն չի կշտանար» եւ «երբ բարիքը  
շատնայ, ուտողներն ալ կը շատնան» (Ժող. 5. 10-11): Սողոմոն  
լաւ գիտակից էր՝ հարստութեան ապականիչ միտումներուն:

Պօղոս առաքեալ՝ նոյնպէս՝ հասկցաւ հարստութեան  
տուած փորձութիւնները եւ որոշեց իր կեանքը շահագործել՝  
Տէր Յիսուսի հնազանդելու մէջ: Հռոմէական բանտի մը մէջ  
մահապատիժի սպասելով՝ ան յաղթական գրեց. «Որովհետեւ  
ես արդէն ընծայուած եմ զոհ ըլլալու եւ իմ մեկնումիս ատենը  
հասած է: Պայքարեցայ բարի պայքարը, աւարտեցի ընթացքը,  
պահեցի հաւատքը» (Բ. Տիմ. 4. 6-7):

Այն ինչ որ կը տեւէ, այն չէ՝ ինչ որ քարի մէջ կը փորեն: Այլ  
այն է, ինչ որ կու տանք իրարու՝ Աստուծոյ համար:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, օգնէ՛ ինձի այսօր, որ որոշ փոքր չափով՝  
կեանքս թափեմ ուրիշներու համար: Ամէն:

**Ի՞նչ պիտի յիշեն ուրիշներ՝ մեր մասին: Ի՞նչ բաներ պէտք է  
փոխենք՝ եթէ կ'ուզենք յաւիտենական ժառագուրթիւն ունենալ  
Աստուծոյ մօտ:**

Անցի՛ր Մակեդոնիա եւ օգնե՛ մեզի: [Գործք 16. 9]

## ԲԱԺՆԵԿՑԻՐ ՀԱՒԱՏՔԴ

1701 Թուկանին, Անգլիայի Եկեղեցին հիմնեց Աւետարանի Տարածման Միութիւնը, որպէսզի միսիոնարներ ղրկէ՝ աշխարհի շուրջ: Անոնց ընտրած կարգախօսն էր, Լատիններ լեզուով *transiens adiuvare nos* - որ կը նշանակէ՝ «Եկու՛ր եւ օգնէ՛ մեզի»: Այս եղած է Աւետարանի դեսպաններուն կոչը՝ առաջին դարէն ի վեր, որպէս Յիսուսի հետեւողները՝ Անոր սիրոյ եւ ներումի պատգամը տանելու աշխարհին, որ անոր խիստ կարիքը ունի:

«Եկու՛ր եւ օգնէ՛ մեզի» խօսքը կու գայ Գործք Առաքելոց 16-ին մէջ նկարագրուած «Մակեդոնական Կոչէն»: Պօղոս ու իր ընկերակիցները, հասան Տրովադա՝ Փոքր Ասիայի արեւմտեան ափը (ժամանակակից Թուրքիա, հմ. 8): Հո՛ն, Պօղոս տեսաւ տեսիլքի մէջ Մակեդոնացի մարդ մը, որ կայնած էր եւ կ'աղաչէր անոր. «Անցի՛ր Մակեդոնիա եւ օգնէ՛ մեզի» (հմ. 9): Տեսնելով այս տեսիլքը, Պօղոս ու իր ուղղեկիցները «խսկոյն ջանացին մեկնիլ Մակեդոնիա» (հմ. 10): Անոնք հասկցան կոչին կենսական իմաստը:

Ո՛չ բոլորը կոչուած են անցնելու ծովերը, բայց մենք կրնանք աջակցիլ անոնց, որոնք կ'ընեն այդ մեր աղօթքներով եւ նիւթական օժանդակութեամբ: Մենք բոլորս ալ կրնանք ինչ որ մէկու մը պատմել Յիսուսի բարի լուրին մասին, ըլլայ այդ սենեակին միւս կողմը, փողոցը կամ համայնքին մէջ: Եկէ՛ք աղօթենք, որ մեր բարի Աստուածը մեզի հնարաւորութիւնը ընծայէ՝ անցնելու անդին եւ մարդոց տալու մեծագոյն օգնութիւնը՝ Յիսուսի անուենով ներման հնարաւորութիւնը:

**Աղօթք** - Սիրող Հայ՛ր, Դուն ղրկեցիր Զու Որդիդ՝ մեր փրկութեան եւ ներման համար: Հիմե՛ գիս, որպէսզի ըլլամ Զու բարի լուրիդ գործակալ, յայտարարելով որ ներումը եւ ազատութիւնը հասանելի են բոլոր անոնց, որոնք հաւատքով կ'ընդունին Յիսուսը: Ամէն:

**Ո՛ր որ Աստուած կանչէ մեզ՝ բաժնեկցելու մեր հաւատքը, պատրաստ ըլլանք ընդառաջելու Անոր պատուերին:**



Երանի՛ր թե Տէրոջ ամբողջ ժողովուրդը մարգարէներ  
ըլլային ու Տէրը իր Հոգին անոնց վրայ դնէր: [Թու. 11. 29]

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՏՈՒՄՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

**Ե**րբ միացայ՝ Քրիստոնէական Մանկական գիրքերու հեղինակներու խումբի մը, որոնք կ'աղօթէին իրարու համար եւ կ'օգնէին տարածելու միմիանց գիրքերուն մասին լուրերը, որոշ մարդիկ ըսին՝ որ մենք «յիմար ենք՝ մրցակիցներու հետ աշխատելու համար»: Բայց մեր խումբը հաւատարիմ էր թագաւորութեան միտումով առաջնորդութեան եւ համայնքի յառաջխաղացման, եւ ո՛չ թէ մրցակցութեան: Մենք կը բաժնեկցէինք նոյն նպատակը՝ որ է աւետարանը տարածել: Մենք կը ծառայենք նոյն Թագաւորին՝ Յիսուսի: Միասին մենք աւելի շատ մարդոց կը հասնինք՝ Քրիստոսի մասին մեր վկայութիւնով:

Երբ Աստուած խնդրեց Մովսէսէն ընտրել առաջնորդութեան փորձառութիւն ունեցող եօթանասուն երէցներ, Ան ըսաւ. «Քու վրադ եղող Հոգիէն պիտի առնեմ եւ անոնց վրայ պիտի դնեմ, որպէսզի ժողովուրդին բեռը կրեն քեզի հետ, ու դուն առանձին չկրես» (Թու. 11. 16-17): Աւելի ուշ Յեսու տեսաւ, որ երէցներէն երկուքը կը մարգարէանային եւ ըսաւ Մովսէսին, որ դադրեցնէ անոնց: Մովսէս ըսաւ. «Ինծի՞ համար նախանձախնդիր ես. երանի՛ր թէ Տէրոջ ամբողջ ժողովուրդը մարգարէներ ըլլային ու Տէրը իր Հոգին անոնց վրայ դնէր» (Հմ. 29):

Ամէն անգամ, երբ մենք կը կեդրոնանանք մրցակցութեան կամ համեմատութիւններու վրայ, որոնք կը խանգարեն մեզ աշխատել՝ ուրիշներու հետ, Սուրբ Հոգին կրնայ մեզ զօրացնել թօթափելու այդ փորձութիւնը: Երբ կը խնդրենք Աստուծմէ՝ սնուցանել մեզ թագաւորական միտումով առաջնորդութեան, Ան կը տարածէ աւետարանը աշխարհի մէջ եւ նոյնիսկ կրնայ թեթեւցնել մեր բեռը, երբ միասին ծառայենք Իրեն:

**Աղօթք** - Սուրբ Հոգի, կը խնդրեմ՝ ըրէ զի՛ս թագաւորական միտումով առաջնորդ մը, որ պարտաւոր է միասին աշխատելու, աւելի շատ մարդոց հասնելու աւետարանի կեանք փրկող պատգամով: Ամէն:

**Աստուծոյ ծառայելու համար, միաւորուելու ենք ուրշներու հետ: Աջակցի՛նք իրարու եւ ծառայե՛նք մեր իւրայատուկ պարգէները գործածելով:**

Աստուած Մովսէսի ըսաւ. Ես եմ ան՝ որ է: [Ել. 3. 14]

## «ԵՍ ԵՄ»

**Փ**իլիսոփայութեան եւ գրականութեան ուսուցիչ եւ դասախօս՝ Ճէյք (Jack) փայլուն միտք ունէր: Ան յայտարարած էր իր անաստուած ըլլալը, տասն հինգ տարեկանին եւ հիմա իր հասուն տարիքին մէջ՝ յամառօրէն կը պաշտպանէր իր «անաստուած հաւատքը»: Քրիստոնեայ ընկերներ կը փորձէին համոզել զինք: Ինչպէս Ճէյք ըսաւ. «Բոլորը եւ ամէն ինչ մնացած է միւս կողմը»: Բայց Աստուածաշունչը, ան պէտք էր խոստովանէր, որ կը տարբերէր գրականութենէն եւ առասպելներէն: Աւետարաններու մասին ան գրեց. «Եթէ երբեւէ առասպել մը իրականութիւն դառնայ, մարմնաւորուի, այդ ճիշդ այսպէս կ'ըլլայ»:

Աստուածաշունչի մէկ հատուած՝ դարձա՛ւ ամենէն ազդեցիկը Ճէյքի վրայ ~ Ելից 3: Աստուած կը կանչէր Մովսէսի՝ Իսրայէլացիները Եգիպտոսէն դուրս հանելու: Մովսէս հարցուց. «Ես ո՞վ եմ՝ որ Փարաւոնին երթամ» (Հմ. 11): Աստուած պատասխանեց. « ԵՄ Ա՛Ն ԵՄ ՈՐ Է»: Այս հատուածը՝ բառերու եւ անուններու բարդ խաղ մըն է, բայց կ'արտացոլացնէ Աստուծոյ յաւիտենական ներկայութիւնը սկիզբէն: Հետաքրքիր է, որ աւելի ուշ Յիսուս կրկնեց նոյնը, երբ ըսաւ. «Աբրահամի ըլլալէն առաջ՝ ես եմ» (Յովհ. 8. 58):

Ճէյք, աւելի ծանօթ որպէս Ք. Ս. Լուիս (C. S. Lewis), խորապէս համոզուեցաւ այս հատուածով: Սա՛ այն ամէնն էր, ինչ որ պէտք է ըսէր ճշմարիտ Աստուածը, պարզապէս, Ի՛նքն է՝ «ԵՍ ԵՄ»ը: Կեանք փոխող պահի մը մէջ, Լուիս «տեղի տուաւ եւ ընդունեց Աստուած որպէս Աստուած»: Այ՛ն Լուիսին համար՝ Յիսուսի ընդունելու ճանապարհին սկիզբն էր:

Գուցէ կը պայքարինք հաւատքի համար, ինչպէս Լուիս կ'ընէր, կամ գաղջ հաւատքով: Մենք կրնանք մենք մեզի հարցնել՝ արդեօ՞ք Աստուած իսկապէս «Ես եմ»ն է՝ մեր կեանքին մէջ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, Զու մօտդ կու գամ՝ ակնածանքով, Զու ո՞վ ըլլալուդ համար: Դուն ես «ԵՍ ԵՄ»ը՝ իմ կեանքիս մէջ, եւ ուրիշ մը չկայ: Ամէն:

**Ի՞նչ կը նշանակէ քեզի համար լսել՝ որ Աստուած կ'ըսէ. «ԵՍ ԵՄ»:**  
**Ինչպէ՞ս կրնայ ազդել այս քեզի՝ գալիք օրերուն մէջ:**



Տերե՛ր, հատուցանեցէ՛ք ձեր ստրուկներուն  
իրաւունքով ու հաւասարութեամբ, գիտնալով թէ  
դո՛ւք ալ ունիք Տեր մը՝ երկինքը: [Կող. 4. 1]

## ՏԵՐ՝ ԵՐԿԻՆՔԻ ՄԵՉ

**Ս**ինկաբուրի (Singapore) Մարդուծի Նախարարութիւնը՝ 2022 թուականին յայտարարեց, որ բոլոր գաղթականներուն, որոնք տուներու մէջ կ'աշխատին՝ պէտք է տրամադրուի ամսական առնուազն մէկ Հանգիստի օր, որ գործատեւէրը չեն կրնար փոխհատուցանել անոնց Հանգստեան այդ օրը տալու փոխարէն: Գործատէրերը, սակայն, մտաւախութիւն ունէին, որ իրենք չեն ունենար մէկը, որ կարենայ Հոգ տանիլ իրենց սիրելիներուն՝ այդ օրերուն: Թէեւ խնամակալութեան բանակավարութիւնը կարելի է լուծել՝ այլընտրական կարգադրութիւններով, անոնց վերաբերմունքը՝ Հանգիստի կարիքը չտեսնելու հարցին համար, այդքան ալ դիւրին չէ՛ր լուծել:

Ուրիշներուն հետ լաւ վերաբերուիլը՝ նոր խնդիր մը չէ՛: Պօղոս առաքեալ ապրեցաւ ժամանակաշրջան մը, երբ ծառաները կը նկատուէին իրենց տէրերուն սեփականութիւնը: Սակայն, եկեղեցիին ուղղած իր ցուցմունքներուն վերջին տողին մէջ, ան կը յիշէ թէ ինչպէ՛ս պէտք է գործեն Քրիստոսանման տուները. ան կըսէ, որ տէրերը պէտք է «արդարութեամբ» վարուին իրենց ծառաներուն հետ (Կող. 4. 1):

Ծի՛ղդ այնպէ՛ս, ինչպէ՛ս Պօղոս ծառաներուն կըսէ՝ որ աշխատին «Տէրոյ համար եւ ո՛չ թէ մարդոց համար» (3. 23), ան նաեւ կը յիշեցնէ տէրերուն իրենց վրայ եղած Յիսուսի իշխանութեան մասին. «Դուք ալ ունիք Տէր մը՝ երկինքը» (4. 1): Իր նպատակն էր քաջալերել Կողոսայի հաւատացեալներուն՝ ապրելու անոնց նման, որոնց վերջնական իշխանութիւնը՝ Քրիստոսն է: Ուրիշներու հետ մեր փոխազդեցութեան ժամանակ ըլլայ այդ գործատէր կամ գործաւոր, մեր տուներուն կամ համայնքներուն մէջ, մենք կրնանք խնդրել Աստուծմէ, որ օգնէ մեզի՝ ընելու ի՛նչ որ «իրաւունքով եւ հաւասարութեամբ» է (Հմ. 1):

**Աղօթք** - Հա՛յր, կը խնդրեմ՝ ներէ ինծի այն ժամանակներուն համար, երբ արդարութեամբ չեմ վարուիր ուրիշներու հետ: Օգնէ՛ ինծի՝ ենթարկուելու Զեզի, որպէս իմ կեանքիս Տերը: Ամէն:

**Մեր շուրջիներուն հետ արդար վարուելու պատուէր ունիք:**  
**Ուստի՝ պէտք եղած փոփոխութիւնները ընենք՝ որպէսզի գգուշ**  
**վերաբերմունք ունենանք բոլորին հանդէպ:**





Երանի՛ր այն մարդուն՝ որ իր վստահությունը  
Տերոջ վրայ կը դնէ: [Սաղմ. 40. 4]

## ՌԻՐԱՆ ՎՍՏԱՅՈՒԹԻՒՆ

**Կ**ին մը՝ փրկեց Ռուտին՝ (*Rudy*) կենդանիներու կացարանէն՝ իր հեշտամահութեան ենթարկուելէն՝ քանի մը օրեր առաջ եւ շուրջ եղաւ անոր ուղեկիցը: Տասը տարի՝ Ռուտին հանգիստ կը քնանար Լինտայի (*Linda*) մահճակալին կողքին, բայց յետոյ՝ յանկարծ սկսաւ ցատկել անոր կողքին եւ լզել անոր երեսը: Լինտան կը նախատէր զայն, բայց ամէն գիշեր՝ Ռուտին կը կրկնէր այդ նոյն վարվելակերպը: Լինտան ըսաւ. «Շուտով՝ ան կը ցատկեր գիրկս, որպէսզի լզէր երեսս՝ ամէն անգամ, երբ նստէի»:

Երբ ան կը պատրաստուէր Ռուտին տանելու հնազանդութեան դպրոց, սկսաւ մտածել, թէ որքա՛ն յամառ էր Ռուտին եւ ինչպէ՛ս միշտ զինք կը լզէր՝ ծնոտին վրայ նոյն տեղը: Լինտա՛ երկչոտութեամբ գնաց բժիշկի մօտ, ու յայտնաբերեց շատ փոքր ուռ մը (ոսկորներու քաղցկեղ): Բժիշկը Լինտային ըսաւ, եթէ աւելի երկար սպասէր, հաւանաբար այդ ուռը կրնար զինք սպաննել: Լինտան վստահած էր Ռուտի բնազդներուն եւ ուրախ էր, որ կը վստահէր:

Սուրբ Գրութիւնները մեզի բազմաթիւ անգամներ կ'ըսեն, որ Աստուծոյ վստահիլը կը տանի զէպի կեանք եւ ուրախութիւն: «Երանի՛ր այն մարդուն՝ որ իր վստահութիւնը Տէրոջ վրայ կը դնէ» (40. 4): Որոշ թարգմանութիւններ՝ աւելի ցայտուն կը դարձնեն միտքը. «Երջանիկ են անոնք, որոնք Տէրոջ կ'ապաւինին» (Հմ. 4): Սաղմոսներուն մէջ նշուած ուրախութիւնը՝ կը հաղորդէ առատութիւն - ժայթքող, փրփրացող ուրախութիւն:

Երբ մենք կը վստահինք Աստուծոյ, վերջնական արդիւնքը իսկական երջանկութիւն է: Այս վստահութիւնը՝ կրնայ հեշտութեամբ չգալ, եւ արդիւնքները՝ չեն կրնար ըլլալ այն ամէնը, ինչ որ մենք կը պատկերացնենք: Բայց եթէ մենք վստահինք Աստուծոյ, մենք այնքա՛ն երջանիկ կ'ըլլանք՝ որ վստահեցանք Անոր:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը ցանկամ այնպիսի երջանկութիւն, որ միայն Դու ինքն քննարկես: Բայց ինձի համար դժուար է վստահիլ: Կ'օգնե՞ս ինձի: Ամէն:

**Ի՞նչ բան կը դժուարացնէ քեզի Աստուծոյ վստահելու: Ինչպէ՞ս այդ կը փոխէ ամէն բան, եթէ սկսիս իսկապէ՛ս հաւատալ, որ Անոր վստահիլը՝ քեզ կը տանի իշպի երջանկութիւն:**



Եթե դժբախտին անձը կշտացնես, այն ատեն քու լոյսդ խաւարի մէջ պիտի ծագի: [Ես. 58. 10]՝

## ՕԳՆԵ՛Լ՝ ԻՆՉՊԵ՛Ս ԱՍՏՈՒԱԾ Կ՝ՕԳՆԷ ՄԵԶԻ

**Ք**ոբենհագենցի՝ (Copenhagen) Օլէ Գասսօ (Ole Kassow) կը սիրէր հեծանիւ վարել: Առաւօտ մը, երբ ան տեսաւ տարեց մարդ մը, որ մինակ նստած էր զբօսայգիին մէջ՝ իր քալելու սարքը՝ իր կողքին, Օլէն ներշնչուեցաւ պարզ գաղափարով մը. Ինչո՞ւ չառաջարկել տարեցներուն հեծանիւով զբօսնելու ուրախութիւնն ու ազատութիւնը: Այսպիսով, արեւօտ օր մը՝ եկաւ ծերանոց երանիւ հեծանիւով եւ առաջարկեց այնտեղ գտնուող ոեւէ մէկուն՝ զբօսնել: Ան ուրախացաւ, երբ անձնակազմի անդամ մը եւ տարեց բնակիչ մը դարձան Առանց Տարիքի Հեծանավազքի՝ (Cycling Without Age) առաջին հեծանաւորները:

Այժմ, աւելի քան քսան տարիներ ետք, Օլէի երազը՝ օգնել անոնց, որոնք կարօտը ունին հեծանավազքի մօտ 575,000 տարեց մարդոց օրհնութիւնն եղած է, 2.5 միլիոն հեծանիւի պտոյտներով: Ո՞ւր: Ընկեր մը տեսնելու համար, վայելելու պաղպաղակ մը եւ «զգալ հովը՝ իրենց մազերուն մէջ»: Մասնակիցները կ'ըսեն, որ աւելի լաւ կը քնանան, աւելի լաւ կ'ուտեն եւ աւելի քիչ մինակ կը զգան:

Նման պարգեւ մը՝ կեանքի կը բերէ՝ Աստուծոյ գեղեցիկ խօսքերը՝ ուղղուած Իր ժողովուրդին՝ Եսայի 58. 10-11-էն մէջ: Ան կ'ըսէ. «Եթէ դժբախտին անձը կշտացնես, այն ատեն քու լոյսդ խաւարի մէջ պիտի ծագի եւ մթութիւնդ կէսօրուան պէս պիտի ըլլայ»: Աստուած խոստացաւ. «Տէրը շարունակ քեզ պիտի առաջնորդէ, քու անձդ երաշտի ատեն պիտի կշտացնէ, ու ոսկորներդ զօրացնէ. դուն ոռոգուած պարտէզի մը պէս պիտի ըլլաս, ջուրի ակի մը պէս՝ որուն ջուրերը չեն պակսիր»:

Աստուած ըսաւ Իր ժողովուրդին. «Քեզմէ ծնածները հնազարեան աւերակները պիտի կառուցանեն» (Հմ. 12): Ի՞նչ կրնայ ընել Ան՝ մեր միջոցով: Երբ Ան կ'օգնէ մեզի, թող մենք միշտ պատրաստ ըլլանք օգնելու ուրիշներուն:

**Աղօթք** - Հայր, ցոյց տուր ինծի ուրիշներուն օգնելու պարզ միջոց մը, որպէսզի անոնք կարենան կեանք գտնել Զու մէջդ: Ամէն:

**Ըու քաղաքիդ կամ շրջակիդ մէջ՝ ո՞վ օգնութեան կարիք ունի: Ի՞նչ պարզ օգնութիւն կրնաս առաջարկել անոնց:**



Սիրենք ո՛չ թե խօսքով ու լեզուով, հապա՛ գործով  
եւ ճշմարտութեամբ: [Ա. Յովհ. 3. 18]

## ՍԻՐՈՅ ՅԱԶՈՐԴ ՔԱՅԼԸ

**Ի**<sup>նչ</sup>ը պատճառ պիտի ըլլայ մէկու մը՝ օգնելու իր մրցակիցին: Ուիսքանսընի (*Wisconsin*) մէջ Ատօլֆօ (*Adolfo*) անունով ճաշարանի մը սեփականատէրին համար՝ առիթ մըն էր խրախուսել՝ այլ պայքարող տեղական ճաշարաններու սեփականատէրեր, յարմարուելու Համաճարակի կանոններուն: Ատօլֆօն լաւ գիտէր համաճարակի ժամանակ գործելու մարտահրաւէրները: Տեղական արեւտրական հաստատութեան մը առատաձեռնութեանէն ոգեւորուած՝ Ատօլֆօն ծախսեց իր դրամը՝ գնելու աւելի քան երկու հազար տոլարի նուէր-քարտէր՝ բաժնելու իր յաճախորդներուն՝ օգտագործելու համար իր շրջանի այլ ճաշարաններուն մէջ: Սա՛ սիրոյ արտայայտութիւն է, որ ո՛չ միայն խօսքեր են, այլ գործողութիւն:

Հիմնուելով սիրոյ գերագոյն արտայայտութեան վրայ, որ ցուցաբերուած է մարդկութեան համար Իր կեանքը տալու Յիսուսի պատրաստակամութեամբ (Ա. Յունվ. 3. 16), Յովհաննէս խրախուսեց իր ընթերցողներուն առնել յաջորդ քայլը եւ ի գործ գնել սէրը: Յովհաննէսի համար «ընծայել մեր կեանքը մեր եղբայրներուն համար» (Հմ. 16) կը նշանակէ ցոյց տալ նոյն տեսակի սէր, որ ցոյց տուաւ Յիսուս եւ այդ ամենէն աւելի ձեւ կ'առնէր ամէնօրեայ գործնական գործողութիւններով, ինչպիսին են բաժնեկցիլ նիւթական ստացուածք: Բաւարար չէր խօսքերով սիրել. սէրը կը պահանջէր՝ անկեղծ, իմաստալից գործողութիւններ (Հմ. 18):

Սէրը գործնականացնել՝ կրնայ դժուար ըլլալ, քանի որ այդ յաճախ կը պահանջէ անձնական զոհաբերութիւն կամ ուրիշին համար մենք մեզ անբարենպաստ դարձնելը: Աստուծոյ Հոգիին շնորհիւ եւ յիշելով Անոր շռայլ սէրը մեզի հանդէպ, մենք կրնանք առնել սիրոյ յաջորդ քայլը:

**Աղօթք** - Սիրելի Յիսու՛ս, օգնե՛ ինձի հետեւելու Քու օրինակիդ  
եւ առնել յաջորդ քայլը՝ անկեղծ սեր ցուցաբերելով՝ իմ  
գործելակարգիս մէջ: Ամէն:

**Ինչպէ՞ս զգացած էք սեր՝ գործնական ձեւով: Ինչպէ՞ս կրնաք  
յաջորդ քայլը առնել՝ որպէսզի մէկու մը սիրեք գործնական ձեւով:**



Պարկե՛շտ վարք ունեցեք ... որպէսզի՝ փառաւորեն  
Աստուած՝ տեսնելով ձեր բարի գործերը: [Ա. Պետ. 2. 12]

## ՀԱՓԱԶԱՆՑ ՍԵՐ

**Ի** նքնադիրին մէջ՝ կողքիս նստողը ըսաւ, թէ ի՛նք անկրօն է եւ ներգաղթած է քաղաք մը, ուր բազմաթիւ Քրիստոնեաներ կը բնակին: Երբ ան նշեց, որ իր դրացիներէն շատերը կը յաճախեն եկեղեցի, հարցուցի իր փորձառութեան մասին: Ան ըսաւ, որ երբէ՛ք չի կրնար հատուցանել անոնց, իրենց ցուցաբերած առատաձեռնութեան: Երբ ան իր հաշմանդամ հայրը բերաւ իր նոր երկիրը, իր դրացիները թեքահարթակ մը կառուցեցին իր տան առջեւ, նուիրեցին հիւանդանոցի մահճակալ եւ բժշկական մատակարարում: Ան ըսաւ. «Եթէ Քրիստոնեայ ըլլալը՝ մարդուն այդքան բարի կը դարձնէ, բոլորը պէտք է Քրիստոնեայ ըլլան»:

Ծի՛շդ այդ էր որ Յիսուս կը յուսա՛ր՝ որ ինք ըսէ: Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Ձեր լոյսը այնպէս թող փայլի մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաբանեն ձեր հայրը՝ որ երկինքն է» (Մատթ. 5. 16): Պետրոս լսեց Քրիստոսի պատուէրը եւ փոխանցեց զայն. «Պարկե՛շտ վարք ունեցէ՛ք հեթանոսներուն մէջ, որպէսզի այն բանին համար որ կը բամբասեն ձեզ իբր չարագործներ, այցելութեան օրը փառաւորեն Աստուած՝ տեսնելով ձեր բարի գործերը» (Ա. Պետ. 2. 12):

Մեր դրացիները, որոնք չեն հաւատար Յիսուսի, կրնան չհասկնալ, թէ ի՞նչ բանի մենք կը հաւատանք եւ ինչո՞ւ կը հաւատանք: Մի՛ գարմանաք, քանի որ տակաւին մէկ բան եւս կայ, որ անոնք չեն կրնար հասկնալ՝ մեր սիրոյ շուայլութիւնը: Իմ կողքիս նստող կինը՝ զարմացաւ, որ իր Քրիստոնեայ դրացիները կը շարունակեն հոգ տանիլ իրեն, հակառակ որ ան, իր խօսքերով, «իրենցմէ մէկը չէ»: Ան գիտէ, որ զինք կը սիրեն՝ յանուն Յիսուսի եւ ան չնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ: Ան կրնայ տակաւին չհաւատալ Անոր, բայց երախտապարտ է, որ ուրիշներ՝ կը հաւատան:

**Աղօթք** - Երկնաւոր Յայր, թո՛ղ Զու լոյսդ փայլի ի՛մ մէջս: Ամէն:  
**Ո՛վ գիտես, որ պետք ունի Յիսուսի:** Ինչպէ՛ս կրնաս սիրել անոր՝  
**յանուն Յիսուսի:**



Եթե ցորենին հատիկը հողին մեջ իյնալով չմեռնի՝  
 ինք մինակ կը մնայ. բայց եթե մեռնի՝ շատ պտուղ  
 կը բերե: [Յովհ. 12. 24]

## ՎԵՐԱԾՆՈՒՆԴ՝ ՅԻՍՈՒՍՈՎ

**Մ**ենք կը ճանչնանք *Լիօնարտօ տա Վինչիչին*՝ (*Leonardo da Vinci*) որպէս վերածնունդի մարդը: Անոր իմացական քաջագործութիւնը՝ հասցուց զինք առաջընթացի բազմաթիւ ուսումնասիրութիւններու եւ արուեստի ոլորտներուն մէջ: Տակաւին Լիօնարտօն գրեց «Մեր այս թշուար օրերը» եւ ողբաց, որ մենք կը մեռնինք «առանց մարդոց մտքին մէջ՝ մեր մասին որեւէ յիշատակութիւն ձգելու»:

Լէօնարտօն ըսա՛ւ. «Մինչ կը կարծէի, որ կը սորվիմ թէ ինչպէ՞ս ապրելու եմ, կը սորվէի ինչպէ՞ս մեռնելու մասին»: Ան աւելի մօտ էր ճշմարտութեան, իր կարծածէն շատ աւելի: Մեռնիլ սորվիլը՝ կեանքի ճանապարհն է: Տէր Յիսուսի Երուսաղէմ յաղթական մուտքէն յետոյ (այն՝ ինչ որ այժմ մենք կը նշենք որպէս Ծաղկազարդ. տե՛ս Յովհ. 12. 12-19), Ան ըսաւ. «Եթէ ցորենին հատիկը հողին մէջ իյնալով չմեռնի՝ ինք մինակ կը մնայ. բայց եթէ մեռնի՝ շատ պտուղ կը բերէ» (Հմ. 24): Այս բանը ըսաւ իր մահուան մասին, բայց ընդլայնեց ներառելով մեզ. «Ան որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ան որ կ'ատէ իր անձը այս աշխարհին մէջ՝ յաւիտենական կեանքին համար պիտի պահէ զայն» (Հմ. 25):

Պօղոս առաքեալ գրեց Քրիստոսի հետ «թաղուելու» մասին «մկրտութեան միջոցով դէպի մահ, որպէսզի ինչպէս Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն՝ Հօրը փառքով, մենք ալ նոյնպէս ապրինք նոր կեանքով: Որովհետեւ եթէ մենք իր հետ միացած ենք իրեն նման ունեցած մահով, ապա անպայման կը միաւորուինք իր հետ յարութեան համար» (Հռոմ. 6. 4-5):

Իր մահուան միջոցով՝ Յիսուս մեզի կ'առաջարկէ վերստին ծնունդ - վերածնունդի իսկական իմաստը: Ինք ստեղծեց իր Հօր հետ յաւիտենական կեանքի ճանապարհը:

**Աղօթք** - Սիրելի Յայ՛ր, ես ո՛չ մէկ այլ տեղ կրնամ գտնել իմաստ եւ նպատակ, բացի Զեզմէ: Ամէն:

**Ինչպէ՞ս կը չափես կեանքի արժէքը: Ինչպէ՞ս կրնաս դուն պետք ունենալ փոխելու այդ արժէքները:**



Ճշմարտապես կը յայտարարեմ ձեզի. «Զանի իմ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի՝ ըրիք»: [Մատթ. 25. 40]

## ՍԻՐԷ՝ ԱՍՏՈՒԱԾ՝ ՈՒՐԻՇՆԵՐՈՐ ՍԻՐԵԼՈՎ

**Ա**լպա (*Alba*) ընտանիքը՝ հազուադէպ դէպքեր մը փորձառութիւնը ունեցաւ, երբ երկու միանման երկուորեակները ծնան տասներեք ամիսի տարբերութիւնով: Ինչպէ՞ս անոնք ձեռնամուխ եղան իրենց ծնողական պարտականութիւններուն մէջ, ինչպէս նաեւ իրենց աշխատանքին: Անոնց ընկերներն ու ընտանիքի անդամները՝ հասան օգնութեան: Երկու կողմերու մեծ ծնողները՝ օրուան ընթացքին երկու զոյգ երկուորեակներէն առին, որպէսզի ծնողները կարենան աշխատիլ եւ վճարել իրենց առողջապահական ապահովագրութեան: Ընկերութիւն մը՝ ապահոված էր մէկ տարուան համար բաւարար մանուկներու անձեռոց: Զոյգին աշխատակիցները՝ նուիրեցին իրենց հիւանդութեան համար վերապահուած օրերը: «Մենք չէինք կրնար այդ ընել առանց մեր համայնքին», համաձայնեցան անոնք: Փաստօրէն, օրինակի համար ուղիղ սփռումի մը ընթացքին, երբ հարցազրոյցը վարողը, հանեց իր կուրծքին դրուած խօսափողը եւ վազեց մէկ փախչող փոքրիկին ետեւէն՝ շարունակելով հաղորդակցական ներդրումները:

Մատթէոս 25. 31-46-ին մէջ, Յիսուս առակ մը կը պատմէ, որպէսզի հաստատէ՝ թէ երբ մենք կը ծառայենք ուրիշներուն, կը ծառայենք Աստուծոյ: Ծառայութեան գործերը թուելէ ետք, (Հմ. 35-36), Յիսուս կ'եզրափակէ. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. «Քանի իմ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի՝ ըրիք» (Հմ. 40):

Յիսուս՝ որպէս մեր բարութեան գերագոյն ստացողը պատկերացնելը, իսկական մղում է ծառայելու մեր բնակչութեան շրջանին, ընտանիքներուն, եկեղեցիներուն եւ աշխարհին մէջ: Երբ մենք կը սիրենք ուրիշները, մենք կը սիրենք Աստուծո:

**Աղօթք** - Սիրող Աստուած, բա՛ց աչքերս՝ տեսնելու զիս շրջապատող մարդոց կարիքները, որպէսզի կարենամ օգնել անոնց բաւարար եւ աւելի լաւ սիրել Զե՛յ: Ամէն:

**Ինչպէ՞ս կրնաս այսօր ծառայել Յիսուսի՝ մեր համայնքին մէջ:**  
**Ինչպէ՞ս կրնաս սիրել Աստուծո՝ սիրելով ուրիշներ՝ որոնք քու շաւիղիդ վրայն:**



Դուք մոլորած եք. ո՛չ Գիրքերը գիտեք, ո՛չ ալ Աստուծոյ զօրութիւնը: [Մատթ. 22. 29]

## ՉՆԿԱՏԵԼ ՀԻՄՆԱԿԱՆԸ

**Տ**աճանմեակներ չարունակ՝ ՄքՏանըլտզը (*McDonald's*) կը կառավարէր արագ սնունդին իր *Quarter Pounder Burger*-ով (քառորդ փաունտ): 1980-ականներուն՝ մրցակից մը՝ յղացաւ գաղափար մը՝ գահրնկեց ընելու ՄքՏանըլտզը: *A&W* առաջարկեց *Third Pound Burger*-ը (մէկ երորդ փաունտ) - աւելի մեծ քան ՄքՏանըլտզինը - եւ վաճառեց նոյն գինով: Աւելին, *A&W*-ին *Burger*-ը՝ շահեցաւ կոյր համտեսելու քննութիւնները: Սակայն՝ ո՛չ մէկը գնեց. եւ ի վերջոյ անոնք հանեցին զայն ճաշացուցակէն: Հետազօտութիւնը ցոյց տուաւ, որ սպառողները սխալ հասկցած էին թուաբանութիւնը, խորհելով՝ *Third Pounder*-ը՝ աւելի փոքր էր, քան *Quarter Pounder*-ը: Մեծ գաղափար մը ձախողեցաւ, քանի որ մարդիկ չէին նկատած հիմնականը:

Տէր Յիսուս զգուշացուց, թէ որքա՛ն դիւրին է չնկատել հիմնականը: Կրօնական առաջնորդները, ծրագրեցին թակարդը ձգել ու վարկաբեկել գիւնք իր խաչելութեան շաբթուան ընթացքին, կնոջ մը մասին տարօրինակ՝ ենթադրական թատերական ուրուագիծ մը ներկայացնելով, որ եօթը անգամներ այրիացած էր (Մատթ. 22. 23-28): Յիսուս պատասխանեց՝ պնդելով, որ այս բարդ հարցը՝ ամենեւին խնդիր մը չէ: Այլ անոնց խնդիրը՝ այն էր, թէ ինչպէ՞ս անոնք «չէին գիտեր Գիրքերը՝ ոչ ալ Աստուծոյ զօրութիւնը» (ճ. 29): Յիսուս պնդեց որ Աստուածաշունչը, նախ նպատակ չի հետապնդեր՝ պատասխանելու տրամաբանական կամ փիլիսոփայական հանելուկներուն: Ընդհակառակը, անոր հիմնական նպատակն է՝ առաջնորդել մեզ՝ ճանչնալու եւ սիրելու Յիսուսի եւ «յաւիտենական կեանք ունենալու» իր մէջ (Յովհ. 5. 39): Ասոնք՝ այն հիմնական բաներն են, որոնք առաջնորդները մոռցած էին:

Մենք ալ յաճախ՝ կը մոռնանք հիմնականը: Աստուածաշունչի գլխաւոր նպատակը՝ կենդանի Յիսուսի հետ հանդիպումն է:

**Աղօթք** - Սիրելի Հայր, երբեմն կը մոլորիմ՝ նոյնիսկ լաւ բաներու մէջ: Կը խնդրեմ՝ օգնէ՛ ինծի: Ամէն:

**Ինչպէ՞ս չենք նկատեր Աստուածաշունչի մէջ նշուած հիմնականը: Ինչպէ՞ս կրնանք վերադառնալ հիմնականին, Յիսուսի:**



Հեռուէն տեսնելով տերեւալից թօգնի մը՝ գնաց, որ  
թերեւս բան մը կը գտնէ վրան: [Մարկ. 11. 13]

## ՊՏՂԱՏՈՒ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐ ՔՐԻՍՏՈՍՈՎ

**Ս**ինտին (Cindy), ոգեւորուած էր՝ ոչ-շահարու առեւտրական  
ընկերութեան մը մէջ՝ իր նոր աշխատանքին համար: Ի՞նչ լաւ  
առիթ մը տարբերութիւն մը ընելու համար: Ան շուտով պարզեց,  
որ իր գործընկերները՝ չեն բաժնեկցիր իր ոգեւորութիւնը: Անոնք  
ծաղրեցին ընկերութեան առաքելութիւնը եւ արդարացումներ  
ըրին՝ իրենց խեղճուկ աշխատանքին համար, քանի որ ուրիշ  
տեղեր՝ կը փնտռէին աւելի շահաբեր պաշտօններ: Սինտին կը  
ցանկար, որ ան երբէ՛ք դիմած չըլլար այս աշխատանքին: Այն  
ինչ որ հեռուէին հիանալի կը թուէր, յուսահատական էր մօտէն:

Այս՝ Յիսուսի խնդիրն էր՝ այսօրուան պատմութեան մէջ՝  
յիշուած թղթնիին հետ (Մարկ. 11. 13): Եղանակին սկիզբն էր,  
սակայն ծառի տերեւները կ'ազդարարէին, որ ան կրնայ ունենալ  
կանխահաս թուղ: Ո՛չ: Ծառի տերեւներ ծլած էր, բայց տակաւին  
պտուղ չէր տուած: Յուսախաբուած՝ Յիսուս անիծեց ծառը  
ըսելով. «Թող ո՛չ մէկը պտուղ ուտէ քեզմէ յաւիտեան (Հմ.  
14): Յաջորդ առաւօտ ծառը ամբողջովին չորցած էր» Հմ. 20):

Քրիստոս անգամ մը քառասուն օր ծոմ պահեց, ուստի Ան  
գիտէր, թէ ինչպէ՞ս պէտք է դիմանայ առանց ուտելիքի: Թղթնիին  
անիծելը՝ Իր խնորժակին մասին չէր: Այդ՝ առարկայական դաս  
էր: Ծառը կը ներկայացնէր Իսրայէլը, որ ունէր ճշմարիտ  
կրօնի նշանները, բայց կորսնցուցած էր իր իմաստը: Անոնք կը  
պատրաստուէին սպաննել իրենց Մեսիան՝ Աստուծոյ Որդին:  
Որքա՛ն աւելի անպտուղ կրնային ըլլալ:

Կրնանք լաւ տեսք ունենալ հեռուէն, բայց Յիսուս կը մօտենայ՝  
փնտռելով պտուղ, որը միայն Անոր Հոգին կրնար տալ: Մեր  
պտուղը պայման չէ՝ որ տպաւորիչ ըլլայ: Սակայն այդ պէտք է ըլլայ  
գերբնական: Ինչպիսին է սէրը, ուրախութիւնը եւ խաղաղութիւնը  
դժուար ժամանակներու մէջ (Գաղ. 5. 22): Ապաւինելով Հոգիին  
մենք կրնանք պտուղ տալ այն ժամանակ՝ Յիսուսի համար:

**Աղօթք** - Սուրբ Հոգի, փշրե՛ գիս, որպէսզի աւելի շատ պտուղ  
տամ: Ամէն:

**Ի՞նչ տեսակի պտուղ կը տեսնեն ուրիշները մեր մէջ: Ինչպէ՞ս  
կարող ենք աւելի արդիւնաւոր ըլլալ:**





Նոր պատուիրան մը կու տամ ձեզի.

Սիրեցէ՛ք զիրար: [Յովհ. 13. 34]

## ՍԻՐԵԼՈՒ ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆ ՄԸ

**Ա**ւանդութեան մը համաձայն, որ սկսած է կանուխ՝ տասներորդ դարուն, Միացեալ Թագաւորութեան արքայական ընտանիքի անդամները՝ նուէրներ կու տան կարիքաւոր մարդոց՝ Աւագ Հինգշաբթի Օրը (*Maundy Thursday*), Աւագ Ուրբաթ Օրուան նախորդող օրը: Սովորութիւնը հիմնուած է *maundy*՝ Լատիներէն *mandatum* բառին իմաստին վրայ՝ որ կը նշանակէ, «պատուէր»: Յիշատակուող պատուէրը՝ այն նոր պատուիրանն է, որ Յիսուս տուաւ իր աշակերտներուն իր մահուան նախորդ գիշերը. «Սիրեցէ՛ք զիրար, ինչպէս ես սիրեցի ձեզ, դո՛ւք ալ սիրեցիք զիրար» (Յովհ. 13. 34):

Յիսուս առաջնորդ մըն էր, որ ստանձնեց ծառայի դերը, երբ լուաց իր ընկերներուն ոտքերը (Հմ. 5): Ապա՝ ան կոչ ըրաւ անոնց՝ նոյնը ընելու. «Օրինակ մը տուի ձեզի, որպէսզի ինչպէս ես ըրի ձեզի՝ դուք ալ ընէք» (Հմ. 15): Եւ աւելի մեծ գոհաբերութեան մէջ՝ Ան տուաւ իր կեանքը, մեռնելով խաչին վրայ (19. 30): Գթասրտութենէ եւ սիրով զրդուած՝ Ան տուաւ ինզինք, որպէսզի մենք կարենանք վայելել կեանքի լիութիւնը:

Բրիտանիոյ Թագաւորական ընտանիքին՝ կարիքաւոր մարդոց ծառայելու աւանդութիւնը կը շարունակուի՝ որպէս Յիսուսի մեծ օրինակին հետեւելու խորհրդանիշ: Մենք՝ գուցէ չենք ծնած առանձնաշնորհեալ տեղ մը, բայց երբ մեր հաւատքը կը դնենք Յիսուսի վրայ, մենք կը դառնանք Անոր ընտանիքի անդամները: Եւ մենք նոյնպէս կրնանք ցոյց տալ մեր սէրը ապրելով Անոր տուած նոր պատուիրանով: Քանի որ մենք կախեալ ենք Աստուծոյ Հոգիէն՝ մեզ ներսէն փոխելու համար, մենք կրնանք օգնութեան ձեռք մեկնել ուրիշներուն խնամքով, հաստատումով եւ շնորհքով:

**Աղօթք** - Իմ մեծ Փրկիչ, ինչ մեծ սիրոյ պարգեւ մը կու տաս:

Շնորհակալ եմ Զեզի, որ եղած ես գերագոյն Ծառան, Զու կեանքդ տուած ես ինծի համար: Ամէն:

**Ինչպէ՞ս կը դիտենք կամ կը մարմնաւորենք ծառայող առաջնորդութիւնը: Ինչպէ՞ս կրնանք այսօր «սիրել զիրար»:**



Քրիստոսն ալ մէկ անգամ չարչարուեցաւ՝ մեղքերու համար, Արդարը՝ անարդարներուն համար, որպէսզի մօտեցնէ մեզ Աստուծոյ: Ան մարմնով մեռցուեցաւ, բայց Հոգիով կեանք ստացաւ: [Ա. Պետ. 3. 18]

## ՅԻՍՈՒՄ, ՄԵՐ ՓՈԽԱՐԻՆՈՂԸ

**Ք**սանամեայ մեծահարուստ մը, երբ ընկերներու հետ ինքնաշարժներու արագութեան կարճ միջոցի մրցումի մէջ էր, զարկաւ ու սպաննեց ճամբուն եզրին հետիոտն քալող մը: Թէեւ երիտասարդը երեք տարիներու բանտարկութեան դատապարտուեցաւ, ոմանք կը կարծեն՝ թէ դատարան ներկայացած երիտասարդը եւ ապա բանտարկութեան պատիժը կրողը, վարձկան փոխանորդ մըն էր՝ յանցագործութիւնը կատարած վարորդին համար: Յայտնի է, որ այս տեսակի դէպքեր տեղի կ'ուենան որոշ երկիրներու մէջ, ուր մարդիկ կը վարձեն զիրենք փոխարինող՝ կրկնակի մարմիններ, խուսափելու համար վճարելու իրենց յանցագործութեան համար:

Այս կրնայ խայտառակ ու զայրացուցիչ թուիլ, բայց աւելի քան երկու հազար տարի առաջ՝ Յիսուս դարձաւ մեզ փոխարինողը եւ «մէկ անգամ չարչարուեցաւ՝ մեղքերու համար, Արդարը՝ անարդարներուն համար» (Ա. Պետ. 3. 18): Որպէս Աստուծոյ անմեղ զոհաբերութիւն՝ Քրիստոս չարչարուեցաւ եւ պատարագուեցաւ մէկ անգամ ընդմիշտ (Եբ. 10. 10), բոլոր անոնց համար, որոնք կը հաւատան Իրեն: Ան վերցուց պատիժը մեր բոլոր մեղքերուն համար՝ խաչին վրայ Իր իսկ մարմինին մէջ: Ի տարբերութիւն այսօր այն մարդուն, որ կ'ընտրէ փոխարինել յանցագործին՝ որոշ գումար ստանալու համար, Քրիստոսի փոխարինող մահը՝ խաչին վրայ, «յոյս» տուաւ մեզի, քանի որ Ան ազատօրէն տուաւ Իր կեանքը մեզի համար (Ա. Պետ. 3. 15, 18, Յովհ. 10. 15): Ան՝ այդ բանը ըրաւ մեր եւ Աստուծոյ միջեւ անդունդը կամրջելու համար:

Միայն Յիսուսի փոխարինող մահով, մենք՝ կարիքի մէջ գտնուող մեղաւորներս, կրնանք ունենալ փոխարաբերութիւն եւ ամբողջական հոգեւոր մօտեցում մեր սիրող Աստուծոյ հետ:

**Աղօթք** - Սիրելի Յիսոս, շնորհակալ եմ, որ մեռար իմ փոխարէն, որպէսզի ես կարենամ մօտենալ Աստուծոյ: Ամէն:

**Քրիստոսի փոխարինող մահը՝ կը փոխէ մեր կեանքը եւ կու տայ մեզի ազատութիւն ու կարելիութիւնը յաւիտենական կեանքի՝ խաչին վրայ Իր մահուան պատճառով:**



Մեզի խաղաղութիւն տուող պատիժը անոր վրայ եղաւ,  
եւ իր վերքերով մենք բուժուեցանք: [Ես. 53. 5]

## ՔՐԻՍՏՈՍԻ ԶԱՐԶԱՐԱՆՔԸ

**Մ**ինչ Ճիմ Բավլէզէլ (*Jim Caviezel*) Յիսուսի դերը կատարեց՝ «Քրիստոսի Զարչարանքը» ֆիլմին մէջ, ֆիլմի բեմադրիչ Մէլ Կիպսըն (*Mel Gibson*) զգուշացուց, որ դերը չափազանց բարդ կրնայ ըլլալ եւ բացասական ազդեցութիւն ունենալ Հալիվուտի (*Hollywood*) իր գործի ասպարէզին վրայ: Բավլէզէլ, ստանձնեց դերը՝ ըսելով. «Կը խորհիմ՝ թէ մենք պէտք է հասնինք անոր, նոյնիսկ եթէ դժուար է»:

Նկարահանումներու ժամանակ՝ կայծակը հարուածած է Բավլէզէլին, կորսնցուցած է մօտ քսահինգ քիլօ կշիռք եւ պատահաբար մտրակուած՝ տեսարանի նկարահանումին ժամանակ: Յետոյ ան ըսաւ. «Ես չէի ուզեր, որ մարդիկ ինձ տեսնեն: Ես պարզապէս կ'ուզէի, որ անոնք տեսնեն՝ Յիսուսը: Անոր միջոցով փոխակերպումներ ըլլան»: Ֆիլմը խորապէս ազդեց Բավլէզէլին եւ միւսներուն վրայ՝ նկարահանման ընթացքին եւ միայն Աստուած գիտէ, թէ ֆիլմը դիտողներէն՝ քանի՞ հոգիի կեանքը փոխուած է:

Քրիստոսի չարչարանքը կը վերաբերի՝ Յիսուսի ամենամեծ տառապանքին, սկսած Օաղկազարդի յաղթական մուտքէն, ներառեալ՝ Անոր դաւաճանութիւնը, ծաղրանքը, մտրակումը եւ խաչելութիւնը: Արձանագրութիւններ կ'ան չորս Աւետարաններուն մէջ:

Եսայի 53-ին մէջ՝ Անոր տառապանքը եւ անոր արդիւնքը կանխագուշակուած է. «Անիկա մեր յանցանքներուն համար վիրաւորուեցաւ, մեր անօրէնութիւններուն համար ճգմուեցաւ: Մեզի խաղաղութիւն տուող պատիժը անոր վրայ եղաւ, եւ իր վէրքերով մենք բուժուեցանք» (Հմ. 5): Մենք բոլորս «ոչխարներու պէս մոլորեցանք» (Հմ. 6): Բայց Յիսուսի խաչելութեան եւ յարութեան շնորհիւ՝ մենք կրնանք խաղաղութիւն ունենալ Աստուծոյ հետ:

**Աղօթք** - Թանկագին Փրկի՛չ, դժուար է արտայայտել, թէ որքա՛ն երախտապարտ եմ, որ Դուս տառապեցար, մեռար եւ յարութիւն առիր՝ ինձի համար: Շնորհակալութիւն: Ամէն:

**Քրիստոսի կեանքին ո՞ր մասը՝ ամենաշատ կ'ազդէ քու վրայ:**  
**Արդե՛օք իր տառապանքը:**



Ան հոս չէ, որովհետեւ յարութիւն առաւ (ինչպէս ըսած էր): Եկէ՛ք, տեսէ՛ք այն տեղը՝ ուր Տէրը դրուած էր: [Մատթ. 28. 6]

## ՅԱՐՈՒՑԵԱԼ Է ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ ԱՅՍՕՐ

**Չ**արլզ Միմիոն (*Charles Simeon*) Անգլիոյ Քէյմպրիճ (*Cambridge*) համալսարանը յաճախելէ առաջ, կը սիրէր ձիեր եւ հագուստ՝ տարեկան հսկայական գումար ծախսելով իր հագուստներուն համար: Բայց քանի որ իր գոլէճը կը պահանջէր իրմէ՝ որ կանոնաւոր կերպով ներկայ ըլլայ Հաղորդութեան պաշտամունքներու, ան սկսաւ ուսումնասիրել, թէ ի՞նչ բանի կը հաւատար: Յիսուսի հաւատացողներու գրած գիրքերը կարդալէ ետք, Չարլզ՝ Կիրակի օրը հոգեւոր դարձի փորձառութիւնը ունեցաւ: Ապրիլ 4, 1779-ին, առտու կանուխ արթննալով, աղաղակեց. «Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ այսօր: Ալէլուիա, Ալէլուիա»: Աճելով իր հաւատքին մէջ, ան ինքզինք նուիրեց Աստուածաշունչի սերտողութեան, աղօթքի եւ յաճախելու մատուռի պաշտամունքներու:

Առաջին Զատիկին՝ Յիսուսի գերեզմանը եկող երկու կիներու կեանքն ալ փոխուեցաւ: Հոն՝ անոնք ականատես եղան սաստիկ երկրաշարժի, երբ հրեշտակը գլորեց քարը եւ ըսաւ անոնց. «Դուք մի՛ վախնաք, քանի որ գիտեմ թէ կը փնտռէք Յիսուսը՝ որ խաչուեցաւ: Ան հոս չէ, որովհետեւ յարութիւն առաւ (ինչպէս ըսած էր)» (Մատթ. 28. 5-6): Ուրախացած կիները՝ երկրպագեցին Յիսուսին եւ վազեցին իրենց ընկերներուն մօտ՝ բարի լուրը տալու:

Յարութիւն առած Քրիստոսին հանդիպելը՝ հին ժամանակներու համար՝ նախատեսուած բան մը չէ. Ան խոստացաւ հանդիպելու մեզի՝ այստեղ եւ հիմա: Մենք կրնանք զգալ թատերական հանդիպում մը, ինչպէս՝ օրինակի համար, գերեզմանի կիները կամ Չարլզ Միմիոնը, բայց մենք կրնանք չզգալ: Ի՞նչ ձեւով ալ Յիսուս ինքզինք յայտնէ մեզի, մենք կրնանք վստահիլ, որ Ան կը սիրէ մեզ:

**Աղօթք** - Յարուցեալ Յիսուս, շնորհակալ եմ, որ եկար եւ մեռար խաչին վրայ, որպէսզի յաւիտենական կեանք ունենամ: Զեզ կը պաշտեմ: Ամէն:

**Ինչպէ՞ս Աստուած Ինքզինք յայտնած է քեզի: Ի՞նչ բան փոխուած է քեզի համար այդ հանդիպման պատճառով:**

## ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ

Աղօթք.....	Յուն. 10, 20, 24, Փետ. 7, 19, 20, 26
Ապաշխարութիւն.....	Յուն. 7
Աստուածաշունչ՝ Զեղիւնակութիւն.....	Փետ. 16
Աստուածաշունչ՝ Սերտողութիւն.....	Մարտ 9, 26
Աստուածաշունչի Մեծ Պատմութիւնը .....	Յուն. 2, 9, 16, 23, Փետ. 29
Աստուծոյ Զաւատարմութիւնը.....	Փետ. 11
Աստուծոյ Նկարագիրը ....	Յուն. 25, 26, Փետ. 18, Մարտ 5, 13
Աստուծոյ Սերը .....	Յուն. 12, 21, Փետ. 2, 13, 27, 24, Մարտ 7
Աստուծոյ Վստահիլ ..	Յուն. 12, 14, Փետ. 6, 17, 20, Մարտ 20
Արդարութիւն.....	Մարտ 19
Աւետարանչութիւն ..	Յուն. 1, 29, Փետ. 5, Մարտ 2, 9, 16, 23
Բարեկամութիւն .....	Յուն. 29
Գութ.....	Յուն. 23, 28, Մարտ 12
Թշնամիներ.....	Փետ. 12
Իմաստութիւն .....	Յուն. 5, Մարտ 11, 14, 17
Խաղաղութիւն .....	Յուն. 14
Ծառայել.....	Յուն. 15, 18, Փետ. 1, 16, Մարտ 6, 15, 21, 25, 28
Կասկած .....	Փետ. 28
Կռապաշտութիւն.....	Յուն. 31
Համայնք.....	Փետ. 16, 24, Մարտ 27
Հանգիստ.....	Փետ. 26, Մարտ 19
Հաշտութիւն.....	Յուն. 21
Հաւատք .....	Փետ. 8
Հեզութիւն.....	Յուն. 18, Փետ. 1, 15, 22
Հիւրասիրութիւն.....	Փետ. 23
Հնազանդութիւն.....	Յուն. 5, 11
Հոգատարութիւն.....	Փետ. 14
Հոգեկան Աճում.....	Յուն. 7, 10, 12, 26, 27, Փետ. 17, 18, Մարտ 14, 17
Հոգեկան Պատերազմ .....	Փետ. 7, Մարտ 5
Հոգիին Պտուղները.....	Յուն. 29, Մարտ 27
Մահ.....	Մարտ 15, 24

Մատակարարություն.....	Փետ. 16, Մարտ 1, 6, 8, 15, 27
Մեղք.....	Յուն. 7, 19
Մեղքերու թողություն.....	Փետ. 13, Մարտ 29
Մենակություն.....	Յունք. 20
Յաւիտենական Կեանք.....	Փետ. 24
Յոյս.....	Փետ. 4, 28
Ներել Ուրիշներու.....	Յուն. 24, Մարտ 3
Շնորհակալություն.....	Փետ. 11
Ողբ.....	Յուն. 20
Որոշում Կայացնել.....	Յուն. 5, 7, Փետ. 6, Մարտ 14
Պաշտամունք.....	Մարտ 10
Սեր՝ Աստուծոյ.....	Փետ. 14
Սեր՝ Ուրիշներու ...	Փետ. 2, 3, 5, 9, 12, 14, 16, 22, 23, Մարտ 12
Սուրբ Հոգին Առաջնորդութիւնը....	Յուն. 24, 25, Մարտ 17
Ստեղծագործութիւն.....	Յուն. 3, Փետ. 18, 28, Մարտ 10
Վախ.....	Յուն. 14
Վաւերականություն.....	Փետ. 28
Տառապանք.....	Փետ. 14
Փրկություն.....	Յուն. 1, 7, 8
Փորձություն.....	Յուն. 19
Բաջալէրություն.....	Փետ. 24, Մարտ 12
Երիստոս՝ Անձ/Գործ.....	Յուն. 2, 8, Փետ. 21, 25, Մարտ 4, 24, 26, 30, 31
Երիստոս՝ Աստուածություն.....	Յուն. 30, Մարտ 18
Երիստոս՝ Ծնունդ.....	Յուն. 6
Երիստոս՝ Կեանք/Ուսուցում.....	Մարտ 4
Երիստոս՝ Մահ.....	Փետ. 13, Մարտ 29
Երիստոս՝ Յարութիւն.....	Մարտ 29, 31
Երիստոս՝ Վերադարձ.....	Յուն. 30
Երիստոս՝ Փրկիչ/Մեսիա.....	Մարտ 30
Երիստոսի Հետ Միություն.....	Փետ. 26
Երիստոսի Համար Ապրիլ.....	Յուն. 4, 27, Փետ. 6, 27
Երիստոսի Նման Ապրիլ.....	Մարտ 23
Երիստոսով Նոյնություն.....	Յուն. 1, 7, 8, 22, 31, Փետ. 10, 13, Մարտ 29

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Եթէ կը ճանչնաք անձեր, որոնք պիտի փափաքին այս գրքոյկին յաջորդ թիւերը ունենալ, կրնաք անոնց անունները ու հասցէները գրել վարի կտրօնին վրայ եւ դրկել հետեւեալ հասցէներէն մէկուն.–

Սփիւռքի հասցէ՝

Armenian Missionary Association

31 West Century Road

Paramus, NJ 07652

Tel. 201.265.2607 - E-mail: info@amaa.org

Հայաստան եւ Կովկասեան երկիրներ դիմել՝

Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն

Բաղրամեան Փողոց, Թիւ 18

Երեւան, Հայաստան

հեռ. (374-10) 54-35-76

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

.....

Tel./Հեռ.....

.....

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

.....

Tel./Հեռ.....